797

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



711
Մ-83

ԵՐԵՎԱՆ 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

С. Х. МНАЦАКАНЯН

# АРХИТЕКТУРА СЕЛЬСКИХ НАСЕЛЕННЫХ МЕСТ АРМЕНИИ

ОЧЕРК

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Սովետական Միության քաղաքների, բանվորական ավանների և արդյունաբերական վայրերի արագ զարգացման հետ մեկտեղ, աննախընթաց վերելք է ապրում նաև կոլտնտեսային գյուղը, որտեղ կատարվող շինարարությունն ունի կարևոր նշանակություն ամբողջ երկրի ժողովրդական տնտեսության համար։*

*Սովետական գյուղն այժմ ապրում է ստեղծագործական ազատ կյանքով։ Սովետական իշխանության հաստատումը և հատկապես կոլտնտեսային կարգերի հաղթանակը ակտիվ հասարակական կյանքի կոչեցին գյուղացիության լայն մասսաներին։ Նյութական բարեկեցության, կուլտուրական պահանջմունքների աճը հիմք հանդիսացավ գյուղական բնակավայրերում կառուցելու գյուղին մինչև այդ միանգամայն անծանոթ շենքեր, ինչպիսիք են ակումբները, մանկապարտեզները, մանկամսուրները, ծննդատները, գյուղական հիդրոկայանները և այլն։*

*Սովետական իշխանության հաստատման հենց առաջին տարիներին Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը նշանակալից աշխատանք ծավալեցին Հայաստանի գյուղերի սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։ Այդ տարիներին առաջնահերթ խնդիրը հանդիսանում էր գյուղի էկոնոմիկայի վերականգնումը, հատուկ ուշադրություն էր դարձվում հողաշինարարությանը և հատկապես ջրանցքների կառուցմանը։ 1922 թվականից փորվում են նոր ջրանցքներ, վերակառուցվում են հները, ձեռնարկվում են ճահիճների չորացմանը և ավելացվում տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները։*

*Այդ տարիներին Հողժողկոմատին կից, հիմնվում է գյուղական շինարարության բաժին, որի վրա խնդիր է դրվում մշակել գյուղական բնակարանների ու գյուղատնտեսական շենքերի նախագծեր, տեխնիկական օգնություն ցույց տալ գյուղական բնակչությանը և աջակցել շրջգործկոմներին՝ պետական և հասարակական հիմնարկների շինարարության ասպարեզում։ Նշանակալից ծավալ*

է ստանում դպրոցական շինարարությունը. գյուղական բնակավայրերում վերակառուցվում են հները և կառուցվում նոր դպրոցական շենքեր։

Գյուղական բնակավայրերում այդ տարիներին կատարվող շինարարական աշխատանքներից որոշ հետաքրքրություն է ներկայացնում Հոկտեմբերյանում (նախկին Սարդարաբադ) կառուցվող մանկական գաղութը, որտեղ կառուցվել են բավական թվով մեկից երկու հարկանի բնակելի և հասարակական շենքեր (հեղ. ճարտարապետության ակադեմիկոս Ա. Թամանյան)։

Գյուղատնտեսության մեջ արմատական բեկում մտցրեց գյուղի կոլեկտիվացումը, որի հետևանքով ընդամենը մի քանի տարում հիմնովին վերափոխվեց սովետական գյուղը։

Այս արմատական հեղաշրջումը շրջադարձային կետ հանդիսացավ նաև գյուղական բնակավայրերում կատարվող ամբողջ շինարարական գործունեության համար։ Ճիշտ է, ինչպես վերը նշվեց, սովետական կարգերի հաստատումից հետո արմատապես փոխվել էր գյուղի զարգացման ուղին և ինչպես շրջանային կենտրոններում, այնպես էլ գյուղերում կառուցվում էին մի շարք նոր տիպի շենքեր, սակայն անհատական մանր տնտեսությունների գոյության պայմաններում գյուղական բնակավայրի ճարտարապետության զարգացման և հատկապես ժողովրդական ճարտարապետության զարգացման նախադրյալների մեջ համարյա թե էական փոփոխություն տեղի չէր ունեցել։ Գյուղի կոլեկտիվացումը ստեղծեց միանգամայն նոր նախադրյալներ գյուղական բնակավայրերի շինարարության զարգացման համար, արմատապես փոխեց ժողովրդական բնակելի տան կոմպոզիցիոն ձևերի մշակման սկզբունքները և հասարակական կյանքի կոչելով բոլոր գյուղացիներին, ստեղծեց միանգամայն նոր պայմաններ գյուղերի սոցիալիստական վերակառուցման համար։

Կոլտնտեսային կարգերի հաստատումը միանգամայն այլ ուղղությամբ տարավ գյուղում կատարվող շինարարական ամբողջ գործունեությունը։ Առաջին հերթին սկսեցին կառուցվել կոլտնտեսային հանրայնացած արտադրության համապատասխան շենքեր (գոմեր, պահեստներ, մառաններ և այլն), որոնք արդեն իրենց էությամբ միանգամայն նոր տիպի կառուցվածքներ էին, բոլորովին անհայտ հին գյուղին։ Այդ կառուցվածքները սկզբնական շրջանում շատ պրիմիտիվ էին և թե՛ իրենց կոնստրուկտիվ ձևերով, թե՛ իրենց դասավորությամբ փաստորեն կրկնում էին գյուղական

բնակավայրերում դարերի ընթացքում ձևավորված տնտեսական կառուցվածքների հիմնական տիպերը՝ մեծացրած մի քանի անգամ։

Հատկանշական է, որ հին, դարավոր այն տրադիցիան, երբ գոմը որպես կանոն կառուցվում էր բնակելի տան կողքին, իր որոշակի ազդեցությունն ունեցավ նաև կոլտնտեսային հանրային առաջին կառուցվածքների դասավորության վրա։ Շատ գյուղերում հանրային շենքերը կառուցում էին ոչ թե գյուղից դուրս, սանիտարական տեսակետից հարմար տեղամասում, այլ հենց գյուղի մեջ, «աչքի առաջ», թեև անասունների այդպիսի համախմբումը գյուղական բնակավայրերում առաջացնում է սանիտարական անբարենպաստ պայմաններ։ Միաժամանակ պետք է նշել, որ հանրային կառուցվածքների այդպիսի դասավորումը ուներ նաև իր որոշակի նախադրյալներն այդ կառուցվածքների ապահովության տեսակետից, որովհետև դասակարգային պայքարի այն սուր բախումների պայմաններում, երբ մեռնող կուլակությունը կանգ չէր առնում նույնիսկ արտադրական կառուցվածքների հրդեհման, ոչնչացման, մեքենաների փչացման առաջ, հանրային սեփականության պահպանման հարցը ամենաառաջնակարգ ֆակտորներից մեկն էր հանդիսանում։ Բայց և այնպես քիչ չէին նաև այնպիսի դեպքերը, երբ հենց սկզբից, տեղերում ճիշտ ըմբռնելով արտադրական կառուցվածքները գյուղի մեջ կենտրոնացնելու աննպատակահարմարությունը, դրանք տեղավորել էին գյուղի ծայրում, թեև այս անգամ էլ որոշ տեղերում մասնագիտական վերահսկողության բացակայության պատճառով, գոմերը կառուցվել էին սանիտարական և հատակագծային տեսակետից միանգամայն աննպաստ տեղերում, մի բան, որը զգալի դժվարություններ առաջացրեց հետագա տարիներին, նրանց տեղափոխման ժամանակ։

Գյուղի կոլեկտիվացման հետագա զարգացումը առաջ բերեց նաև գյուղերի վերահատակագծման անհրաժեշտությունը։

Թեև հատակագծային որոշ աշխատանքներ կատարվել էին նաև կոլեկտիվացումից առաջ, սակայն դրանք հիմնականում ունեին հողաշինարարական նշանակություն և միմիայն գյուղական տընտեսությունների համատարած կոլեկտիվացման հաղթանակից հետո գյուղերի հատակագծումը դրվեց նոր հիմքերի վրա, և այդ գործում անմիջականորեն ներգրավվեցին ճարտարապետները։ Կոլտնտեսային գյուղի հատակագծման հիմքում դրվեց ամբողջ բնակավայրը համապատասխան հատվածների բաժանելու սկզբունքը, երբ կոլտնտեսային արտադրության բոլոր հիմնական շեն-

*քերը կենտրոնացվում են նրա արտադրական հատվածում, որը սովորաբար կառուցվում է գյուղի ծայրում այնպես, որ գերակշռող քամիները չփչեն արտադրական շենքերից դեպի բնակելի հատվածը, իսկ անձրևաջրերը չհոսեն արտադրական շենքերից դեպի բնակելի թաղամասերը։*

*Միաժամանակ մշակվեցին գյուղի կոմունալ և կուլտուրական կառուցվածքների դասավորման ձևերը, իսկ առանձին կոլտնտեսականների տնամերձ հողամասերի համար դասավորությունը, շաղկապված գյուղական փողոցների և թաղամասերի բաժանման հետ՝ դարձավ սոցիալիստական նոր գյուղի բնակելի հատվածի հատակագծման հիմնական սկզբունքը։ Արդեն 1935 թվականից բազմաթիվ գյուղական բնակավայրեր ստացան նոր հատակագծեր, և ամենից առաջ Արարատյան դաշտավայրի մի շարք գյուղեր կարողացան մեկընդմիշտ վերացնել դարերի խորքից եկող իրենց քաոսային կառուցապատումը։*

*Միաժամանակ, պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում կատարված որոշ հատակագծումների մեջ կային նաև էական թերություններ, որոնք հիմնականում արտահայտվում էին կանխակալ երկրաչափական ձևերի ոչ տրամաբանական օգտագործումով, որի հետևանքով տեղի ռելյեֆին լիովին չհամապատասխանող փողոցների ցանցը արհեստականորեն դրվում էր գյուղի հատակագծի կոմպոզիցիայի հիմքում։*

*Գյուղական բնակավայրերի ճարտարապետության համար էական նշանակություն ունեցավ հասարակական ու կուլտուր-կենցաղային շենքերի կառուցումը, որոնց շինարարությունը հատկապես լայն թափ ստացավ շրջանային կենտրոններում։ Առաջին հերթին սկսեցին կառուցել շրջգործկոմների, հյուրանոցների, ակումբների և այլ հիմնարկների շենքերը, որոնց ճարտարապետական կոմպոզիցիաների վրա որոշակի ազդեցություն ունեցան սովետահայ ճարտարապետության մեջ 30-ական թվականներին տեղ գտած ֆորմալիստական տենդենցները։*

*Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գյուղական բնակավայրերում կատարվող շինարարական գործունեությունը հիմնականում տարվում էր ջրանցքների և արտադրական օբյեկտների կառուցման ուղղությամբ և միայն պատերազմի վերջում ուժեղ թափ ստացավ ինչպես բնակարանային, այնպես էլ հասարակական կառուցվածքների շինարարությունը։ Սովետական Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետության համար յուրա-*

հատուկ է պատերազմի տարիներին ծավալված աղյուսր-հուշարձանների կառուցումը։ Պատերազմի հաղթական ավարտից հետո գյուղում ծավալվեց նաև ակումբների և կուլտուր-կենցաղային կառուցվածքների մասսայական շինարարությունը և շատ գյուղերում բարձրացան նրանց հասարակական կենտրոնները ձևավորող այդ նշանակալից շենքերը։

Հետպատերազմյան տարիներին զգալի ծավալ ստացած կոլտնտեսային արտադրական կառուցվածքների շինարարությունը որպես կանոն կատարվում է տիպային նախագծերով, որոնց մեջ նախատեսվում է գյուղատնտեսական արտադրության աշխատատար պրոցեսների մեքենայացումը։

Գյուղական բնակավայրերի ճարտարապետական վերակառուցման ուղղությամբ ունեցած լուրջ հաջողությունների կողքին դեռևս շատ մեծ անելիքներ կան հին կյանքից եկող, ժողովրդական ճարտարապետության մեջ մինչև օրս որոշ տեղերում պահպանված մի շարք հետադեմ սովորությունների և տրադիցիաների վերացման ուղղությամբ, որոնք հատկապես ցայտուն կերպով դրսևորվում են բնակելի տների և տնամերձ տնտեսական շենքերի դասավորության և կառուցման բնագավառում։

Այժմ ամենաառաջնակարգ խնդիրներից մեկն է տիպային նախագծերի, և առաջին հերթին բնակելի տների որակյալ տիպային նախագծերի լայն ներդրումը գյուղական բնակավայրերում կատարվող շինարարության մեջ։

1955 թվականի նոյեմբերի 4-ի Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի «Նախագծման և շինարարության բնագավառում շռայլումները վերացնելու մասին» որոշումը ոչ միայն բացահայտեց ճարտարապետության և նախագծման մեջ եղած կազմակերպչական և ստեղծագործական թերությունները, այլև նշեց այն ուղին, որով պետք է առաջ շարժվի մեր ճարտարապետության հետագա զարգացումը։ Որոշման մեջ նշվում է.

«Սովետական ճարտարապետությանը պետք է հատուկ լինի ձևերի պարզությունը, ճշգրտությունը և լուծումների խնայողականությունը, շենքերի ու կառուցվածքների գրավիչ տեսքը պետք է ստեղծվի ոչ թե հնարովի, թանկ նստող դեկորատիվ զարդարանքների կիրառման միջոցով, այլ շենքերի ու կառուցվածքների նպատակադրման հետ ճարտարապետական ձևերի օրգանական կապի, նրանց լավ համամասնությունների ինչպես նաև շինանյութերի,

կոնստրուկցիաների ու դետալների ճիշտ օգտագործման և աշխատանքների բարձր որակի հաշվին»[1]։

Որոշման մեջ նշված թերությունները բնորոշ են նաև Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղի ճարտարապետությանը։ Արտադրական կառուցվածքները մեզ մոտ որպես կանոն կառուցվում են տիպային նախագծերով, սակայն նրանք փաստորեն կրկնում են ՌՍՖՍՌ աշխարհագրական միջին գոտու համար նախատեսված նախագծերը և միայն վերջերս է, որ սկսվել են մշակվել տեղական պայմաններին համապատասխանող արտադրական կառուցվածքների տիպային նախագծեր։ Խիստ թույլ է նաև շինարարության ինդուստրալիզացիան արտադրական ու հասարակական շենքերի կառուցման բնագավառում։ Ոչ պակաս թերություններ կան գյուղական ակումբների ճարտարապետության մեջ, որտեղ զգալի տեղ են գտել ավելորդությունները։ Պատահական չէ, որ ակումբների շինարարությունը շատ գյուղերում խիստ ձգձգվում է, կլանում հսկայական միջոցներ, որը իր հերթին խիստ բացասաբար է անդրադառնում գյուղում կառուցվելիք այլ հասարակական շենքերի ժամանակին ավարտվելու վրա։ Նույնը կարելի է ասել գյուղական հիդրոկայանների շինարարության մասին, որոնք սովորաբար դասավորված են գյուղերից հեռու, կիրճերի մեջ, սակայն որոշ դեպքերում ունեն բարդ ճարտարապետական հարդարում։

Մեր ճարտարապետների և շինարարների առջև այժմ դրված են մեծ, պատվավոր և պատասխանատու խնդիրներ՝ ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել եղած թերությունները, հատուկ ուշադրություն դարձնել մասսայական, հատկապես տիպային նախագծերով կատարվող շինարարությանը։ Այս տեսակետից լայն հնարավորություններ կան կոլտնտեսային գյուղում, որտեղ կատարվող ամբողջ շինարարությունը, պետք է տարվի միայն և միայն տիպային նախագծերով, որը կօգնի կոլտնտեսային գյուղացիությանը արագ կերպով վերակառուցելու հին գյուղը և ստեղծելու նոր, բարեկարգ կոլտնտեսային ավաններ։

---

[1] «Սովետական Հայաստան», 10 նոյեմբերի 1955։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ

*Կոլտնտեսային կարգերի հաղթանակը ապահովեց մեր երկրի գյուղատնտեսական արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը և կոլտնտեսային գյուղացիության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման չտեսնված վերելքը։*

*Մեզ մոտ արդեն վերացել են քաղաքի և գյուղի միջև եղած հակադրության բոլոր հիմքերը, և այժմ մեր երկիրն ընթանում է սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու, քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացման ճանապարհով։ Սակայն այդ բնավ չի նշանակում խոշոր քաղաքների դերի նվաստացում։ Ընդհակառակը։ Սոցիալիստական քաղաքն իր հարաճուն զարգացման ընթացքում իր հետևից բարձրացրեց մանր, անհատական տնտեսությունների վրա հիմնված հին գյուղը, և տարավ այն սոցիալիզմի, հետագա բարգավաճման և զարգացման ճանապարհով։*

*Գյուղական տնտեսությունները համատարած կոլտնտեսությունների մեջ ընդգրկելը սկզբունքորեն նոր պայմաններ ստեղծեց կոլտնտեսային գյուղի հատակագծման կազմավորման համար։ Գյուղի սոցիալական շերտավորման վերացումը, գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցների կենտրոնացումը կոլտնտեսության արտադրական հատվածում, կոլտնտեսականների տնամերձ տնտեսությունների միատեսակ չափերը, որոնք առանձին վերցրած հանդիսանում են նոր գյուղը կազմավորող բջիջները — ահա այն նախադրյալները, որոնց հիման վրա վերափոխվում է կոլտնտեսային գյուղի ճարտարապետությունը։*

*Գյուղերի ճարտարապետական ընդհանուր վերահատակագծումը, անշուշտ, ունի իր որոշակի դժվարությունները։ Բանն այն է, որ եթե առանձին բնակարանի հարցերում կոլտնտեսային ապրե-*

լակերպի առաջացրած փոփոխությունը ավելի արագ է իրականանում կյանքում, և կոլտնտեսականն այլևս անհնար գտնելով ապրել կիսախավար գլխատան մեջ, առանց էական դժվարության քանդում է հին բնակարանը և նրա տեղը, հաճախ օգտագործելով նույն գերանները և նույն քարը, կառուցում նորը, ապա գյուղի ընդհանուր կառուցվածքի փոփոխությունը շատ ավելի դժվար ու լուրջ խնդիր է և կարող է լուծվել ամբողջ գյուղի վերակառուցման ժամանակ միայն։ Այդ է պատճառը, որ Սովետական Հայաստանի մի շարք գյուղերում, որտեղ ամեն տարի կառուցվում են մի քանի տասնյակ նոր բնակարաններ, գյուղերի ընդհանուր հատակագծման մեջ հիմնականում որևէ էական փոփոխություն չի նկատվում, չնայած նրան, որ անխտիր բոլոր գյուղերում կատարված են մասնակի բարեկարգման աշխատանքներ, բացված են նոր փողոցներ, կառուցված են մի շարք հասարակական ու կուլտուր-կենցաղային շենքեր, իսկ երբեմն կոլտնտեսային արտադրական կառուցվածքների ամբողջ կոմպլեքսներ։

Կոլտնտեսային նոր կյանքը, նրա նոր բովանդակությունն աստիճանաբար և անվերապահորեն վերափոխում է հին գյուղը, մտցնում նոր գծեր, նոր էլեմենտներ, որոնք բոլորովին անհայտ էին հնին։ Սակայն պետք է նշել, որ, չնայած դրան, դեռևս շատ տեղերում նոր ապրելակերպը պարփակված է հին գյուղից ժառանգած ճարտարապետական կոմպոզիցիայի մեջ, կոնֆլիկտի մեջ լինելով նրա հետ։ Կոլտնտեսային գյուղի հատակագծման, ինչպես նաև բնակելի տների նոր ձևերի որոնման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում հայկական ժողովրդական ճարտարապետության դարավոր փորձի ուսումնասիրության հարցը, որովհետև տասնյակ դարերի ընթացքում կուտակված ժողովրդի հարուստ փորձը, անշուշտ, շատ ուսանելի նյութեր կարող է տալ կոլտնտեսային նոր գյուղի ճարտարապետական կոմպոզիցիայի տարբեր հարցերի մշակման ժամանակ։

Այդ ամենից առաջ վերաբերում է գյուղերի ընդհանուր դասավորության հարցերին, որոնք այնքան յուրահատուկ և հետաքրքիր են ինչպես լեռնային շրջաններում, այնպես էլ հարթավայրերում։ Ոչ պակաս նշանակություն կարող է ունենալ փողոցների, տրանսպորտային ուղիների և հատկապես գյուղական բնակարանների դասավորության հարուստ փորձը, որոնք դարձյալ տարբեր են ամեն մի աշխարհագրական շրջանում և ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված այս ձևերը, անշուշտ, պետք է հատուկ ուսում-

նասիրության առարկա դառնան, գտնելու համար այնտեղ դրսևորվող և մեր պայմաններին առավել համապատասխանող ճարտարապետական ձևերն ու կոնստրուկցիաները։ Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում լեռնային շրջանների գյուղերը, որոնց կոմպոզիցիաների անսահման բազմազանությունը, առանձին գյուղերի դասավորման մեծ գեղարվեստականությունը և բնության հետ նրանց ունեցած հիանալի կապը վկայում են ժողովրդական վարպետների մեծ հմտության մասին։

Հայաստանի լեռնային շրջանների գյուղերի տեղադրումը, վերջին հաշվով, որոշվում է հիմնականում տեղանքի պայմաններով։ Նրանք սովորաբար կառուցված են հարավ ուղղված լեռնալանջերին, ցուրտ քամիներից պաշտպանված վայրերում, հաճախ խոր ձորերի մեջ կամ նրանց եզրերում, որտեղ առավել շատ են աղբյուրները և համեմատաբար ավելի դյուրամատչելի՝ ճանապարհները։ Տեղանքի պայմանների հետ մեկտեղ ոչ պակաս նշանակություն ունի նաև տրանսպորտային ուղիների հարցը, որոնք շատ դեպքերում որոշիչ են հանդիսացել գյուղերի տեղերի ընտրության ժամանակ։ Կարելի է նշել բազմաթիվ բնակավայրեր, որոնք տեղավորված են բաց սարահարթերում, սակայն տրանսպորտային միակ գծի ուղղությամբ։ Այդպես են, օրինակ, Լոռիում՝ Դեբետ գետի երկարությամբ տեղավորված և Զանգեզուրում՝ կիրճերի ափերին դասավորված գյուղերը։

Մյուս կողմից նույն տրանսպորտային ուղիներն են, որ որոշել են գյուղերի առանձին թաղամասերի դասավորությունները։ Բազմաթիվ օրինակներով կարելի է ցույց տալ, թե ինչպես ժողովրդական վարպետները կարողացել են հիանալի կերպով օգտագործել տեղանքի պայմանները գյուղերի տեղաբաշխման առավել ռացիոնալ լուծումներ ստանալու համար։

Միաժամանակ պետք է նշել, որ ժողովրդական ճարտարապետությանը հատուկ, ձգտումը դեպի գեղեցկությունը լիովին դրսևորվում է ոչ միայն առանձին բնակելի տների ճարտարապետության մշակման ժամանակ, այլև գյուղերի հատակագծման հարցերը լուծելիս։ Հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես լերկ ժայռերի մեջ, կիրճերի ամբողջ երկարությամբ հոսող լեռնային գետակների ափերին, բազմաթիվ սերունդների քրտնաջան աշխատանքի շնորհիվ աճեցված կանաչախիտ այգիների մեջ կամ նրանցից ավելի վեր, ժայռերի կրծքին կպած, թառել է հայկական գյուղը իր փոքրիկ խրճիթների ցեխաշար պատերով, կամ սովորաբար դեպի հա-

թավ ուղղված պատշգամբների շարքերով։ Տերիտորիայի սղությունը ստիպում է բնակելի տները հպել միմյանց, և մեկ բնակարանի հարթ ծածկը շատ անգամ դարձնել նրանից վեր դասավորված բնակարանի բակը։ Այդպիսի բնակավայրերում համարյա թե բացակայում են տնամերձ հողամասերը և հազիվ տեղ է գտնվում տնտեսական օժանդակ կառուցվածքների համար։ Ռելյեֆային ավելի հանգիստ պայմաններում, երբ թույլ է տալիս տեղանքը, գյուղերի փողոցները դասավորվում են լեռնալանջերի վրա՝ համապատասխան տեղանքի հորիզոնականներին, իսկ տնամերձ հողամասերն ու այգիները՝ այդ փողոցների միջև ստացված տարածություններում։ Վերջին դասավորությունը պահպանվում է հիմնականում այն բնակավայրերում, որտեղ տեղանքի ռելյեֆը շատ ավելի մեղմ է և գյուղերի փողոցները դասավորված են միանգամայն ազատ կերպով։

Բաց սարահարթերում դասավորված գյուղերում ինչպես փողոցների, այնպես էլ առանձին բնակարանների դասավորության ժամանակ էական նշանակություն է ստանում գերակշռող քամիների ուղղությունը։

Այս հանգամանքը առավել ցայտուն կերպով դրսևորվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանների սարահարթերում, որտեղ հատկապես ուժեղ են հյուսիսային ցուրտ քամիները։ Այսպես, օրինակ, Կալինինոյում հյուսիսից հարավ ձգված փողոցի ամբողջ երկարությամբ բնակարանները դասավորված են մի որոշակի օրինաչափությամբ, որտեղ բնակարանների խուլ պատերը որպես կանոն ուղղված են դեպի հյուսիս, այսինքն դեպի հիմնական ցուրտ քամիները։ Այս հանգամանքն էլ իր հերթին որոշել է պատշգամբների դասավորությունը, որոնք բոլորն էլ ուղղված են դեպի հարավ։ Անկյունագծային ուղղություն ունեցող փողոցներում հաճախ հանդիպում ենք ընդլայնական պատերի շարունակության երկկողմանի դասավորությանը, որոնք հիանալի կերպով պաշտպանում են պատշգամբը հյուսիսային քամուց։

Բնակարանների նշված դասավորությունները յուրահատուկ են Հայաստանի հատկապես հյուսիսային շրջաններին, որտեղ համեմատաբար շատ են անտառները և որտեղ պատշգամբները լայն տարածում ունեն։ Միանգամայն այլ պատկեր ենք տեսնում Հայաստանի նույնպես լեռնային, սակայն անտառազուրկ շրջաններում, որտեղ ժողովրդական ճարտարապետության մեջ մինչև վեր-

չին տասնամյակներն էլ բնակարանի հիմնական ձևը հանդիսանում էր գլխատունը։

Գլխատան ճարտարապետական կոմպոզիցիան, որտեղ բացակայում են լուսամուտները և լուսավորության միակ աղբյուրն է հանդիսանում երդիկը, լայնորեն տարածված է եղել Հայաստանի լեռնային բոլոր շրջաններում և պատահական չէ, որ նա առավել երկար ժամանակ դիմացել է հատկապես անտառազուրկ շրջաններում, որտեղ շինարարական փայտի բացակայությունը, աթարի, որպես վառելիքի միակ տիպի օգտագործումը դարձրել են նրան նախասովետական շրջանում գյուղական բնակարանի հիմնական տիպը։ Այն հանգամանքը, որ գլխատունը չունի ո՛չ պատշգամբներ և ո՛չ էլ լուսամուտներ, շատ ավելի լայն հնարավորություններ է տվել այդ ձևի բնակարանների դասավորության ժամանակ, որովհետև գերակշռող քամիների ուղղությունը այս տիպի բնակարաններում կարող է նշանակություն ունենալ միայն բնակարանի մուտքի դասավորության համար, որը և սովորաբար տեղավորվում է ցուրտ քամիներին հակառակ ուղղությամբ։ Այդ է պատճառը, որ հատկապես Սևանի ավազանում, Ազիզբեկովի և Սիսիանի շրջանների մի շարք գյուղերում իսպառ բացակայում են բնակելի տների դասավորման վերը նշված օրինաչափությունները, իսկ բնակելի շենքերի փոխադարձ դասավորությունները ստանում միանգամայն պատահական և անկանոն ձևեր։

Կոլտնտեսային կարգերի հաստատումը այս շրջանների բնակավայրերում ևս էական փոփոխություններ մտցրեց, որը ամենից առաջ դրսևորվեց գլխատների մասսայական քանդումով և հարթ ծածկով ու լուսամուտներով բնակարաններ կառուցելով։ Ահա այս տիպի շենքերում արդեն նկատվում է պատշգամբների դասավորության վերը նշած օրինաչափությունը, սակայն այն տարբերությամբ, որ պատշգամբներն այստեղ որպես կանոն միշտ էլ արվում են ապակեպատ։

Կոլտնտեսային կարգերը յուրահատուկ ձգտում առաջացրին նաև լեռնային շրջանների գյուղացիների մեջ, որոնք այժմ աստիճանաբար տեղափոխում են իրենց գյուղերը ձորերից և կիրճերից դեպի սարահարթերը, դեպի լայն ու ընդարձակ տարածությունները՝ թողնելով արծվի բների նման ժայռերին կպած իրենց հին գյուղերը և լեռնալանջերի մեջ փորված խրճիթները։ Որպես օրինակ կարելի է նշել Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղը, որտեղ ժայռափոր քարանձավներում ապրող գյուղացիք, որոնք երկար տարիներ

*գլխապտույտ կածաններով և արահետներով են իջել իրենց բնակարանները, այժմ դուրս են եկել կիրճից ընդարձակ սարահարթը և նոր գյուղ կառուցել այնտեղ։ Կարելի է նշել նաև նույն շրջանի Բարձրավան գյուղը, որի բնակիչները նույնպես դուրս գալով ձորից նոր բնակավայր են հիմնել անտառներով շրջապատված հարթավայրում։*

*Եվ եթե լեռնային շրջաններում տրանսպորտային ուղիներն են, որ հիմնական, որոշիչ գործոն են հանդիսանում գյուղական բնակավայրերի փողոցների ուղղության մշակման ժամանակ, ապա հարթավայրային շրջաններում տեսնում ենք միանգամայն այլ պատկեր։*

*Հայտնի է, որ հարթավայրային, այգեգործական շրջաններում մեծ նշանակություն ունի ջրատար առուների տեղաբաշխման հարցը։ Ահա այդ առուների և հատկապես մագիստրալ առուների ուղղությունն էլ (որը վերջին հաշվով թելադրվում է տեղանքի պայմաններով) որոշ դեպքերում բնորոշում է գյուղերի հիմնական փողոցների ուղղությունը։ Նրանք սովորաբար դասավորվում են այդ առուներին զուգահեռ, իսկ բնակիչների հողամասերը՝ նրանց երկու կողմերում։*

*Անհրաժեշտ է նշել ժողովրդական վարպետների մեծ հմտությունը այդ առուների ուղղության որոշման գործում. վերջինները շատ հաճախ տարվում են տեղանքի ջրաբաժան գծով այնպես, որպեսզի հնարավոր լինի լավագույն ձևով ապահովել նրանց երկու կողմում դասավորված հողերի ոռոգումը, ինչպես, օրինակ՝ Աշտարակում, Օշականում, Կարբիում և Արարատյան դաշտի շատ գյուղերում։*

*Հարթավայրային շրջանների բնակելի տների յուրահատուկ ձևերն էլ իրենց որոշ ազդեցությունն են ունեցել գյուղական բնակավայրերի ընդհանուր հատակագծման հարցերի լուծման վրա, ամենասերտ կերպով մերվելով քաղաքաշինարարական այն սկզբունքների հետ, որոնք ընկած են նշված շրջանների ժողովրդական ճարտարապետության հիմքում։ Այդ արտահայտվում է փողոցների երկարությամբ և սովորաբար փողոցի անմիջական եզրին կառուցվող բնակելի տների յուրահատուկ կոմպոզիցիաներով, որոնց ընդարձակ պատշգամբները համարյա թե միշտ էլ ուղղված են կամ դեպի բակը, կամ դասավորված են փողոցի ընդերկայնական ուղղությանը ուղղահայաց, մի բան որն, անշուշտ, բացատրվում է պատշգամբների ամռան ամիսներին լայն օգտագործման պայ-*

մաններով, երբ բնակիչները այնտեղ և՛ քնում են, և՛ ճաշում, և՛ հանգստանում։

Եթե լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի հատակագծման վրա և հատկապես բնակելի տների դասավորության վրա որոշակի ազդեցություն են ունենում գերակշռող քամիների ուղղությունները, ապա այստեղ բնակելի տների դասավորությունը անմիջականորեն կապվում է պատշգամբի արևմտյան, այսինքն ցածրադիր շրջանների համար առավել անբարենպաստ օրիենտացիայից խուսափելու հետ։ Առավել բարենպաստ դեպքերում բնակիչները ձգտում են պատշգամբները ուղղել դեպի հյուսիս, մի բան, որ հնարավորություն կտա ամռան ամիսներին խուսափել արևի կիզիչ ճառագայթներից, իսկ հիմնական սենյակները, որոնք բնակելի տան այսպիսի օրիենտացիայի դեպքում կստացվեն ուղղված դեպի հարավ, ձմռան ամիսներին կողողվեն արևի ճառագայթներով։

Հարթավայրային շրջանների գյուղական բնակավայրերում սովորաբար դեպի փողոց են դուրս գալիս բնակարանների առաջին հարկը կազմող մառանների ոչ մեծ լուսամուտները, որոնք յուրահատուկ, արտահայտիչ տեսք են տալիս փողոցին և որոշ չափով համակերպվում փողոցի ամբողջ երկարությամբ ձգվող, սովորաբար մարդու հասակից բարձր պատերի հետ, որոնք իրենց հերթին ընդհատվում են բնակելի տներից ոչ հեռու դասավորված մուտքերի պորտալներով։ Այդ պորտալները, սովորաբար կառուցված մաքուր տաշած քարերից, իրենց կամարակապ մուտքերով ուժեղ կոնտրաստ են ստեղծում փողոցների ամբողջ երկարությամբ ձգվող ճեղքված քարերից շարված պատերի միօրինակության հետ և փողոցի ճարտարապետության մեջ մտցնում են հաճելի թարմություն։

Փողոցների ճարտարապետության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև դեպի փողոց նայող ոչ մեծ և սովորաբար երկրորդ հարկում դասավորված նուրբ փայտյա պատշգամբները (Աշտարակ, Ոսկեվազ)։ Յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Օշականում, գյուղական երեք փողոցների հատումից ստացված ոչ մեծ եռանկյունի հրապարակը, որը ժողովրդական ճարտարապետության քաղաքաշինարարական սկզբունքների մի ցայտուն օրինակ է հանդիսանում։ Այստեղ եռանկյուն հրապարակը կազմված է միմյանց դիմաց կառուցված երեք երկհարկանի տներով, որոնցից առավել նշանակալիցը հանդիսանում է եռանկյան հիմքը կազմող շենքը, որի կենտրոնական մասում արված կոնսոլային նուրբ պատշգամբը

ավարտում է նրա հանդիպակած փողոցի ամբողջ հեռանկարը։ Եռանկյան մյուս կողմերը կազմող երկու շենքերի կենտրոններում էլ դրված են համանման պատշգամբներ, որոնք իրենց հերթին ավարտում են կողային փողոցների հեռանկարները։

Փողոցների ավարտումը որևէ ճարտարապետական արտահայտիչ էլեմենտով՝ ունի իր խորը տրադիցիաները։ Օշականի գլխավոր փողոցի վերջում 7-րդ դարում կառուցված կոթողը թույլ է տալիս ենթադրել, որ ճարտարապետական այս տրադիցիաները գալիս են դեռևս շատ հնից։

Մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդական ճարտարապետության մեջ բնակելի տները կիրճերի եզրերին դասավորելու սովորությունը, երբ դեպի կիրճը նայող լուսամուտներից և անդնդախոր ձորի վրա կախված փայտյա նուրբ պատշգամբներից հիանալի տեսարաններ են բացվում կիրճի ամբողջ երկարությամբ։

Ցայտուն օրինակ են Օշականում, Քասաղ գետի երկայնքով ձգվող կիրճի ափերի բնակելի տները, որտեղ ժողովրդական վարպետները ցույց են տվել իրենց մեծ հմտությունը։

Այսպիսով, կարելի է ասել, որ թեև ժողովրդական ճարտարապետության քաղաքաշինարարական սկզբունքները մշակվել են դեռևս ֆեոդալական հասարակարգի ընդերքում, սակայն իրենց մեջ պարունակում են ժողովրդի ճարտարապետական կուլտուրայի դարավոր պատմության ընթացքում բյուրեղացած կոմպոզիցիոն այնպիսի հետաքրքիր սկզբունքներ, որոնք անպայմանորեն պետք է խորը, մանրամասն կերպով ուսումնասիրվեն և օգտագործվեն կոլտնտեսային գյուղերի նոր հատակագծերի մշակման ժամանակ։

Բնակավայրերի գյուղական տիպը Հայաստանում հայտնի է շատ հնից և ժողովրդական ճարտարապետության ձևերն էլ հիմնականում մշակվել են հատկապես գյուղական տիպի բնակավայրերում։ Նշված հանգամանքը էական նշանակություն ունի այն տեսակետից, որ այսօր ևս մեր գյուղական բնակավայրերը հիմնականում նույն տիպի են և խուտորային բնակավայրեր Սովետական Հայաստանի տերիտորիայում համարյա թե չեն հանդիպում։ Մեզ մոտ գյուղական բնակավայրերը հանդիսանում են միաժամանակ կոլտնտեսային արտադրության կենտրոնները, որտեղ սովորաբար մեկ բնակավայրում կազմակերպված է մեկ կոլտնտեսություն, թեև հանդիպում են դեպքեր, երբ այդ կոլտնտեսության մեջ ընդգրկված են նաև հարևան փոքր գյուղերի բնակիչները։

Բնակավայրերի մյուս ձևը շրջանային կենտրոններն են, որոնց մեծ մասն այժմ կամ քաղաքներ են, կամ քաղաքատիպ ավաններ, իսկ գյուղական տիպի շրջանային կենտրոնների հարաճուն զարգացումը նրանց ևս արագ թափով տանում է քաղաքատիպ ավաններ դառնալու ուղղությամբ։ Շրջանային կենտրոնների արտադրական բազան են արհեստանոցները, փոքր գործարանները, արտելները և այլ ձեռնարկությունները. ազգաբնակչության միայն մի մասն է, որն զբաղվում է գյուղատնտեսությամբ և ունի իր կոլտնտեսությունը։ Հանդիպում են շրջանային կենտրոններ, որտեղ կա նույնիսկ երկու կոլտնտեսություն։

Սակայն, եթե երկու կոլտնտեսության առկայությունն այնպիսի համեմատաբար մեծ բնակավայրերում, ինչպիսիք են շրջանային կենտրոնները, միանգամայն տրամաբանական է և հասկանալի, ապա երկու կոլտնտեսության առկայությունը սովորական գյուղերում (մի բան, որ հաճախ հանդիպում էր, մինչև մանր կոլտնտեսությունների խոշորացումը), անշուշտ, իր բացասական ազդեցությունն էր ունենում ոչ միայն կոլտնտեսության էկոնոմիկայի, այլև բնակավայրերի շինարարության վրա, որովհետև անհրաժեշտ էր լինում միևնույն բնակավայրում կազմակերպել առանձին արտադրական հատվածներ, երկու հասարակական կենտրոններ և այլն, որն, անշուշտ իր անբարենպաստ ազդեցությունն էր ունենում բնակավայրի ընդհանուր ճարտարապետական կոմպոզիցիայի միասնական լուծման հարցում։

Ահա թե ինչու մանր կոլտնտեսությունների խոշորացումը մեծ դեր խաղաց սոցիալիստական գյուղի էկոնոմիկայի և ճարտարապետության հարցերի զարգացման ուղղությամբ։

Անհրաժեշտ է նշել, որ կոլտնտեսությունների խոշորացումը որոշ տեղերում առաջացրեց կոլտնտեսային ավանների և գյուղերի միացման ձգտում, ընդ որում նախատեսվում էր քանդել գոյություն ունեցող շատ գյուղեր և դրանք փոխարինել, այսպես կոչված, «ագրոքաղաքներով»։

Կոլտնտեսային ավանների և գյուղերի տեղափոխման այս, անշուշտ վնասակար, տենդենցները կանխվեցին պարտիայի Կենտրոնական Կոմիտեի միջամտելուց հետո, և կոլտնտեսությունների հիմնական ուշադրությունը հրավիրվեց գյուղատնտեսական արտադրությունը բարձրացնելու վրա, ընդ որում, շինարարության բնագավառում առաջնակարգ համարվեց կոլտնտեսային արտադրության հարաճուն վերելքն ապահովող անհրաժեշտ բոլոր տեսակի արտադրական շենքերի կառուցման տեմպերի ուժեղացումը։

* * *

Կոլտնտեսային ավանի բնակելի մասում դասավորվում են կոլտնտեսականների բնակելի տները, իրենց տնամերձ հողամասերով և կուլտուր-կենցաղային ու հասարակական շենքերը, իսկ արտադրական մասում՝ արտադրության շենքերը (գոմերը, պահեստները մեքենաների և ինվենտարի ծածկույթները և այլն)։ Կոլտնտեսային ավանի հատակագծման առաջին փուլը հենց հանդիսանում է բնակավայրի այդ երկու հիմնական հատվածների տեղաբաշխումը, որի ժամանակ պետք է հաշվի առնել այն բոլոր նախապայմանները, որոնք բնորոշում են գյուղի ընդհանուր կոմպոզիցիան և ամենից առաջ նրա տեղադրումը հողային մասսիվի մեջ, կապը ռելյեֆի, գոյություն ունեցող ճանապարհների, ջրանցքների, պահպանվող կառուցվածքների հետ և այլն։ Որոշակի նշանակություն ունեն գերակշռող քամիների ուղղությունը և տեղանքի ռելյեֆը, որովհետև, որպես կանոն արտադրական հատվածը պետք է դասավորված լինի այնպես, որ քամիները չփչեն այդտեղից դեպի գյուղ, իսկ անձրևաջրերը չհոսեն արտադրական. կառուցվածքներից դեպի բնակելի տները։

Միաժամանակ արտադրական հատվածը պետք է հարմար և կարճ ճանապարհներով կապված լինի ինչպես գյուղի բնակելի թաղամասերի, այնպես էլ դաշտային մասսիվների հետ։

Բնակելի հատվածի համար, որը կազմում է գյուղի տերիտորիայի հիմնական, որոշիչ մասը, հատկացվում է գյուղի սանիտարական տեսակետից առավել բարենպաստ հողամասը, որը հարմար ճանապարհներով պետք է կապված լինի ինչպես դաշտի, արտադրական հատվածի, այնպես և շրջանային կենտրոնի հետ։

Բնակելի հատվածը հիմնականում կազմված է բնակելի թաղամասերից, որոնք իրենց հերթին բաղկացած են կոլտնտեսականների տնամերձ հողամասերից։

Բնակելի հատվածի մեջ են մտնում նաև կուլտուր-կենցաղային ու հասարակական շենքերը (դպրոց, մանկամսուր, մանկապարտեզ, ակումբ և այլն), որոնց տեղաբաշխումը յուրաքանչյուր առանձին դեպքում որոշվում է համապատասխան տեղական կոնկրետ պայմանների։

Բնակելի հատվածի հատակագծման սկզբնական էլեմենտը կազմում է տնամերձ հողամասը, այնտեղ դասավորված բնակելի տնով և օժանդակ կառուցվածքներով։

Տնամերձ հողամասերի չափերից և նրանց փոխադարձ դասավորություններից էլ կախված են բնակելի կվարտալների ընդհանուր չափերը։ Տնամերձ հողամասերը, կարելի է ասել, վճռական նշանակություն են ունեցել նաև նախասովետական շրջանի գյուղական բնակավայրերի հատակագծային կոմպոզիցիայի ստեղծման գործում և այդ տեսակետից անհրաժեշտ է մի թռուցիկ հայացք ձգել ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված այն տրադիցիաների վրա, որոնք այնքան յուրահատուկ կերպով են դրսևորվում Հայաստանի տարբեր աշխարհագրական շրջաններում։

Նախասովետական շրջանում բնակելի թաղամասերի կազմը համարյա թե նույնն էր ամբողջ գյուղի համար։ Բացի մեկ հիմնական հասարակական կենտրոնից, որը սովորաբար կազմավորվում էր գյուղական եկեղեցու մոտ, գյուղի մնացած տարածությունը հիմնականում բաղկացած էր սկզբունքորեն միօրինակ արտադրական և բնակելի էլեմենտներից, որտեղ, սակայն, տնամերձ հողամասերի ամենաբազմապիսի չափերը և ձևերը վերջին հաշվով որոշում էին գյուղական փողոցների խառնիճաղանճ դասավորությունը և թելադրում էին գյուղի հատակագծային ընդհանուր պատկերը։

Նախասովետական գյուղի հատակագծային կոմպոզիցայի վրա, բացի ռելյեֆից և կլիմայական պայմաններից, իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել նաև գյուղացիների տնամերձ տընտեսությունների չափերը և փոխադարձ դասավորությունը, որը առանձնահատուկ նշանակություն էր ստանում հին գյուղի դասակարգային խիստ շերտավորման պայմաններում։ Այն ժամանակ, երբ չքավոր գյուղացիների մոտ և՛ բնակելի տունը և՛ օժանդակ կառուցվածքները ոչ մեծ մակերես էին գրավում, կուլակային տնտեսությունների կառուցվածքները՝ դասավորված գյուղի կենտրոնում, կամ նրա առավել աչքի ընկնող հարմարագույն մասերում, նշանակալից դեր էին խաղում գյուղի ընդհանուր հատակագծային պատկերի որոշման գործում։ Առանձին տնտեսությունների տնամերձ հողամասերը փաստորեն հանդիսանում են գյուղի այն առաջնային, ամենապարզ էլեմենտները, որոնց մեխանիկական գումարն էլ տալիս էր նախասովետական գյուղի ամբողջ տեսքը։ Մյուս կողմից նշանակալից տարբերություն է նկատվում տարբեր աշխարհագրական պայմաններում գտնվող տնամերձ հողամասերի ինչպես ընդհանուր ձևի, այնպես էլ այնտեղ գտնվող կառուցվածքների փոխադարձ դասավորության միջև։

Սոցիալական պայմանները, գյուղատնտեսական արտադրության ձևերը, կլիման և շինանյութերը, տեղական տրադիցիաները, ահա այն գործոնները, որոնք հիմնական և որոշիչ դեր էին խաղում նախասովետական գյուղի այդ առաջնային էլեմենտի կազմավորման հարցում։

Այն էական և սկզբունքային տարբերությունները, որոնք նկատելի են տարբեր աշխարհագրական շրջանների բնակելի տների միջև, ցայտուն կերպով դրսևորվում են նաև տնամերձ հողամասերի հատակաձևերի կազմավորման մեջ։

Այսպես, լեռնային շրջաններին յուրահատուկ է օժանդակ կառուցվածքների (գոմ, մարագ և այլն) համախմբվածությունը մի ընդհանուր ծածկի տակ, ձմռան ամիսներին ջերմության ավելորդ կորստից խուսափելու նպատակով։ Այս բանը ամենաէական նշանակություն ուներ նախասովետական շրջանի լեռնային գյուղերի բնակիչների համար, և այն հաճախ հիմք էր հանդիսանում բնակելի տարածության և գոմի զուգակցմանը, ձմռան ամիսներին ամբողջ ընտանիքով գոմի օդան տեղափոխվելուն և կամ թե չէ բնակարանի ու գոմի մեջ անմիջական կապ ստեղծելուն, երբ անասունները գոմ էին տարվում բնակելի տարածության միջով։ Այս հարցում քիչ նշանակություն չուներ նաև նախասովետական շրջանում գյուղացու անապահով դրությունը, և նրա ձգտումը անել ամեն ինչ, իր ունեցվածքը հափշտակումներից պահպանելու համար։ Բնակելի տան և օժանդակ կառուցվածքի այդպիսի համախըմբումը իր ազդեցությունն է ունեցել ինչպես տնամերձ հողամասի հատակագծման, այնպես էլ ամբողջ գյուղի կառուցապատման հարցում։ Պատահական չէ, որ լեռնային գյուղերում (և հատկապես մեծ թեքություն ունեցող վայրերում) բակը, որպես այդպիսին, ունենում է համեմատաբար փոքր մակերես, և բնակելի տները միմյանց այնքան մոտ են կառուցված լինում, որ առանց դժվարության նրանց տանիքների վրայով կարելի է անցնել գյուղի մի ծայրից մյուսը։

Տեղանքի ավելի հանգիստ ռելյեֆի ժամանակ մեծանում է տնամերձ հողամասերի չափերը և հաճախ գյուղացու բնակարանին կից տեղ է գտնվում նաև փոքրիկ այգու համար։ Տնամերձ հողամասերի այս ձևը լայնորեն տարածված է Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում, որտեղ գոմը ունենում է իր առանձին մուտքը, թեև այստեղ ևս, նա, համարյա թե ամենուրեք, կառուցվում է բնակելի սենյակներին կից, դեպի բակի խորքը դա-

*սավորված պատի մոտ։ Ակնհայտ է , որ օժանդակ կառուցվածքների այդպիսի լուծումն էական առավելություն ունի վերը նշված տիպերի նկատմամբ, թեև գոմի՝ բնակելի սենյակներին անմիջական մոտիկ լինելը չի նպաստում ամբողջ բնակարանի ընդհանուր սանիտարական դրության բարելավմանը։*

*Կոլտնտեսային կարգերի հաստատումից հետո վերացավ գոմի և բնակելի սենյակի անմիջական կապի սովորությունը, և նոր կառուցվող բնակելի տներում գոմը որպես կանոն ունենում է իր առանձին մուտքը։*

*Արարատյան դաշտավայրում, որտեղ գյուղացիության հիմնական զբաղմունքն այգեգործությունն է, տնամերձ հողամասը ստանում է արդեն այլ կառուցվածք։ Կոլտնտեսականի տնամերձ տնտեսության մեջ անասնապահությունը գրավում է երկրորդական տեղ և դրան համապատասխան էլ գոմի համեմատաբար փոքր ծավալը տեղավորվում է բակի մի կողմում կամ կցվում բնակելի տան՝ դեպի բակի խորքն ուղղված պատին։ Օժանդակ կառուցվածքներից առաջնակարգ տեղը այստեղ գրավում է մառանը, որը կառուցում են սովորաբար կամ բնակելի սենյակներին կից, բակի նեղ ճակատի երկարությամբ, կամ թե չէ, բնակարանի երկհարկ կոմպոզիցիայի դեպքում՝ առաջին հարկում։*

*Մեկ հարկանի բնակարաններում տնամերձ հողամասը սովորաբար լիովին անջատված է լինում փողոցից բնակելի տան հիմնական ծավալով, որի կենտրոնում դասավորված ծածկված միջանցքը (հովանոց, դալան) ուղղակի կապ է ստեղծում փողոցի և բակի միջև։ Մյուս օժանդակ շենքերը սովորաբար կառուցվում են մառանի պատին կից, բակի ընդերկայնական ուղղությամբ։ Թեև հանդիպում են օժանդակ կառուցվածքների դասավորության նաև այլ տարբերակներ, բայց նրանք չեն փոխում նշված կոմպոզիցիայի հիմնական սկզբունքները։ Բոլոր դեպքերում էլ տնտեսական բակը ստացվում է փողոցից անջատված և դասավորված բնակելի տան և տնամերձ այգու միջև, իսկ կապը փողոցի հետ պահպանվում է կամ ծածկված միջանցքի միջով կամ բնակելի տան մի կողմով։*

*Շատ ավելի բազմազան տարբերակներ են հանդիպում բնակարանի երկհարկ կոմպոզիցիայի դեպքում, որտեղ առավել տարածված լուծումը բնակարանի դասավորությունն է բակի ընդերկայնական ուղղությանը զուգահեռ, ընդ որում բնակարանի նեղ ճակատը համարյա թե միշտ ուղղված է լինում դեպի փողոց։ Այս դեպքում տնտեսական բակը անմիջական կապ ունի փողոցի հետ, մնա-*

ցած օժանդակ կառուցվածքները դասավորվում են հողամասի առանձին մասերում, իսկ գոմը, առավել տարածված դեպքերում կառուցվում է բնակարանի դեպի բակի խորքը ուղղված ճակատին կից։ Բնակելի տան և տնամերձ հողամասի այս կոմպոզիցիան ներկայացնում է Արարատյան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետության առավել ռացիոնալ ձևերից մեկը, և անշուշտ, կարող է օգտագործվել կոլտնտեսային գյուղի հատակագծման ժամանակ։ Այս բանը վերաբերվում է հատկապես բնակելի տան դասավորությանը, մինչդեռ գոմի նշված դրվածքը բնավ չի կարելի թույլատրելի համարել և նոր կառուցվող բնակելի տներում այն, անշուշտ, պետք է կառուցվի բնակելի սենյակներից որոշ հեռավորության վրա։

Բնակելի տան ավելի ազատ դասավորության տարբերակներ կարելի է տեսնել Լոռիում, որտեղ բնակարանի տեղաբաշխումը կաշկանդված չէ փողոցի ուղղությամբ և այն սովորաբար գտնվում է տնամերձ հողամասի խորքում, մի բան, որը, անշուշտ, ավելի լայն հնարավորություններ է տալիս բնակելի սենյակների առավել ռացիոնալ օրիենտացիա ընտրելու համար։ Այս սկզբունքը ևս, կարող է և պետք է հմտորեն օգտագործվի կոլտնտեսային գյուղերի հատակագծման ժամանակ, հատկապես բնակելի տների անբարենպաստ օրիենտացիաներից խուսափելու և փողոցների ճարտարապետության ավելի գեղատեսիլ լուծմանը հասնելու համար։

Այսպիսով, ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված տնամերձ հողամասերի հատակագծային հիմնական սկզբունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած աշխարհագրական, կլիմայական և տնտեսական պայմանների նշանակալից տարբերությանը, կարելի է որոշ ընդհանուր գծեր տեսնել տարբեր շրջանների տնամերձ հողամասերի հատակագծումների հիմնական սկզբունքների միջև։

Ամենից առաջ պետք է նշել, որ իբրև կանոն, հողամասի դեպի փողոց ուղղված կողմում դասավորված է բնակելի տունը, ապա գալիս է տնտեսական բակը իր շուրջը գտնվող օժանդակ կառուցվածքներով (գոմ, մարագ և այլն), իսկ նրանից հետո՝ բանջարանոցը և այգին։ Աստիճանաբար սովորական են դառնում բնակելի տների և փողոցի միջև դասավորված փոքրիկ ծաղկանոցները, որոնք համարյա թե անհայտ էին հին գյուղին, և, հատկապես, անտառազուրկ շրջանների գյուղական բնակավայրերին։ Կանաչապատման խիստ պակասը, կամ կարելի է ասել ուղղակի բացակայու-

թյունը Հայաստանի լեռնային և նախալեռնային մի շարք շրջանների գյուղերում, բնակելի տների և տնտեսական կառուցվածքների մեծ կուտակվածությունը, հակասանիտարական պայմանները, վատ ինսոլյացիան և օդափոխումը նախասովետական շրջանում բնավ չէին նպաստում գյուղի ընդհանուր բարեկարգման գործին։

Կոլտնտեսային կարգերի հաստատումը, գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցների՝ քաշող ուժի, գործիքների հանրայնացումը, աշխատանքի կազմակերպման միանգամայն նոր սկզբունքների մշակումը, իրենց վճռական ազդեցությունն ունեցան ինչպես գյուղացու ամբողջ ապրելակերպի, այնպես էլ նրա բնակարանի և տնտեսական շենքերի տիպերի ու նրանց տնամերձ հողամասի դասավորման գործում։

Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունն արդեն որոշակի կերպով ցույց է տալիս տնամերձ տնտեսության մեծությունը և վերջին հաշվով որոշում յուրաքանչյուր շրջանում տնամերձ հողամասի կազմավորման, այնտեղ կառուցվող օժանդակ շենքերի տիպերի և մեծության հարցերը։ Այս հանգամանքն արդեն բնորոշում է սոցիալիստական գյուղի հատակագծային այս սկզբնական էլեմենտի ամբողջ կառուցվածքը և նրա ընդհանուր չափերը։ Այդ տեսակետից էլ առաջնակարգ նշանակություն է ստանում տնամերձ հողամասի հատակագծային կոմպոզիցիայի ճիշտ մշակումը, մի բան, որը ամենաէական նշանակությունը կունենա տնամերձ տնտեսության ռացիոնալ կազմակերպման և կոլտնտեսականի ու նրա ընտանիքի անդամների կենցաղի և աշխատանքի նորմալ պայմանների ստեղծման համար։ Ոչ պակաս նշանակություն ունի նաև տնամերձ հողամասերի չափերի ճիշտ ընտրությունը, որոնց գումարից էլ ստացվում են առանձին բնակելի թաղամասերի չափերը և գյուղի գրաված ընդհանուր տարածությունը։

Սովետական Հայաստանում տարբեր կլիմայական և աշխարհագրական պայմաններում տարբեր են նաև տնամերձ հողամասերի չափերը։ Կոլտնտեսային գյուղի հատակագծման ժամանակ պետք է գտնել այդ հողամասերի առավել ռացիոնալ օգտագործման ձևերը, բնակելի տունը, բակը, օժանդակ կառուցվածքները դասավորել այնպես, որպեսզի նրանք գրավեն մինիմալ տարածություն և լավ կապված լինեն միմյանց հետ։ Բնակելի տան բակի, այգու և այլ կառուցվածքների փոխադարձ դասավորության ժամանակ պետք է հաշվի առնել կոլտնտեսային գյուղացու առօրյա պահանջները և ստեղծել բոլոր հնարավորությունները, ինչպես հո-

ղամասում արդյունավետ աշխատելու, այնպես էլ հանգստանալու համար։ Այդ տեսակետից մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր աշխարհագրական ու կլիմայական գոտու բնակիչների սովորությունների և տրադիցիաների ուսումնասիրությունը, որը դժբախտաբար միշտ չէ, որ իր արտահայտությունն է գտնում կոլտնտեսային գյուղի համար նախագծված բնակարանների և տնամերձ հողամասերի հատակագծերում։

Բնակելի տան դասավորության համար կարևոր նշանակություն ունի սենյակների օրիենտացիաների ճիշտ որոշումը։ Հատուկ նշանակություն է ստանում հարթավայրային, ցածրադիր շրջանների և հատկապես Արարատյան դաշտավայրի բնակելի տների պատշգամբների դասավորությունը, որոնք փաստորեն մի փոխանցող էլեմենտ են հանդիսանում բնակելի տան ներքին պարփակ ծավալներից դեպի շրջապատի բնությունը։

Բնակարանի ընդհանուր սանիտարական դրության բարելավման և հատկապես սենյակները փողոցի փոշուց պաշտպանելու համար էական նշանակություն ունի նաև տան և փողոցի միջև ստեղծվելիք փոքրիկ ծաղկանոցը, մի երևույթ, որը այժմ աստիճանաբար ավելի ու ավելի լայն տարածում է գտնում Սովետական Հայաստանի գյուղական բնակավայրերում։ Այս առաջին հայացքից շատ փոքրիկ թվացող հանգամանքը փաստորեն սերտ կապված է գյուղացու ապրուստի սոցիալական պայմանների և կենցաղի փոփոխության հետ։ Երբ վերացավ նախասովետական շրջանի գյուղացու ընտանեկան կյանքի խիստ սահմանափակությունը, բոլոր նախադրյալները ստեղծվեցին աստիճանաբար վերացնելու նաև բնակելի հողամասը շրջապատող խուլ պատերը։

Այժմ շատ նորակառույց բնակարանների առջև բացակայում են այդ պատերը, և բնակելի տունը սովորաբար եզրափակվում է ցածր ցանկապատով։

Տնտեսական հողամասի ռացիոնալ հատակագծումը պետք է ապահովի բնակարանի, բակի և տնտեսական կառուցվածքների ազատ օդափոխումը և ինսոլյացիան։ Բնակելի տան անջատ դասավորությունը, նրա և տնտեսական կառուցվածքների միջև անհրաժեշտ տարածության պահպանումը, որն էական նշանակություն ունի բնակարանի սանիտարական դրության բարելավման համար, պետք է հանդիսանա տնամերձ հողամասի հատակագծման հիմնական գծերից մեկը։

Տնամերձ հողամասն ամբողջովին վերցրած բաժանվում է երկու հիմնական մասի.

1. Բնակելի տունը, տնտեսական բակը և օժանդակ կառույցվածքները։
2. Այգին կամ բանջարանոցը։

Առաջին մասը համեմատաբար փոքր տարածություն է գրավում և դասավորված է սովորաբար դեպի փողոց ուղղված կողմում։

Մանրամասն կանգ չառնելով այստեղ կոլտնտեսականի բնակելի տան ճարտարապետության վրա, նշենք միայն, որ բնակելի տան դասավորությունը հողամասի մի կողմում էական առավելություններ ունի կենտրոնական դասավորության նկատմամբ և հնարավորություն է տալիս ավելի ռացիոնալ կերպով օգտագործել նրա առջև ընկած հողամասը։ Բնակելի տանը կից անմիջապես դասավորվում է բակը, իսկ վերջինիս մի կողմում տնտեսական կառույցվածքները, նրանց համապատասխան տնտեսական բակով։ Այդ կառույցվածքների թե՛ քանակը և թե՛ բռնած տարածությունը իր հերթին որոշվում է կոլտնտեսականի տնամերձ տնտեսության ունեցած պահանջներով։

Տնտեսական կառույցվածքներից հիմնականներն են գոմը, մարագը, գյուղատնտեսական պարզ գործիքների պահեստը և ամառային հացատունը։ Թեև այս կառույցվածքների փոխադարձ դասավորությունը յուրաքանչյուր շրջանում որոշվում է գյուղացիների կենցաղի և հատկապես տեղական տրադիցիաների հիման վրա, այնուամենայնիվ նորակառույց գյուղերում որպես կանոն այդ կառույցվածքները պետք է դասավորվեն բնակելի սենյակներից առնվազն 15 մետր հեռավորության վրա։ Ինչպես նշվեց արդեն, բնակելի տան և օժանդակ կառույցվածքների միջև դասավորվում է բակը։ Բակը հանդիսանում է հայկական ժողովրդական բնակելի տան ամենահիմնական էլեմենտներից մեկը, որտեղ կատարվում է տնտեսական գործողությունների մեծ մասը։ Բակը կանաչապատվում է սովորաբար իր կողային մասերում, իսկ կենտրոնական մասը գրեթե միշտ մնում է ազատ։ Հաճախ բակի մի կողմով անցնում է առուն, իսկ մյուս կողմում դասավորվում է բնակելի տունը։ Բակի և տնտեսական կառույցվածքների այսպիսի դասավորությունը հնարավորություն է տալիս առավել ռացիոնալ կերպով տեղավորել տնտեսական կառույցվածքները, և տնից ու պատշգամբից հեշտությամբ հետևել բակում կատարվող գործողություններին։

Կոլտնտեսային ավանի վերահատակագծման ժամանակ լուծվում է նաև գյուղի զարգացման, նրա տերիտորիալ աճի հարցը։

Լեռնային շրջաններում բնակչության խիտ դասավորության պայմաններում միշտ չէ, որ հնարավոր է ստանալ տնամերձ հողամասերի հաջող դասավորություն և բավարարել բոլոր կոլտնտեսականներին՝ հասանելիք տնամերձ հողամասի ամբողջ մակերեսը տալով գյուղի տերիտորիայում։

Հարթավայրային շրջաններում, ընդհակառակը, լինում են դեպքեր, երբ հին գյուղի տարածությունը հատակագծումից հետո նշանակալից չափով փոքրանում է և գյուղը դառնում է կոմպակտ ու ավելի հավաքված։ Էական նշանակություն է ստանում ճանապարհների հարցը, որովհետև գյուղերի տերիտորիալ աճը սովորաբար ընթանում է գյուղական ճանապարհների ուղղությամբ։

Կոլտնտեսային ավանի հատակագծային կոմպոզիցիայի կարևոր էլեմենտներն են այն ճանապարհների ուղղությունները, որոնք ավանը կապում են շրջանային կենտրոնի, ՄՏԿ-ի, արտադրական հատվածի և մյուս գյուղերի հետ։ Եվ եթե միջգյուղային ճանապարհները ավանի հատակագծային կոմպոզիցիայում այնքան էլ էական նշանակություն չունեն, ապա կոլտնտեսային ավանի մոտով և հատկապես նրա միջով անցնող ռեսպուբլիկական նշանակություն ունեցող տրանզիտ խճուղին իր որոշակի կնիքն է դնում ավանի ամբողջ հատակագծային կոմպոզիցիայի վրա։

Հանդիպում են ավանի և տրանզիտ ճանապարհի փոխադարձ դասավորության երեք հիմնական դեպքեր։

1. Երբ ճանապարհն անցնում է գյուղից որոշ հեռավորության վրա և նրանից անջատվում է դեպի գյուղ տանող մի այլ համեմատաբար նեղ ճանապարհ։

2. Երբ ճանապարհն անցնում է գյուղի ծայրամասով։

3. Երբ ճանապարհն անցնում է գյուղի միջով։

Նշված երեք հնարավոր դեպքերից առավել հաջող լուծումը, անշուշտ, հանդիսանում է առաջինը, երբ ինտենսիվ շարժում ունեցող ճանապարհը անցնում է գյուղից դուրս, նրանից մեկից-չորս կմ հեռավորության վրա։ Ճանապարհի այսպիսի դասավորությունը առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում գյուղի հանգստի, նրա օդի մաքրության, ինչպես և դժբախտ պատահարների վերացման համար։ Այս տեսակետից շատ լավ են դասավորված Մարտունու շրջանի մի շարք գյուղեր (Զոլաքար, Վարդենիկ և այլն), որոնք գտնվում են Երևան — Բասարգեչար ինտենսիվ շարժում ունեցող

խճուղուց առնվազն երեքից-չորս կմ. հեռավորության վրա և որից այդ գյուղերն են տանում ուռենիներով երիզված առանձին ճանապարհներ։

Երկրորդ դեպքի օրինակներ են հանդիսանում Դալար, Ներքին Բազմաբերդ, Քաղսի գյուղերի դասավորությունը, որտեղ տրանզիտային խճուղին անցնում է գյուղի ծայրով։

Սակայն, քիչ չեն դեպքերը, երբ ինտենսիվ շարժում ունեցող տրանզիտային խճուղին ուղղակի անցնում է գյուղի միջով, հանդիսանալով նրա գլխավոր փողոցը (Մխչյան, Բաղրամյան, Կարբի, Քուչակ և այլն)։ Ճանապարհի այդպիսի դասավորությունը, մանավանդ, երբ նա անցնում է գյուղի հասարակական կենտրոնով, նրա հրապարակով (ինչպես, օրինակ, Ապարանում) ստեղծում է բնակավայրի ներքին կյանքի համար մեծ անհարմարություններ և անշուշտ պետք է բացասական համարվի։

Ինչպես նշվեց, ճանապարհների ցանցն իր որոշակի ազդեցությունն է ունենում կոլտնտեսային ավանի ընդհանուր հատակագծային կոմպոզիցիայի վրա։ Վերջինս տեղանքի տարբեր պայմաններում (կապված գոյություն ունեցող կառուցվածքների, գերակշռող քամիների և ճանապարհների ուղղությունների հետ) ստանում է ամենաբազմապիսի լուծումներ, որոնք ըստ իրենց երկրաչափական սխեմաների բաժանվում են հետևյալ երեք գլխավոր տարբերատեսակների։

1. Ուղղանկյուն սխեմա
2. Շառավղա-օղակային սխեմա
3. Խառը սխեմա

**1. Ուղղանկյուն հատակագծային սխեման** հնարավոր է օգտագործել հարթավայրային շրջաններում։ Այսպիսի հատակագծային կոմպոզիցիաների ժամանակ ինչպես առանձին տնամերձ հողամասերը, այնպես էլ բնակավայրի ամբողջ թաղամասերը ստացվում են ուղղանկյուն, փողոցները ուղղաձիգ և ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները, ինչպես բնակելի և հասարակական կառուցվածքների, այնպես էլ տնամերձ տնտեսությունների օժանդակ շենքերի ռացիոնալ դասավորության համար։ Սակայն, առանձնապես Հայաստանի պայմաններում, տեղանքի ընդհանուր հարթավայրային բնույթի ժամանակ էլ հողամասի առանձին մասերը հաճախ ունենում են որոշ անհարթություններ, որոնք առանձին դեպքերում կարող են դժվարություններ առաջացնել ուղղանկյուն սխեմայի անշեղորեն կիրառելու ժամանակ։

Հատակագծային այս սխեման 1935—1937 թվականներին կատարված նախագծերի մեջ նշանակալից տեղ է գրավում։ Այդ սխեմայով է կազմված Գյոդակլու գյուղի հատակագծման նախագիծը (հեղ. ճարտարապետներ Գ. Քոչար և Տ. Մարության)։ Բնակավայրը



Գյոլակլու գյուղի հատակագիծը
Հեղինակներ՝ ճարտարապետներ Գ. Քոչար և Տ. Մարության

դասավորված է մագիստրալ խճուղուց դեպի հյուսիս-արևելք, և վերջինիս հետ կապվում է մեկ լայն և երկու համեմատաբար նեղ փողոցներով, որոնք բոլորն էլ հատվում են խճուղու վրա նախատեսված փոքրիկ հրապարակում։ Կենտրոնական լայն, ծառազարդ

*փողոցը անմիջականորեն կապում է խճուղին բնակավայրի հասարակական կենտրոնի հետ, իսկ մյուս երկու շառավղային դասավորություն ունեցող ուղիները տանում են դեպի ավանի բնակելի թաղամասերը։*

*Բնակավայրի հասարակական կենտրոնը կազմավորված է կիսաշրջանաձև հրապարակի շուրջը տեղավորված շենքերով, որոնց մեջ թե իր ընդհանուր ծավալով, և թե հրապարակի նկատմամբ իր ունեցած դասավորությամբ աչքի է ընկնում գյուղի առավել նշանակալից կառուցվածքը՝ ակումբը։ Նրան անմիջապես կից տեղավորված է կուլտուրայի և հանգստի պարկը, որի մի օրգանական մասն էլ կազմում է ստադիոնը։ Գյուղի կենտրոնից ոչ հեռու, հատուկ կանաչապատ տարածությունների մեջ տեղավորված են դպրոցի, մանկապարտեզի և մանկամսուրի շենքերը, իսկ բնակավայրի հարավ-արևմտյան ծայրամասում, դարձյալ իրեն հատկացված տերիտորիայի մեջ՝ գյուղական հիվանդանոցը։*

*Բնակելի թաղամասերը կոմպակտ են և լավ մշակված, թեև դժվար է համաձայնվել այն բանի հետ, որ բնակավայրի համարյա թե բոլոր բնակելի տները, բացառությամբ թաղամասերի անկյուններում դասավորված տներից, արված են զուգակցված։ Այս հանգամանքը որոշ միօրինակություն է տալիս գյուղին, և հակասում է կոլտնտեսականների ձգտումներին՝ կառուցել առանձին մենատներ։ Բնորոշ է հեղինակների չարդարացված ձգտումը՝ պահպանել սիմետրիան նույնիսկ ամենափոքր, երկրորդական էլեմենտներում։ Այսպես, եթե բնակավայրի հատակագծի որոշ կտրտվածությունը նրա հյուսիս-արևմտյան մասում լիովին բացատրվում է տեղանքի պայմաններով, ապա ոչ մի բանով արդարացված չէ նույն ձևի կրկնումը գյուղի հարավ-արևելյան մասում։ Նույն դրույթներից ելնելով է, որ հեղինակները միանգամայն արհեստականորեն բաժանել են կոլտնտեսության արտադրական հատվածը երկու մասի, մեկը տեղավորել գյուղի մի ծայրում, իսկ մյուսը՝ մյուս ծայրում։ Սիմետրիկ գծագիր ստանալու այս անիմաստ ձգտումը նկատվում է 1935—1937 թթ. նախագծված շատ գյուղերի հատակագծերում։*

*Էական թերություն է հանդիսանում այդ շրջանում մշակված մի շարք նախագծերի մեջ քաղաքին հատուկ ձևերի մեխանիկական կիրառումը, երբ գյուղական բնակավայրում նախատեսվում էին կլոր կամ էլիպսաձև հրապարակներ, լայն մագիստրալներ։ Սխալ էր նաև ամեն թաղամասում հատուկ փողոցների նախագծումը անասունների համար։ Այս բոլորը բերում էր գյուղի տերիտորիայի*

միանգամայն չբացատրված ուռճացմանը։ Պատահական չէր, որ նման նախագծերի մեծ մասը որպես ոչ ռացիոնալ և էկոնոմիկ կամ մնում էր թղթի վրա, և կամ թե չէ մեծ փոփոխությունների ենթարկվում իրականացման ժամանակ։




Ֆանտան գյուղի հատակագիծը
Հեղ. ճարտ. Ռ. Գրիգորյան

Ուղղանկյուն կոմպոզիցիա ունի նաև Ֆանտան (Ախտայի շըրջան) գյուղի հատակագծման նախագիծը (Հեղ. ճարտ. Ռ. Գրիգորյան), որտեղ բնակավայրի փողոցների ուղղությունը հիմնականում թելադրված է գյուղի տերիտորիայով անցնող Երևան — Սևան մագիստրալ խճուղու ուղղությամբ։ Այստեղ հետպատերազմյան տարիներին ինքնակամ կերպով կատարվել են էական փոփոխություններ. այսպես և՛ ակումբի, և՛ կոլվարչության շենքերը, փոխանակ գյուղի հասարակական կենտրոնը հանդիսացող հրապարակի վրա կառուցելու, կառուցված են ինտենսիվ շարժում ունեցող խճու-

ղու երկայնքով, մի բան, որը իհարկե չի կարելի հաջող լուծում համարել։

Ուղղանկյուն հատակագծային սխեմա ունեն վերաբնակեցված կոլտնտեսականների համար հետպատերազմյան տարիներին կառուցված մի շարք ավաններ, որոնք հիմնվել են նոր հողերում, և կառուցվել միանգամից, մի բան, որը էական առավելություններ ունի այդ ավանների ճարտարապետության միասնականության տեսակետից։ Տեղանքի համեմատաբար միօրինակ և մեծ մասամբ հարթ ռելյեֆը հնարավորություն է տվել օգտագործելու հատակագծային ուղղանկյուն սխեման, որոնցից կարելի է նշել Արաքս, Սուրենավան, Արմաշ, Մաստարա, Սովետական, Կարմրաշեն ավանները։

Սուրենավանը կառուցված է Երևան — Նախիջևան ռեսպուբլիկական նշանակություն ունեցող խճուղու մոտ, որոշ թեքությամբ դեպի հյուսիս բարձրացող տեղանքում, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան ուղղությամբ փչող գերակշռող քամիների պայմաններում։ Հեղինակին (ճարտ. Ս. Կարապետյան) հաջողվել է օգտագործելով ուղղանկյուն սխեման, ստանալ թաղամասերի հասարակական կենտրոնի և փողոցների փոխադարձաբար հաջող դասավորություն, ըստ որում բնակելի թաղամասերը հաջող կերպով կապված են արտադրական հատվածի հետ, որն իր հերթին գտնվելով մագիստրալ խճուղուց ոչ հեռու, զգալի առավելություններ ունի կոլտնտեսության կողմից մշակվող հողերի հետ կապ պահպանելու տեսակետից։ Ավանը խճուղուց անջատվում է 70 մ. լայնություն ունեցող կանաչապատ գոտով, որը լիովին բավարար է պաշտպանելու նրան խճուղու աղմուկից և փոշուց։ Տեղանքի դեպի հյուսիս ուղղված ոչ մեծ թեքությունը, ապահովում է տնամերձ հողամասերի ոռոգումը, մի հանգամանք, որը Արարատյան դաշտի բնակավայրերի համար ունի առաջնակարգ նշանակություն։ Ավանի երկու միմյանց նկատմամբ փոխուղղահայաց փողոցները կազմում են այն կոմպոզիցիոն ցանցը, որոնց շուրջը, նրանց ուղղահայաց և զուգահեռ, դասավորված են թաղամասերը և բոլոր երկրորդական փողոցները։ Առաջին փողոցը, որը ձգվում է արևելքից-արևմուտք և անցնում ամբողջ ավանի երկարությամբ, կապում է գյուղի կենտրոնը բնակելի թաղամասերի արտադրական հատվածի հետ։ Մյուս փողոցը փոխուղղահայաց լինելով առաջինին, սկսվում է գյուղի կենտրոնում դասավորված հրապարակից և ձգվում մինչև մագիստրալ խճուղին։ Նշված հրապարակի հյուսիսային մասում դասավորված



Սուրենավան կոլտնտեսային ավանի հատակագիծը
Հեղ. ճարտ. Ս. Կարապետյան



*Մաստարա կոլտնտեսային ավանի հատակագիծը*

*Հեղ. ճարտ. Ռ. Գրիգորյան*

է ակումբը, իսկ նրանից էլ ավելի հյուսիս՝ կուլտուրայի և հանգստի պարկը։

Ճիշտ ուղղանկյուն հատակագծային կոմպոզիցիան սովորաբար հեշտությամբ կիրառվում է նորակառույց ավաններում, մինչդեռ հին գյուղերի վերակառուցման նախագծերում արդեն գոյություն ունեցող ճանապարհների, բնակելի տների, մագիստրալ ջրանցքների ուղղությունները հաճախ որոշիչ են հանդիսանում նախագծի մշակման հարցում և ստիպում հրաժարվել ուղղանկյուն կոմպոզիցիայից։



Արաքս կոլտնտեսային ավանի հատակագիծը
Հեղ. ճարտ. Է. Պապյան

Բայց և այնպես, այսպիսի նախագծերում ևս որոշ դեպքերում հնարավոր է լինում ստանալ եթե ոչ ամբողջ գյուղի սահմաններում, ապա նրա առանձին հատվածների վրա թաղամասերի ուղղանկյուն դասավորություն։ Այդ տիպի նախագծերից նշենք Արմավիր (Հոկտեմբերյանի շրջան) գյուղի հատակագծման նախագիծը (ճարտ. Ս. Ասոյան)։ Բնակավայրը դասավորված է տեղանքի տեսակետից համեմատաբար հանգիստ ռելյեֆի վրա, նրա տերիտորիան հարավից, մասամբ էլ հյուսիսից ու արևմուտքից սահմանափակում են ոռոգիչ ջրանցքները, որոնց ուղղությունները էլ էական նշանակություն են ունեցել, ամբողջ գյուղի տերիտորիայի կազմավորման հարցում։



Արմաշ կոլտնտեսային ավանի հատակագիծը
Հեղ. ճարտ. Հ. Իսաբեկյան



Կարմրաշեն կոլտնտեսային ավանի հատակագիծը

Հեղ. ճարտ. Փ. Մանուկյան

*Հատակագծային կոմպոզիցիայի հիմնական առանցքն է դեպի շրջանային կենտրոնը տանող խճուղին, որը և միաժամանակ հանդիսանում է գյուղի գլխավոր փողոցը։ Հեղինակը ձգտելով պահպանել արդեն գոյություն ունեցող փողոցները և քիչ թե շատ արժեք ունեցող բնակելի տները, ճիշտ է վարվել, պահպանելով ինչպես այժմյան գլխավոր փողոցի ուղղությունը, այնպես էլ գյուղի հասարակական կենտրոնի որոշ էլեմենտները, մանավանդ, որ վերջինս դասավորված է գյուղի երկրաչափական կենտրոնում, նրա առավել նշանակալից ճանապարհների խաչմերուկում։*



*Վերին Արտաշատ գյուղի հատակագիծը*
*Հեղինակներ՝ ճարտարապետներ Գ. Քոչար, Տ. Մարության*

2. **Շառավղա-օղակային** *սխեման կոլտնտեսային ավանների հատակագծման նախագծերում կիրառվում է համեմատաբար ավելի հազվադեպ, որովհետև նրա օգտագործումը պետք է որոշակի կերպով պայմանավորված լինի տեղի համապատասխան ռելյեֆով։ Սակայն չնայած դրան, այս կոմպոզիցիան էական տեղ է գրավում 1935—1937 թթ. կատարված նախագծերի մեջ, և միշտ չէ, որ նրա առկայությունն արդարացված է տեղանքի պայմաններով։ Այսպես, այդ կոմպոզիցիան ունի Արտաշատի շրջանի Վերին Արտաշատ գյուղի հատակագծման նախագիծը (հեղ. ճարտարապետներ Գ. Քոչար, Տ. Մարության)։ Այստեղ բնակավայրի կենտրոնական մասը լուծված է շրջանաձև, և շառավիղային դասավորություն ունեցող փողոցները կապում են բնակելի թաղամասերը կենտրոնական, դարձյալ շրջանաձև հրապարակի հետ, որի գլխավոր առանցքի վրա էլ կառուցված է ակումբը (հեղ. ճարտ. Գ. Թամանյան)։ Այստեղ կան որոշ թերություններ, որոնցից նշենք շրջագծային և ուղղանկյուն թաղամասերի ոչ օրգանական կապը, կուլտուրայի և հանգստի պարկի խիստ մասնատվածությունը, երբ այն փաստորեն կազմված է կա-*

*նաշի մի շարք մանր «կղզիներից»՝ դասավորված հրապարակի շուրջը և անջատված միմյանցից գյուղական փողոցներով։ Նույնպես չի կարելի համաձայնվել արտադրական կենտրոնի տեղավորման հետ, որը կպած է բնակելի թաղամասերին, իսկ մի մասն էլ մտել է վերջիններիս մեջ։*



***Խաթունարխ գյուղի հատակագիծը***
***Հեղ. ճարտ. Տ. Մարության***

*Շառավղային կոմպոզիցիայի մի այլ, յուրահատուկ օրինակ է հանդիսանում Ն. Խաթունարխ գյուղի հատակագծման նախագիծը, կազմված ֆորմալիստական «իդեալական քաղաքների» սկզբունքով (ճարտ. Տ. Մարության)։*

Այստեղ ամբողջ բնակավայրը արհեստականորեն պարփակված է հնգանկյան մեջ, որի կենտրոնում տեղավորված շրջանաձև հրապարակը շառավղային դասավորություն ունեցող փողոցների միջոցով կապվում է բնակելի թաղամասերի և արտադրական հատվածի հետ, վերջինս դարձյալ, միանգամայն արհեստական ձևով պարփակված է հնգանկյան արևելյան թևի մեջ։ Պատահական չէ, որ այսպիսի ֆորմալիստական նախագծերը մերժվեցին կյանքի կողմից և մնացին թղթի վրա։



Սամաղար գյուղի հատակագիծը
Հեղ. ճարտ. Տ. Մարության

Համեմատաբար հաջող են այն նախագծերը, որոնք մշակված են ավելի ազատ սխեմայով և որտեղ ավելի խորն է ուսումնասիրված և հաշվի առնված տեղական կոնկրետ պայմանները։ Նշենք Հոկտեմբերյանի շրջանի մի շարք գյուղերի, ինչպես և էջմիածնի շրջանի Սամաղար գյուղի հատակագծման նախագծերը (ճարտ. Տ. Մարության), որտեղ հեղինակը կարողանալով պահպանել գոյություն ունեցող հիմնական ճանապարհների ուղղությունները, մշակել է նշված բնակավայրի ընդհանուր առմամբ հաջողված հատակագծային կոմպոզիցիան, թեև այստեղ ևս որոշ չափով դրսևորվում է սիմետրիկ գծագիր ստանալու ձգտումը։ Այսպես, բնավ չի համոզում Սամաղարի հրապարակը ձևավորող հինգ մեծածավալ շենքերի անհրաժեշտությունը, ինչպես նաև վիճելի է կուլտուրայի

և հանգստի պարկի խիստ ձգվածությունը և նրա անջատումն ակումբից, մի բան, որը հատկապես անթույլատրելի է Արարատյան դաշտավայրում դասավորված բնակավայրերում, որտեղ ակումբային շատ միջոցառումներ ամռան ամիսներին կազմակերպվում են գրոսայգում։

Հատակագծային այս սխեմայի օգտագործման մի այլ օրինակ է հանդիսանում Արտենի ավանի հատակագծման նախագիծը (հեղ. ճարտ. Փ. Մանուկյան), որտեղ միմյանց հետ հաջող կերպով զուգակցված են շառավղային և ուղղանկյուն սխեմաները։ Ավանից ոչ հեռու անցնող երկաթգծին և խճուղուն զուգահեռ դասավորված են ավանի ուղղանկյուն թաղամասերը, որոնցից դեպի հարավ-արևմուտք տեղավորված են շրջագծային դասավորություն ունեցող թաղամասերը։ Տեղանքը, որը որոշ թեքությամբ իջնում է դեպի հարավ-արևմուտք, ստեղծում է ավանի կենտրոնական մասում մի բլրանման բարձրություն, որի վրա էլ տեղավորված են ավանի հասարակական կենտրոնը և կուլտուրայի ու հանգստի պարկը։ Հրապարակից դեպի արևմուտք և դեպի հարավ ձգվում են շառավղային փողոցները, որոնք հարավ-արևմտյան մասում տեղավորված թաղամասերը կապում են ավանի կենտրոնի հետ։

3. **Խառը հատակագծային սխեման** իրենից ներկայացնում է նախորդ կոմպոզիցիոն տիպերից մի քանիսի զուգակցումը և հանդիսանում այն ձևը, որն առավել մեծ հնարավորություններ է տալիս հատկապես տեղանքի բարդ պայմաններում դասավորված գյուղերի վերահատակագծման ժամանակ։

1935—1937 թթ. ընթացքում կատարված նախագծերում կարելի է հանդիպել ուղղանկյուն և շառավղային կոմպոզիցիաների զուգակցման այլ օրինակների։ Այսպես են Փարաքարի (ճարտ. Մ. Մազմանյան). Նոր գյուղի (ճարտ. Մ. Մազմանյան), Ցրանգանոցի, Ջառի, Այգեստանի, Հոկտեմբերի (հեղ. ճարտ. Տ. Մարության) հատակագծման նախագծերը, որտեղ հիմնականում ուղղանկյուն կոմպոզիցիայի հետ մեկտեղ էական տեղ է գրավում ինչպես փողոցների ազատ դասավորությունը, այնպես էլ շառավղային կոմպոզիցիան։ Այս տեսակետից անհրաժեշտ է նշել Փարաքարի հատակագծման նախագիծը, որտեղ բնակելի թաղամասերի գերակշռող մեծամասնությունը, ձգված Երևան — Էջմիածին մագիստրալ խճուղու ուղղությամբ, ունի ուղղանկյուն դասավորություն, իսկ կենտրոնական մասը, որտեղ տեղավորված է հասարակական կենտ-



*Արտենի կոլտնտեսային ավանի հատակագիծը*

*Հեղ. ճարտ. Փ. Մանուկյան*

րոնը, կուլտուրայի և հանգստի պարկը ու մի քանի բնակելի թաղամասեր, մշակված է շառավղային կոմպոզիցիայի հիման վրա։

Ուղղանկյուն և շառավղային կոմպոզիցիաների յուրահատուկ զուգակցում տեսնում ենք Ֆրանգանոց և Ջառ գյուղերում, որտեղ



Ֆրանգանոց գյուղի հատակագիծը
ճեղ. ճարտ. Տ. Մարության

յուրաքանչյուր դեպքում, ելնելով տեղանքի կոնկրետ պայմաններից և հատկապես պահպանված ճանապարհների ուղղություններից, հեղինակը կարողացել է ստանալ հետաքրքիր լուծումներ։ Սակայն, եթե շառավղային կոմպոզիցիան լիովին արդարացված է Ֆրանգանոցում և Ջառում, ապա նույն բանը չի կարելի ասել Այգեստանի

գյուղի հատակագծման նկատմամբ, որի երկու կողմերում արված շառավղային փողոցները բնավ չեն թելադրվում տեղանքի կոնկրետ պայմաններից և կամ հատակագծման նախագծի բուն էությունից։



Նկ. 15. Շահնազար գյուղի հատակագիծը
հեղ. ճարտ. Ս. Կարապետյան

Խառը կոմպոզիցիան առավել հաճախ հանդիպում է լեռնային գյուղերում։ Նշենք Շահնազար (Կալինինոյի շրջան) գյուղի հատակագծման նախագիծը (ճարտ. Ս. Կարապետյան)։ Տեղանքի խիստ կտրտվածությունը, գյուղական ոլորապտույտ ճանապարհները, ամֆիթատրոնի տեսք ունեցող լեռնալանջի վրա դասավորված հին գյուղի տերիտորիան, այնտեղ գոյություն ունեցող մի շարք արժեքավոր, լավ կառուցված բնակելի տների հետ մեկտեղ ստիպել են հեղինակին բնակելի թաղամասերի նշանակալից մասի մշակման ժամանակ հրաժարվել ուղղանկյուն սխեմայից և մշակել նրանց ավելի ազատ, ելնելով տեղանքի կոնկրետ պայմաններից։ Խառը հատակագծային սխեմայի մի օրինակ է հանդիսանում Մեհմանդար ավանի հատակագծման նախագիծը (հեղ. ինժ. Վ. Եղիազարյան)։



Մեհմանդար կոլտնտեսային ավանի հատակագիծը
Հեղ. ինժ. Վ. Եղիազարյան

Այստեղ ավանի հատակագծային կոմպոզիցիայի վրա իր որոշակի ազդեցությունն է ունեցել ավանի տերիտորիայով հոսող գետակը և ավանից ոչ հեռու անցնող ջրանցքների ուղղությունները և ավանը հատող խճուղին։ Ավանի տերիտորիայում եղած գրունտային ջրերի հեռացման համար նախատեսված են հատուկ միջոցառումներ, իսկ ավանով անցնող գետակի հունը նախատեսված է վերցնել կանաչ գոտու մեջ։ Ավանի հատակագծային կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսանում է հրապարակը, որի առանցքի վրա դրված ակումբին ուղղահայաց ձգվում է գլխավոր փողոցը։ Այս փողոցին ուղղահայաց դասավորված է մյուս հիմնական փողոցը, որն իրենից ներկայացնում է տրանզիտային խճուղու ավանի միջով երեք բեկյալ հատվածներով անցնող մի հատված։

Խառը կոմպոզիցիայի օրինակ է նաև Արգավանդ գյուղի հատակագիծը (հեղ. ճարտարապետներ Ց. Արաբյան, Ա. Նալբանդյան)։ Այստեղ ևս բնակավայրի հատակագծի կազմավորման վրա իրենց ազդեցությունն են ունեցել գյուղի տերիտորիայով անցնող ոռոգիչ ջրանցքների և արդեն գոյություն ունեցող ճանապարհների ուղղությունները։

Գյուղը շրջանային կենտրոնի հետ կապող խճուղու ուղղությունը նախագծում պահպանվել է համարյա թե ամբողջությամբ։ Խճուղուց հյուսիս-արևելք դասավորված ոռոգիչ ջրանցքների ուղղությունն էլ իր հերթին որոշիչ է հանդիսացել բնակավայրի այս մասի փողոցների դասավորության համար, որոնք սահուն կորագծով միանում են բնակավայրի հարավ-արևմտյան մասի փողոցներին։ Հեղինակներին հաջողվել է ստանալ փողոցների այնպիսի դասավորություն, որոնք հաջող կերպով կապում են բնակելի թաղամասերը ինչպես հասարակական կենտրոնի, արտադրական հատվածի, այնպես էլ գյուղը շրջապատող այգիների հետ։ Առանձին առարկություններ չեն առաջացնում մանկապարտեզի, մանկամսուրի, բաղնիքի, բուժ. կայանի դասավորությունները, որոնց տեղաբաշխումը թե՛ նրանց հատկացված առանձին հողամասերում, թե՛ գյուղի ամբողջ տերիտորիայում կարելի է ընդունելի համարել։

Այսպիսով, կոլտնտեսային ավանների այսքան տարբեր հատակագծային սխեմաների գոյությունը, որոնց օգտագործումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է տեղի կոնկրետ պայմաններով, վկայում է այն մասին, որ վերջիններիս նույնիսկ մասնակի անտեսումը կարող է հասցնել այնպիսի սխալների, որոնք, ինչպես



Արգավանդ գյուղի հատակագիծը
Հեղինակներ՝ ճարտարապետներ Ց. Արաքյան, Ս. Նալբանդյան

նշվեց, տեղ են գտել հատկապես 1935—1937 թվականներին կատարած մի շարք նախագծերում։

Կոլտնտեսային ավանի հատակագծային սխեմայի հիմնական, որոշիչ հանդիսացող տեղական պայմանների մեջ էլ միշտ կան մեկ կամ երկու տնտեսական առաջատար նշանակություն ունեցող գործոններ, որոնց հետ համակերպվում են մնացած բոլոր տվյալները և որոշ չափով ենթարկվում նրանց։

Մի դեպքում, հիմնական գործոն է տեղանքը, մյուս դեպքում՝ ավանով անցնող ջրանցքներն ու մագիստրալ ճանապարհը, գոյություն ունեցող կապիտալ կառուցվածքները և այլն։ Այս տեսակետից էլ հատակագծային սխեմայի ընտրությունը միշտ կապված է տեղական կոնկրետ պայմանների հետ, թելադրված կոլտնտեսականների համար ինչպես արտադրական, այնպես էլ կուլտուրական կյանքի համգստի համար համապատասխան պայմաններ ստեղծելու ձգտումից։ Այս կապակցությամբ ևս անհրաժեշտ է նշել ժողովրդական ճարտարապետության դարավոր փորձի խոր և մանրամասն ուսումնասիրության և նրա մեջ կուտակված պրոգրեսիվ էլեմենտների օգտագործման անհրաժեշտությունը։ Ճիշտ է, ժողովրդական ճարտարապետության հիմնական էլեմենտները մշակվել են դեռևս ֆեոդալական հասարակարգի ընդերքում և իրենց հիմնական սկզբունքներով տարբերվում են կոլտնտեսային գյուղի այսօրվա պահանջներից, սակայն որոշ հարցերում (բնակելի տների որոշ ձևերը, գյուղերի տեղերի ընտրությունները, բնակելի թաղամասերի և տրանսպորտային ուղիների փոխադարձ դասավորությունը և այլն) կարող են շատ հետաքրքիր նյութեր տալ այսօրվա կոլտնտեսային գյուղի ճարտարապետական հարցերի ռացիոնալ մշակման համար։

Բացի այդ, անպայման պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Սովետական իշխանության տարիներին ժողովրդական ճարտարապետության մեջ տեղի են ունեցել նշանակալից փոփոխություններ և հատկապես այս վերջին տարիների կառուցողական փորձն է, որ առավել հետաքրքիր նյութեր կարող է տալ։

Ժողովրդական ճարտարապետության խորն ուսումնասիրությունը՝ զուգակցված սովետական ճարտարապետության քաղաքաշինարարական սկզբունքների հետ, հնարավորություն կտա ստեղծել կոլտնտեսային գյուղի այնպիսի հատակագծեր, որոնք լիովին հարազատ կլինեն տեղական պայմաններին, ժողովրդի սովորություններին ու տրադիցիաներին, կլինեն հարմար, բարեկարգ և

միաժամանակ կբավարարեն կոլտնտեսային գյուղի այսօրվա բոլոր պահանջներին։

Կոլտնտեսային որոշ նորակառույց ավաններ իրենց հատակագծային կոմպոզիցիաներով շատ քիչ բանով են տարբերվում միմյանցից, իսկ տիպային բնակելի տների անհաջող օգտագործումը (երբ ավանը կառուցվում է ընդամենը 1—2 տիպի շենքերով) բնակավայրը դարձնում է տաղտկալի, տխուր և անհրապույր։ Մինչդեռ տիպային նախագծերի ճիշտ օգտագործումը ընձեռում է բոլոր հնարավորությունները փողոցների լիարժեք ճարտարապետական կառուցապատման համար։ Ընդսմին պետք է միշտ հիշել, որ ինչքան խորն են ուսումնասիրված տեղական պայմանները, այնքան կոլտնտեսային ավանի հատակագծային սխեման հարազատ կլինի տվյալ շրջանին, և յուրաքանչյուր ավան կունենա իր դեմքն ու սպեցիֆիկան, ավանները չեն կրկնի միմյանց, չեն լինի միօրինակ ու տաղտկալի, մի բան, որ նկատվում է մինչև այժմ կառուցված նոր կոլտնտեսային որոշ ավաններում։

Կոլտնտեսային ավանների հատակագծման ամենապատասխանատու էտապներից մեկն է նախագծի իրականացումը տեղում, մի բան, որը ինչպես ցույց է տալիս գյուղական բնակավայրերի շինարարության պրակտիկան, միշտ չէ, որ հաջող է կատարվում։ Որոշ տեղերում այնքան խիստ խախտումներ են լինում (սա վերաբերում է և՛ հասարակական և՛ արտադրական շենքերի կառուցումներին), որ լիովին խախտվում է հատակագծային ամբողջ կոմպոզիցիան։

Այս տեսակետից անհրաժեշտ է նշել Ստեփանավանի շրջանի Շահնազար գյուղը, որտեղ, չնայած հատակագծման նախագծի առկայությանը, վերջին մի քանի տարում կոլտնտեսականների մոտ 50 նոր բնակելի տներից և ոչ մեկը չի կառուցված ըստ հատակագծման նախագծի։ Այդ ծավալուն շինարարությունը, որը կատարվել է քանդված տների տեղում, փաստորեն «ամրացրել» է գյուղի հին, խառնիխուռն ու քաոսային հատակագիծը և հետաձգել գյուղի բարեկարգումը։

Այս ամենը վկայում է գյուղական բնակավայրերի շինարարության նկատմամբ ճարտարապետական վերահսկողություն սահմանելու առաջնակարգ անհրաժեշտության մասին։

Միաժամանակ պետք է նշել, որ 1935—1937 թթ. ընթացքում կատարված նախագծերի մեծագույն մասը նշանակալից փոփոխությունների են ենթարկվել և այժմ շատ տեղերում բնավ հնարավոր չէ նրանց ճիշտ պահպանումը և անհետաձգելի անհրաժեշտություն

է դարձել այդ նախագծերի վերանայումը, ուղղումը և համարբեցումը կյանքի նոր պահանջներին և պայմաններին։ Կան դեպքեր, երբ խախտումներն այնքան մեծ են, որ հին նախագծերը արդեն համարյա թե լրիվին կորցրել են իրենց արժեքը։ Այսպես, Հոկտեմբեր գյուղում հետպատերազմյան տարիներին կառուցված ակումբը տեղավորված է ոչ թե նախագծով նախատեսված կենտրոնական հրապարակի վրա, այլ երկրորդական, ճանապարհների խաչմերուկից ստացված հրապարակում։ Դրանով իսկ խախտվել է ամբողջ հատակագծային կոմպոզիցիան, որովհետև բնակելի թաղամասերի գերակշռող մեծամասնությունը կառուցված է համապատասխան 1937 թ. կազմված նախագծի. իսկ հասարակական կենտրոնը այժմ պետք է նորից համարբեցվի արդեն հիմնականում գոյություն ունեցող թաղամասերին։ Պարզ է, որ այս պայմաններում շատ դժվար է, եթե ոչ անհնարին, գտնել մի նոր, լիարժեք ճարտարապետական լուծում։

Նմանապես ոչ մի բանով չի կարելի արդարացնել գյուղական բաղնիքի կառուցումը բնակավայրի կենտրոնական հրապարակում, նորակառույց ակումբից ոչ հեռու, ինչպես այդ կարելի է տեսնել Արտաշատի շրջանի Վերին Արտաշատ գյուղում։ Նման փաստերը դժբախտաբար եզակի չեն և վկայում են այն մասին, որ գյուղական բնակավայրերում կատարվող շինարարության վերահսկողության բացակայությունը ինչքան մեծ վնասներ կարող է հասցնել, և ինչքան նոր աշխատանք կպահանջվի թույլ տրված սխալներն ուղղելու համար։

* *

Աստիճանաբար ավելի ու ավելի են ընդարձակվում գյուղական զբոսայգիների և ֆիզկուլտ հրապարակների ցանցը, որոնք սովորաբար դասավորված են ակումբային շենքերից ոչ հեռու, լայն հնարավորություններ են ստեղծում ֆիզիկական կուլտուրայի զարգացման և ամռան ամիսներին ակումբային շատ միջոցառումները այնտեղ փոխադրելու համար։ Որպես լավ օրինակներ նշենք Ոսկեվազի, Անաստասավանի զբոսայգիները, որոնց ստվերախիտ ծառուղիները, իրոք որ, հարմար վայրեր են հանդիսանում կոլտնտեսականների հանգիստը և ժամանցը կազմակերպելու համար։

Անաստասավանի զբոսայգին դասավորված է գյուղի կենտրոնում, ակումբին անմիջապես մոտ և վերջինիս գլխավոր մուտքը

*բացվում է ուղղակի պարկի առջև։ Պարկի լայն ծառուղիները, տաղավարներն ու արձանները, հարուստ, փարթամ բուսականությունը, բազմերանգ ծաղիկները հիանալի տպավորություն են թողնում։ Պարկից ոչ հեռու տեղավորված է ֆուտբոլի հրապարակը իր վազքի ճանապարհով, վոլեյբոլի և բասկետբոլի հրապարակներով, որտեղ հաճախ կազմակերպվում են սպորտ մրցումներ։ Պարկի կենտրո-*



***Անաստասավանի զբոսայգին***

*նում դասավորված է «Պատվո տախտակը», որտեղ սիստեմատիկորեն նշվում են գյուղատնտեսական արտադրության պլանների կատարման արդյունքները։ Պարկը հանդիսանում է կոլտնտեսականների հանգստի ամենասիրած վայրերից մեկը և այն հանգամանքը, որ այն տեղավորված է անմիջապես ակումբին մոտ, հնարավորություն է տալիս ակումբային մի շարք միջոցառումներ անցկացնել այնտեղ։ Այս հաջող օրինակների կողքին կան բազմաթիվ գյուղեր (հատկապես Սևանի ավազանի, Ախուրյանի, Աղինի. Թալինի, Կոտայքի շրջաններում), որտեղ բացակայում են գյուղական զբոսայգիները և անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվում գյուղերի կանաչապատման և բարեկարգման գործը։ Այս բանը անշուշտ էական թերություն է հանդիսանում և գյուղական բնակավայրերի կանաչապատումը, որը կարևոր նշանակություն ունի կոլտնտեսականների*

կենցաղի և աշխատանքի պայմանների բարելավման համար պետք է մշտապես զոնվի տեղական օրգանների ուշադրության կենտրոնում։

* * *

Կոլտնտեսային գյուղի ճարտարապետության հետ որոշ չափով առնչվում են նաև մեքենատրակտորային կայանների և սովխոզային ավանների հատակագծման և շինարարության խնդիրները։ Նպատակ չունենալով այստեղ հանգամանորեն կանգ առնել այդ հարցերի վրա, որոնք առանձին վերցրած կազմում են մի այլ, շատ կարևոր թեմա, մենք բավարարվում ենք միայն նշելով մի քանի հատկանշական գծերը։

Այն հսկայական խնդիրները, որոնք դրված են այժմ մեքենատրակտորային կայանների առջև ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի 1953 թ. Սեպտեմբերյան և 1954 թ. Փետրվար-մարտյան պլենումների որոշումներում, երբ ՄՏԿ-ները կոչված են ամեն կերպ բարձրացնելու գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը կոլտնտեսություններում, ապահովելու անասունների հանրային հոտի գլխաքանակի և մթերատվության բարձրացումը, միաժամանակ, թելադրում է ՄՏԿ-ում կատարվող ամբողջ շինարարության արմատական վերակառուցումը և վերջինիս համարմարեցումը նրանց առջև դրված նոր խնդիրներին։

Սովետական Հայաստանի պայմաններում մեքենատրակտորային կայանի հիմնական արտադրական շինությունը դա մոտ 7000 խոր. մետր ծավալ ունեցող վերանորոգման արհեստանոցի շենքն է, որից ոչ հեռու սովորաբար հիմնվում են մի շարք այլ արտադրական կառուցվածքներ (շենքեր մեքենաների պահպանման համար, պահեստներ, նավթաբազա և այլն)։

Սեպտեմբերյան պլենումի որոշումների համաձայն այժմ ՄՏԿ-ների տրակտորների քանակի ավելացման հետ մեկտեղ, ավելանալու է կայանի գրաված հողամասի տարածությունը և արտադրական ու բնակելի շենքերի քանակը։ Այնտեղ կառուցվելու են գարաժներ, հյուսնական արհեստանոց, սղոցարան, էներգետիկ կենտրոն և այլ անհրաժեշտ, անմիջական արտադրության հետ կապված շենքեր։ Նշանակալից չափով ավելանալու է նաև ՄՏԿ-ներում աշխատող մասնագետների, մեխանիզատորների, նրանց համար կառուցվող բնակարանների թիվը։ ՄՏԿ-ները ապագայում

կդառնան բարեկարգ ավաններ, մինչև 1000 մարդ բնակչությամբ։

Մեքենատրակտորային կայանների շինարարության այս նշանակալից ծավալը հնարավորություն կտա այնտեղ ստեղծել ճարտարապետական ուշագրավ անսամբլներ՝ իրենց յուրահատուկ արտադրական կառուցվածքներով և բնակելի մասով։ ՄՏԿ-ների շի-



Արտաշատի ՄՏԿ-ի ընդհանուր տեսքը

նարարության գծով մեզ մոտ կուտակված է շինարարական մեծ փորձ։ Ռեսպուբլիկայում մինչև այժմ կառուցված է արդեն 40 մեքենատրակտորային կայան, որոնց թվում քիչ չեն բարեկարգ արտադրական և բնակելի շենքեր ունեցող կոմպլեքսներ։

Որոշակի նվաճումների կողքին կան նաև էական թերություններ, որոնք ակնհայտ դժվարություններ են ստեղծում առօրյա աշխատանքի պրոցեսում։

Այդ թերություններից մեկը դա մեզ մոտ տեղ գտած, այսպես կոչված «կրճատ անվանացանկով» ՄՏԿ կառուցելու արատավոր պրակտիկան էր, երբ ՄՏԿ-ների անհրաժեշտ օբյեկտների ցանկից հանվում էին այնպիսի էական կառուցվածքներ, ինչպիսիք էին նավթա-բազան, մանկամսուրը, մանկապարտեզը, ակումբը, կրճատվում էր արտադրական շենքերի թիվը, որոշ տեղերում չէին կառուցվում անհրաժեշտ քանակությամբ բնակելի շենքեր և այլն։

Այս հանգամանքը կանխորոշում էր ամբողջ ՄՏԿ-ների տեղա-

վորումը շատ ավելի պակաս մակերես ունեցող հողամասերում, քան այն անհրաժեշտ էր լինում կայանի նորմալ գործունեության համար։ Այսպես, օրինակ՝ Սպիտակի, Շամշադինի, Գորիսի, Իջևանի ՄՏԿ-ները յուրաքանչյուրն ունի ընդամենը 3—6 հեկտար հողամաս, որն իհարկե, միանգամայն աննորմալ պայմաններ էր ստեղծում կայանի աշխատանքի համար։



Կարմրաշենի ՄՏԿ-ի հատակագիծը
Հեղ. ճարտ. Հ. Կիրակոսյան

Որոշ դեպքերում ՄՏԿ-ի տերիտորիայի ընտրությունը կատարվել է հապճեպ, առանց տեղանքի մանրամասն հետազոտության, առանց հաշվի առնելու ՄՏԿ-ի հետագա զարգացման հնարավորությունները։ Ահա այդ է պատճառը, որ մի շարք ՄՏԿ-ների շինարարություններ ստիպված են լինում դադարեցնել և սկսել նոր շինարարություն, արդեն միանգամայն այլ հողամասում։

Մեքենատրակտորային կայանի հատակագծման հաջողված օրինակ է Կարմրաշենի ՄՏԿ-ի հատակագծման նախագիծը (ճարտ. Հ. Կիրակոսյան), որտեղ ընդհանուր տերիտորիան ունի անհրաժեշտ մեծություն և հեղինակին հաջողվել է ստանալ բնակելի և արտադրական թաղամասերի փոխադարձ, հարմար դասավորություն, միաժամանակ ապահովելով ՄՏԿ-ի կապը դեպի դաշտերը տանող ճանապարհների հետ։

Բնակելի թաղամասը, որը դասավորված է ՄՏԿ-ի հյուսիս-արևելյան մասում, բաղկացած է ինչպես բնակելի, այնպես էլ հասա-

րական մի շարք կառուցվածքներից (ակումբ, մանկամսուր, մանկապարտեզ, բաղնիք, հանրակացարան և այլն) և անջատվում է արտադրական հատվածից ընդլայնական ուղղությամբ գնացող մի փողոցով, որից դեպի հարավ-արևմուտք տեղավորված է արտադրական հատվածը, նրա կենտրոնում բարձրացող վերանորոգման արհեստանոցի մեծ ծավալով։ Արտադրական մյուս կառուցվածքները (մեքենաների ծածկույթները, գարաժ, փայտամշակման արհեստանոց և այլն) դասավորված են այդ հիմնական կառուցվածքի շուրջը։ Մեքենատրակտորային կայանի գրասենյակը տեղավորված է արտադրական և բնակելի հատվածների սահմանագծում և հաջող կերպով կապված է թե՛ մեկի, և թե՛ մյուսի հետ։

ՄՏԿ-ների շինարարությունը ռեսպուբլիկայում ստացել է նշանակալից ծավալ։ Նոր ՄՏԿ-ների կառուցմանը զուգընթաց ուժեղ թափով ընթանում է առաջներում կառուցված կայանների վերակառուցումը։ Որպես թերություն պետք է նշել, որ փաստորեն մինչև այժմ համարյա բոլոր իրականացված կայաններում հատակագծման նախագծերը մշակված են անկախ նրանց մոտ դասավորված բնակավայրերից և ՄՏԿ-ները դիտվել են որպես առանձին, մեկուսացված ավաններ, իրենց արտադրական, բնակելի և հասարակական հատվածների հետ միասին։

Մինչդեռ իրականում ոչ մի կարիք չկա, օրինակ, կառուցել երկու ակումբ, երկու մանկապարտեզ և մանկամսուր, և վերջապես ստեղծել երկու հասարակական կենտրոններ միմյանցից ոչ հեռու, փաստորեն միմյանց կողքի, մեկը ՄՏԿ-ի ավանում, մյուսը, նրան անմիջապես մոտ գտնվող գյուղական բնակավայրում։ Սրանց միացումը, ինչպես ՄՏԿ, այնպես էլ գյուղական բնակավայրերի հատակագծման հարցերի կոմպլեքսային մշակումը հնարավորություն կտա ստեղծել շատ ավելի ռացիոնալ և էկոնոմիկ կոմպոզիցիաներ, ստանալ գյուղական բնակավայրերի նոր, հետաքրքիր լուծումներ։

* * *

Գյուղական բնակավայրերի ճարտարապետության մեջ իրենց յուրահատուկ տեղն ունեն սովխոզային ավանները, որոնք ծնունդ են առել Սովետական իշխանության առաջին իսկ տարիներին։ Սրանք սովորաբար իրենցից ներկայացնում են բարեկարգ բնակավայրեր, որոնց հեշտությամբ կարելի է տարբերել մնացած գյուղական բնակավայրերից իրենց յուրահատուկ հասարակական և արտադրական կառուցվածքներով, ավանի հատակագծային սխեմայով

և այնտեղ կառուցված բնակելի շենքերի հաճախ բազմաբնակարան տիպերով և երբեմն բարեկարգման համեմատաբար բարձր աստիճանով։

Սովխոզային ավանների հատակագծային կոմպոզիցիաները, թելադրված յուրաքանչյուր դեպքում սովխոզի արտադրական պրոֆիլով, ունեն յուրահատուկ լուծումներ։

Սովխոզի տնտեսական-արտադրական կարողությունն է, որ առաջին հերթին որոշում է և՛ բնակելի ավանի ընդհանուր չափերը և՛ այնտեղ կառուցվող շենքերի տիպերը։ Սովխոզների հատակագծային կոմպոզիցիան հիմնականում թելադրվում է աշխատանքի կազմակերպման մեթոդներով, որոնք և որոշում են ինչպես սովխոզի ընդհանուր դասավորության, այնպես էլ նրա առանձին մասերի փոխհարաբերության հիմնական հարցերը։ Սովետական Հայաստանի շատ սովխոզներ ունեն իրենց հատակագծման նախագծերը և շնորհիվ դրան աստիճանաբար վեր են ածվում բարեկարգ բնակավայրերի։ Մենք կբավարարվենք բերելով սովխոզային ավաններից միայն մեկ օրինակ, որը կարելի է ասել տիպիկական է հատակագծման այս ժանրի համար, այն է Արարատ տրեստի Արազդայանի գինեգործական սովխոզի հատակագծման նախագիծը (հեղ. ճարտ. Հ. Կիրակոսյան)։

Սովխոզի կենտրոնական ավանը դասավորված է խաղողի այգիների մեջ, նրա հատակագծային ցանցը որոշվել է արդեն գոյություն ունեցող դրենաժային և ոռոգիչ ջրանցքների ուղղություններով։ Ավանը ունի ուղղանկյուն հատակագծային սխեմա, որտեղ կենտրոնական հրապարակի գլխավոր առանցքի վրա տեղավորված են ակումբը, հրապարակի աջ և ձախ կողմերում՝ սովխոզի գրասենյակը և ճաշարանը, իսկ հանդիպակած կողմում՝ ավանային խանութները։

Արտադրական համալիրը դասավորված է ավանի արևելյան կողմում, իսկ նրա և բնակելի թաղամասերի միջև տեղավորված են զգալի տարածություն գրավող կանաչապատ զբոսայգին և սպորտային հրապարակները։

Բնակելի թաղամասերի կառուցապատումը հիմնականում արված է մեկ հարկանի զուգակցված բնակելի տներից, իսկ կենտրոնական փողոցի վրա դասավորված են նաև սովխոզի աշխատողների երկհարկ հանրակացարանները։

Նշելով ավանի հատակագծի ընդհանրապես հաջողված կոմպոզիցիան, չի կարելի չնկատել, որ ակումբը փաստորեն անջատ-



ված է պարկային էլեմենտներից և նրա հետևի հողամասում, զբոսայգու փոխարեն ակումբին անմիջապես մոտ դասավորված են ամբուլատորիան և հիվանդանոցը, մի բան, որն իհարկե, չի կարելի հարմար համարել։

* * *

Սովետական Հայաստանի բնակավայրերի մի այլ տիպը շրջանային կենտրոններն են, որոնք այժմ բոլորն էլ ունեն իրենց հատակագծման նախագծերը և արագ թափով ընթանում են քաղաքատիպ ավանների և քաղաքների վերածվելու ճանապարհով, մինչդեռ նախասովետական շրջանում նրանց գերակշռող մեծամասնությունը ոչնչով չէր տարբերվում սովորական գյուղերից։ Շրջանային կենտրոնների շինարարության և վերակառուցման յուրահատուկ պայմանները զգալի չափով տարբերում են նրանց քաղաքային և գյուղական բնակավայրերից, և այդ պատճառով էլ նրանց ճարտարապետության ուսումնասիրության հարցերը կազմում են մի այլ, ոչ պակաս կարևոր թեմա։ Մենք այստեղ կանգ ենք առնում միայն շրջանային կենտրոնների ճարտարապետական կազմավորման մի քանի ընդհանուր գծերի վրա, որոնք յուրահատուկ են այդ տիպի բնակավայրերին։

Ամենից առաջ պետք է նշել, որ շրջանային կենտրոններում ի տարբերություն գյուղական բնակավայրերի, նշանակալից տեղ են գրավում ադմինիստրատիվ և հասարակական կազմակերպությունները, որտեղ աշխատում է բնակավայրի ազգաբնակչության մի զգալի մասը։ Այս հանգամանքը պայմանավորում է բնակավայրի հասարակական կենտրոնի արագ զարգացումը, և մի շարք ադմինիստրատիվ շենքերի կառուցումը (շրջգործկոմ, պարտ շրջկոմ, պետբանկ, դատարան և այլն)։

Շրջանային կենտրոններում որոշակի տեղ են գրավում նաև տեղական արդյունաբերության և առևտրական կազմակերպությունների շենքերը, որոնք սպասարկում են ոչ միայն շրջկենտրոնի բնակչությանը, այլև էական նշանակություն ունեն ամբողջ շրջանի համար։

Նույնը կարելի է ասել, նաև կուլտուր-կենցաղային հաստատությունների մասին (կինո, թատրոն, հյուրանոց, հիվանդանոց և այլն), որոնց նշանակությունը դարձյալ չի սահմանափակվում շրջկենտրոնի ազգաբնակչության պահանջմունքներով միայն։



*Իջևանի շրջգործկոմի շենքը*
*Նեղ. ճարտ. Ռ. Գևորգյան*

Յուրահատուկ ձևեր է ստանում նաև շրջանային կենտրոնի բնակարանային շինարարությունը, որտեղ անհատական բնակարանների հետ միասին բնակելի ֆոնդի մի զգալի մասը կազմում են պետական բնակելի շենքերը, որոնք կառուցվում են հիմնարկների աշխատակիցների համար և սովորաբար ներկայացնում երկհարկ սեկցիոն տներ, դասավորված շրջկենտրոնի գլխավոր փողոցների երկայնքով։ Ըստ իրենց ընդհանուր հատակագծման և կառուցվածքի, գյուղական շրջանային կենտրոնները գյուղերի և քաղաքատիպ ավանների համեմատ միջին դիրք գրավող բնակավայրեր են, որոնց զարգացումը անշեղորեն ընթանում է դեպի քաղաքատիպ վայրերի և քաղաքների վերածվելուն։ Այս բանի ցայտուն օրինակներ են հանդիսանում Սովետական Հայաստանի մի շարք, երբեմնի սովորական գյուղեր հանդիսացող շրջանային կենտրոնները, ինչպիսիք են Սիսիանը, Իջևանը, Աշտարակը, Ապարանը և շատ ուրիշներ։ Եվ թեև նրանք դեռևս այսօր էլ ըստ ադմինիստրատիվ բաժանման պատկանում են գյուղական բնակավայրերի թվին, սակայն արդեն ունեն քաղաքատիպ ավաններ կոչվելու բոլոր նախադրյալները։ Այդ ճանապարհով են ընթացել արդեն քաղաքատիպ ավաններ հանդիսացող Սպիտակավանը, Ախտան և այլն, էլ չենք խոսում այժմ ար-

*դեն քաղաքներ դարձած Արթիկի, Էջմիածնի, Ստեփանավանի մասին, որոնք նախասովետական շրջանում քիչ էին տարբերվում սովորական գյուղերից, իսկ այժմ պատկանում են Սովետական Հայաստանի բարեկարգ քաղաքների թվին։*

* *

Ամփոփենք.— *Գյուղական բնակավայրերի ճարտարապետական վերակառուցման մեջ առավել էական հանդիսանում է նրա վերահատակագծումը, երբ հիմնովին վերանում է բնակավայրի խառնիճաղանճ հատակագիծը և ստեղծվում կոլտնտեսային ավանի նոր կոմպոզիցիան։*

*Նախասովետական շրջանում, բացի մեկ հասարակական կենտրոնից, որը սովորաբար կազմավորվում էր գյուղական եկեղեցու մոտ, գյուղի մնացած տարածությունը հիմնականում բաղկացած էր միատարր բնակելի և արտադրական համախառն էլեմենտներից, որտեղ տնամերձ հողամասերի ամենաբազմապիսի չափերը և ձևերը վերջին հաշվով որոշում էին բնակավայրի ընդհանուր հատակագծային պատկերը։*

*Բնակավայրի հատակագծման այդ առաջնային բջիջի՝ տնամերձ հողամասի կառուցապատման ձևերը նույնպես վերջին հաշվով թելադրվում էին նույն այն նախապայմաններով, որոնք հիմք էին հանդիսանում նաև յուրաքանչյուր առանձին շրջանի բնակելի տների ճարտարապետական ձևերի մշակման համար։ Այդ տեսակետից նկատվում են էական հատկանշական տարբերություններ, զանազան աշխարհագրական շրջանների բնակելի տների միջև և նմանապես տնամերձ հողամասերի հատակաձևերում։ Սովետական կարգերի հաստատումը և հատկապես կուլակության լիկվիդացումը վերացրեց նույն բնակավայրի բնակելի տների և տնամերձ հողամասերի դիֆերենցիացիան ծնող բոլոր նախադրյալները, իսկ կոլտնտեսային կարգերի հաղթանակը արմատապես փոխեց գյուղում կատարվող ամբողջ շինարարության ընթացքը։*

*Կոլտնտեսային գյուղի հատակագծման հիմքում դրվեց ամբողջ բնակավայրը տարբեր բովանդակություն ունեցող մասերի բաժանելու սկզբունքը։ Մշակվեցին գյուղի արտադրական հատվածի, բնակելի թաղամասերի, հասարակական կենտրոնի կազմավորման սկզբունքները։ Առանձին կոլտնտեսականների տնամերձ հողամասերը և գյուղի թաղամասերը հանդիսացան սոցիալիստական նոր*

գյուղի բնակելի հատվածի հատակագծման հիմնական, էլեմենտները։

1935—1937 թթ. ընթացքում կատարված հատակագծման նախագծերի մեծ մասը, պետք է ասել, զերծ չմնաց էական թերություններից, որոնք դրսևորվեցին երկրաչափական կանխակալ ձևերի ոչ տրամաբանական օգտագործումով, երբ տեղի ռելյեֆին լիովին չհամապատասխանող փողոցների ցանցը արհեստականորեն դրվում էր գյուղի հատակագծման կոմպոզիցիայի հիմքում, և ամեն ինչ ենթարկվում գծագրի սիմետրիկ ձևին։

Համեմատաբար ավելի բարձր որակական մակարդակի վրա են գտնվում հետպատերազմյան տարիներին կատարված հատակագծման նախագծերը։ Սակայն, դրա հետ միասին, կոլտնտեսային նոր ավանների կառուցապատման գործում առկա են ակնհայտ թերություններ, որոնք հիմնականում հետևանք են ավանները խիստ սահմանափակ, անհամապատասխան տիպի շենքերով կառուցելուն, հաճախ վերջիններիս շինարարական ցածր որակին և բարեկարգման ասպարեզում եղած մեծ թերություններին։ Էական թերություններ կան նաև հատակագծման նախագծերի իրականացման գործում։

Մյուս կողմից, կոլտնտեսային գյուղում այսօր կատարվող ինտենսիվ շինարարական աշխատանքների պայմաններում ռեսպուբլիկայի բնակավայրերի գերակշռող մեծամասնության հատակագծման նախագծեր չունենալը, կարող է մոտիկ ապագայում զգալի դժվարություններ առաջացնել նրանց հատակագծման ժամանակ։ Այս տեսակետից առաջնակարգ խնդիրներից մեկն է հանդիսանում գյուղական բնակավայրերի հատակագծման աշխատանքների ծավալումը, որը հատկապես վերջին տարիներին խիստ հետ է մնում այնտեղ իրականացվող մեծածավալ շինարարության տեմպերից։

# ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐԸ

Կոլտնտեսային գյուղի արտադրական հատվածում հիմնականում կենտրոնացվում են անասնագոմերը, պահեստները, արհեստանոցները և նրանց սպասարկող մնացած կառուցվածքները։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1953 թ. Սեպտեմբերյան և 1954 թ. Փետրվար-մարտյան, 1955 թ. Հունվարյան պլենումների և հատկապես 20-րդ համագումարի որոշումները նշում են, որ անասնապահության բնագավառում հիմնական խնդիրը այժմ հանդիսանում է խոշոր և մանր եղջյուրավոր անասունների գլխաքանակի ավելացումը և հատկապես կովերի գլխաքանակի ավելացումը, բարձրացնելով միաժամանակ նրանց մթերատվությունը։ Այս կապակցությամբ կարևոր նշանակություն է ստանում անասնապահական ֆերմաների ճիշտ տեղաբաշխումը և որակյալ կառուցումը, որովհետև հայտնի է, թե ինչ հսկայական նշանակություն ունեն բարեկարգ զոոհիգիենիկ պահանջներին բավարարող կառուցվածքները անասնապահության մթերատվության բարձրացման բնագավառում։

Այս գործում, անշուշտ էական դեր է խաղում արտադրական կառուցվածքները տիպային նախագծերով կառուցելու պրակտիկան, երբ հին, անբարեկարգ գոմերը մասսայաբար փոխարինվում են գիտական հիմունքներով մշակված նոր տիպի կառուցվածքներով, որոնք ստեղծում են անասունների համար անհրաժեշտ պայմաններ և տալիս են բոլոր հնարավորությունները մեխանիզացիայի ենթարկելու այնտեղ կատարվող բոլոր աշխատատար պրոցեսները։ Այժմ ռեսպուբլիկայում անասնապահական շենքերը հիմնականում կառուցվում են միութենական գիտա-հետազոտական հիմնարկների կողմից մշակված նախագծերի հիման վրա, միայն այն տարբերությամբ, որ նրանք վերափոխվում են, հարմարեցնելով տեղական շինանյութերից կառուցելու համար։

Անասնապահական ֆերմաների տեղաբաշխման, նրանց ներքին հատակագծման հարցերը լուծելիս ամեն անգամ պիտի ի նկատի ունենալ մի շարք տեղական կոնկրետ պայմաններ՝ ջրի առկայությունը, քամիների ուղղությունը, ֆերմայի զարգացման հեռանկարները, բնակավայրերի նկատմամբ ունեցած դասավորությունը, գոյություն ունեցող ճանապարհների ուղղությունը և այլն։

Կան անասնապահական ֆերմաների դասավորության մի քանի տարբերակներ, երբ նրանք տեղավորվում են կամ կերային բազայի մոտ, գյուղական բնակավայրերից նշանակալից հեռավորության վրա, և կամ թե չէ գյուղից ոչ հեռու, հատուկ հողամասում։ Այս վերջին դասավորության ժամանակ բավական հեշտանում է՝ անասունների խնամքը, ղեկավարության և դեպի աշխատանքի վայրը գնալու հարցերի լուծումը, զգալիորեն կրճատվում է ճանապարհների և էլեկտրագծերի երկարությունը։

Հայաստանի տարբեր շրջանների այնքան բազմազան ռելյեֆային և կլիմայական պայմանները և հատկապես, լեռնային շրջանների ռելյեֆի խիստ կտրտվածությունը ամեն անգամ յուրահատուկ պայմաններ են ստեղծում ֆերմաների հատակագծման համար։ Այն ժամանակ, երբ հարթավայրային շրջաններում ֆերմաների դասավորության հարցը լուծվում է համեմատաբար ավելի հեշտ կերպով, լեռնային շրջաններում, կապված հարմար հողային տարածությունների խիստ պակասի հետ, էական դժվարություններ են առաջանում ոչ միայն ֆերմայի բոլոր անհրաժեշտ կառուցվածքները ռացիոնալ ձևով տեղաբաշխելու, այլ նույնիսկ առանձին արտադրական շենքերի համար պահանջվող հարթ տարածությունները գտնելու հարցում։ Սակայն, միաժամանակ պետք է նշել, որ էական օգնություն կարող են ցույց տալ տեղական շինարարներին նաև անասնապահական ֆերմաների հատակագծման տիպային նախագծերը։

Տիպային նախագծերը, եթե նրանք ունեն բավական լայն սերիա և մշակված են աշխարհագրական տարբեր պայմաններից ելնելով, կարող են նշանակալից դեր խաղալ կոլտնտեսային գյուղի արտադրական ֆերմաների կառուցման գործը բարելավելու ուղղությամբ, և ռեսպուբլիկայի համապատասխան նախագծային և անասնապահական գիտա-հետազոտական հիմնարկների առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի տեղական պայմաններին հարմարեցված ֆերմաների տիպային հատակագծեր կազմելը։

Այս հարցերը, ամեն մի առանձին դեպքում, պահանջում են կոնկրետ մոտեցում, կապված կենդանիների խնամքի և հատկա-

պես կերի համապատասխան բազայի առկայության հետ, և հնարավոր բոլոր տարբերակներից պետք է ընտրել հատկապես այն, որը առավել լավ է ապահովում կենդանիների մթերատվության բարձրացումը։

Ոչ պակաս նշանակություն ունի նաև ընտրված հողամասի մեծությունը, որը առաջնակարգ նշանակություն է ստանում կոլտնտեսային արտադրության անընդհատ աճման պայմաններում։

Այս հանգամանքը ժամանակին հաշվի չառնելը որոշ դեպքերում հասցնում է նույնատիպ արտադրական կառուցվածքների մի քանի կենտրոնների ստեղծմանը, երբ նախկինում ընտրված տեղում այլևս հնարավոր չի լինում (հողամասի փոքրության պատճառով) նոր շենք կառուցել, և ստիպված են լինում նոր հողամաս հատկացնել, որով և ստեղծվում է արտադրական ևս մի կենտրոն։

Նույնատիպ կառուցվածքների մի քանի կենտրոնների առկայությունը դժվարացնում է և՛ ղեկավարությունը, և՛ խնամքը, և՛ հատկապես, մեխանիզացիայի օգտագործումը, վերջին հաշվով բացասաբար անդրադառնալով կենդանիների մթերատվության և արտադրության ինքնարժեքի վրա։

Մյուս կողմից, արտադրական շենքերի այդպիսի անշատ կառուցումը, հաճախ հասցնում է այն բանին, որ անասնապահական ֆերմաների առանձին կառուցվածքները միմյանց նկատմամբ ստանում են միանգամայն պատահական դասավորություն, չեն պահպանվում նրանց մեջ անհրաժեշտ հեռավորությունները, սխալներ են թույլ տրվում նրանց օրիենտացիայի և հոսող ջրերի նկատմամբ, նրանց դասավորության մեջ և այլն։ Առանձին դեպքերում շարունակվում է այն միանգամայն անթույլատրելի պրակտիկան, երբ անասնապահական շենքերը կառուցվում են գյուղում, բնակելի հատվածի կենտրոնում։ Այսպես, օրինակ, Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղում, նորակառույց ակումբից ոչ հեռու կառուցվել է մի խոշոր ձիանոց։

Այն հանգամանքը, որ մեզ մոտ դեռևս չի արմատացել անասնապահական կենտրոնների կառուցումը նախօրոք մշակված հատակագծային սխեմայի հիման վրա, շատ դեպքերում հասցնում է այն բանին, որ ամեն անգամ կառուցվում է միևնույն տիպի գոմը, իր առանձին կերախոհանոցով և ֆերմայում ստացվում են այնքան կերախոհանոցներ, որքան գոմեր կան այնտեղ, մի բան, որ, անշուշտ, դժվարեցնում է կերի պատրաստման մեխանիզացիան։ Մինչդեռ, եթե ֆերման նախագծված լիներ նախօրոք, ապա միանգամայն



Տիպային կովանոցի ընդհանուր տեսքը (100 կովի համար)

Հնարավոր կլիներ կերախոհանոցները կենտրոնացնել մի առանձին շենքում, մեխանիզացիայի ենթարկել բոլոր աշխատարար պրոցես-ները և այդ կենտրոնից մատակարարել բոլոր գոմերը՝ աշխատանքի կազմակերպման մի ձև, որն արդեն վաղուց լայն օգտագործում է գտել եղբայրական ռեսպուբլիկաների առաջավոր կոլտնտեսություն-ներում։



Տիպային ձիանոցի հատակագիծը (20 ձիու համար)

Այսպիսով, արտադրական կենտրոնների տեղի ընտրության հարցը անասնապահության հարաճուն զարգացման պայմաններում դառնում է առաջնակարգ խնդիրներից մեկը, և այդ գործին ամենա-ակտիվ մասնակցություն պիտի ունենան ինչպես գյուղատնտեսա-կան մինիստրության համապատասխան գիտա-հետազոտական ինստիտուտները, այնպես էլ նախագծային կազմակերպություն-ները։

Առաջնակարգ խնդիրներից մեկն էլ հանդիսանում է Հայաստանի տարբեր աշխարհագրական շրջանների համար արտադրական ֆերմաների տիպային նախագծեր կազմելու հարցը, որը անկասկած իր դրական ազդեցությունը կունենա ֆերմաների շինարարության գործում, որովհետև այն մեծածավալ շինարարության պայմաններում, որը տարվում է այժմ գյուղում, միշտ չէ, որ հնարավոր է առանձին նախագծեր կազմել ամեն մի կոլտնտեսության ամեն մի ֆերմայի համար[1]։

Այս անհրաժեշտ է նաև նրա համար, որ այն տիպային նախագծերը, որոնցով այժմ կառուցվում են Սովետական Հայաստանի բոլոր շրջանների կոլտնտեսությունների արտադրական կառուցվածքները, մշակված են ի նկատի ունենալով ՌՍՖՍՌ միջին գոտու կլիմայական պայմանները և հաշված են տեղանքի հարթ պայմաններում օգտագործելու համար։

Սակայն Սովետական Հայաստանի շատ շրջանների աշխարհագրական պայմանները միանգամայն տարբեր են վերը նշվածներից և Արարատյան դաշտավայրի շոգ կլիման, լեռնային շրջանների խիստ կտրտված տեղանքը պահանջում են որոշակի դիֆերենցված մոտեցում և հաճախ մեծ դժվարություններ են ստեղծում նշված տիպային նախագծերի անփոփոխ կիրառման համար։



Տիպային ոչխարանոցի հատակագիծ. (500 ոչխարի համար)

Լեռնային շրջաններում մեծ դժվարություններ են առաջանում մոտ 100 մետր երկարություն ունեցող կովանոցների տեղադրման ժամանակ, որովհետև միշտ չէ, որ լեռներում հնարավոր է հարմար, հարթ տեղ գտնել այդպիսի կառուցվածքի համար։

---

1 Պետք է նշել, որ միայն վերջերս ռեսպուբլիկայի համապատասխան նախագծային կազմակերպությունները ձեռնարկեցին այդ խիստ կարևոր գործին։

Որոշ դեպքերում շենքերի մի ծայրը ստացվում է խրված լեռնալանջի մեջ (որը ստիպում է մեծ քանակությամբ հողային աշխատանքներ կատարել) կամ թե չէ կոմանոցի հատակը ոչ թե մի հարթություն է կազմում, այլ արվում է աստիճանաձև, մի բան, որը էական դժվարություններ է ստեղծում շահագործման ժամանակ։

Այս ամենը ցույց են տալիս, թե որքան այժմեական է, որքան անհրաժեշտ է լեռնային շրջաններին համապատասխան տիպային կառուցվածքների նախագծումը, որոնց վաղուց սպասում են մեր կոլտնտեսությունները։

Տիպային նախագծերում իրենց համապատասխան լուծումը չեն գտել նաև մի շարք կոնստրուկտիվ հարցեր, կապված հատկապես հակաերկրաշարժային միջոցառումների հետ։

Հայաստանի սեյսմիկ պայմանները պահանջում են հատուկ կոնստրուկտիվ էլեմենտների առկայություն, կառուցվածքը երկրաշարժից ապահովելու համար, և այդ տեսակետից 100 մետր երկարություն ունեցող կոմանոցները, որոնք չունեն ընդլայնական պատեր, առավել անբարենպաստ պայմաններում են գտնվում։ Իհարկե, հաջող լուծումը կլիներ այդ կառուցվածքների կոնստրուկտիվ ամրությունը մեծացնելու տեսակետից անել մի քանի ընդլայնական պատեր, մի բան, որը, սակայն, միանգամայն անթույլատրելի է գոմի ներքին տեխնոլոգիայի և մեխանիզմների օգտագործման տեսակետից։ Մշակված մի քանի կողմնակի կոնստրուկտիվ միջոցառումները դեռևս չի կարելի բավարար համարել, բացի այդ, տեղերում դրանք էլ որոշ դեպքում չեն կառուցվում կամ կառուցվում են խիստ ցածրորակ և փաստորեն գոմերը որոշ տեղերում մնում են առանց հակասեյսմիկ միջոցառումների։ Այդ պատճառով էլ անհետաձգելի խնդիր է հանդիսանում հակաերկրաշարժային մի շարք պարզ, ռացիոնալ էլեմենտների մշակման հարցը և հատկապես նրանց իրականացման ապահովումը տեղերում, որի վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնեն գյուղական և կոլտնտեսային շինարարության տեղական օրգանները։

Ոչ պակաս նշանակություն ունի Հայաստանի պայմաններում խիստ դեֆիցիտային շինանյութի՝ փայտի օգտագործման սահմանափակման հարցը, որի փոխարինումը այլ շինանյութերով որոշ կոնստրուկտիվ էլեմենտներում (և հատկապես ծածկերում) այժմ առաջնակարգ խնդիրներից մեկն է հանդիսանում։ Անտառանյութի վատ մատակարարումը հաճախ պայմանավորում է անասնապահական կառուցվածքների ուշ ավարտումը և պատճառ հանդիսանում



*Տիպային կլոր կովանոցի հատակագիծը (84 կովի համար)*
*Մշակել են ճարտ. Բ. Ամրատյան, Վ. Քուրդյան*

շինարարական պլանների խիստ թերակատարմանը։ Այս կապակցությամբ առաջնահերթ խնդիր է հանդիսանում հավաքովի երկաթբետոնի կոնստրուկցիաների ներդրման հարցը, որը սակայն մինչև այժմ անբավարար են օգտագործվում ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների արտադրական կառուցվածքներում։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության վերջին տարիների ընթացքում ընդունած պատմական որոշումները նոր, ավելի բարդ խնդիրներ են դնում գյուղական շինարարների առջև և միաժամանակ ցույց տալիս նրանց կատարման ուղիները։

Այս կապակցությամբ կոլտնտեսային արտադրական կառուցվածքների իրականացման հարցում ամենաէական նշանակություն ունի հավաքովի երկաթ-բետոնի կոնստրուկցիաների արտադրության կազմակերպումը և նրանցով արտադրական կառուցվածքների հիմնականում փայտյա կրող կոնստրուկցիաները փոխարինելու միջոցառումները։

Բացի այդ, առաջնակարգ հարցերից մեկն է տուֆի մեծ բլոկների կիրառումը և արհեստական բլոկների պատրաստումը պեմզայի և հրաբխային շլակների հիման վրա։

Այս վերջին տիպի բլոկները հատկապես լայն կիրառում կգտնեն այն շրջաններում, որտեղ բացակայում են տուֆահանքերը (Սիսիան, Գորիս, Ախտա և այլն)։ Երկաթ-բետոնի հավաքովի կոնստրուկցիաների և տուֆի կամ արհեստական ձևով պատրաստված մեծ բլոկների լայն կիրառումը հնարավորություն կտա համարյա թե ամբողջությամբ արտադրական կառուցվածքներից դուրս մղել փայտը և նրանց կառուցումը զգալիորեն արագացնել։

Չերնիշևի եռաստիճան բլոկների, Ռաբինովիչի կրկնակի կորության ծածկերի օգտագործումը հնարավորություն կտա լրովին վերացնել փայտի օգտագործումը արտադրական կառուցվածքների ծածկերում։ Ռեսպուբլիկայի պայմաններում այժմ առաջնակարգ նշանակություն է ստանում պեմզայի և կավի խառնուրդից ստացվող կերամիկական բլոկների օգտագործումը, որոնց արտադրությունը կարելի է կազմակերպել համարյա թե բոլոր կոլտնտեսություններում և այսպիսով տեղական շինանյութերի հիման վրա հիմնականում լուծել արտադրական կառուցվածքների ծածկի շինանյութի հարցը։

Նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում վերջերս մշակված շրջանաձև կտվանոցը (հեղինակներ ճարտ. Վ. Քուրդյան, ճարտ. Բ. Սմբատյան)։ Այսպես, 84 կովի համար նախատեսված

*կովանոցի կենտրոնը կազմում է սիլոսի աշտարակը, որի շուրջը շրջանաձև տեղավորվում են կովերը։ Այս տիպի շենքերը շատ ավելի հարմար են և էժան։ Բավական է ասել, որ նրանք 30%-ով ավելի էժան են նստում, քան ուղղանկյուն հատակագիծ ունեցող կովանոցները և հակասեյսմիկ տեսակետից ունեն զգալի առավելություններ։*



*Կլոր կովանոցի ընդհանուր տեսքը*
*(շինարարության ընթացքում)*

*«Հայ. պետ. քաղ. գյուղի նախագծի» կողմից կազմված են կովանոցների, ոչխարանոցների, հորթանոցների, խոզանոցների և այլ կառուցվածքների տիպային նախագծերի նախագծային առաջադրանքները։ Պետք է նշել, որ այս նախագծերում արդեն հաշվի են առնված Հայաստանի կլիմայական պայմանները, կառուցվածքների սեյսմակայունության հարցը և առաջավոր գիտության պահանջները՝ անասնապահական կառուցվածքների տեխնոլոգիայի բնագավառում։ Մշակված են նաև երկաթ-բետոնի հավաքովի կոնստրուկցիաների նախագծեր, որոնց օգտագործումը հնարավորություն կտա խիստ կերպով կրճատելու այնքան դեֆիցիտային շինանյութ հանդիսացող՝ փայտի օգտագործումը։ Որպես դրական երևույթ պետք է նշել, որ նշված կոնստրուկցիաների մշակման ժամանակ հաշվի է առնված գյուղական պայմաններում կատարվող շինարարության որոշ առանձնահատկությունները (հզոր վերամբարձիչների բացակա-*

յուխյուն, որակյալ կադրերի պակասը, լեռնային նեղ, անհարմար ճանապարհներ և այլն)։ Սակայն այն հսկայական պահանջը, որը զգացվում է այժմ հավաքովի երկաթ-բետոնի էլեմենտների բնագավառում, կարող է բավարարվել միայն այն ժամանակ, երբ մշակված գծագրերի համաձայն տեղերում հենց սկսեն նրանց արտադրությունը։



Տիպային խոզանոցի հատակագիծը (20 մայր խոզի համար)

Որոշ աշխատանքներ է կատարված նաև անասնապահական ֆերմաների տիպային նախագծերի կազմելու բնագավառում, որոնք, անշուշտ, էական ներդրում կհանդիսանան կոլտնտեսային ֆերմաների շինարարության կանոնավորման գործում։

Մեծ թերություններ կան շենքերի և հատկապես գոմերի կառուցման որակի հարցում։ Մինչդեռ հայտնի է, թե ինչ նշանակալից ազդեցություն ունի գոմի բարեկարգ վիճակը մթերատվության բարձրացման գործում, և ռեսպուբլիկայի որոշ շրջանների անասնապահության ցածր մթերատվության պատճառներից մեկն էլ պետք է համարել հատկապես կոլտնտեսային գոմերի որոշ մասի միանգամայն անբավարար վիճակի մեջ[1]։

---

1 Աղաղակող թերություններ են նկատվում կառուցված շենքերում, որտեղ առանձին դեպքերում շեղվելով նախագծից բնավ չեն կառուցվում նախամուտքեր, սխալ են արվում մսուրների բարձրությունները։ Լուսամուտներն արվում են թաց փայտից, որը ժամանակի ընթացքում չորանալով, առաջացնում է մի քանի սանտիմետր լայնությամբ ճեղքեր։ Գոմում ազատորեն փչում է միջան-



Շահումյանի խաշնաբուծարանի ընդհանուր տեսքը

---

ցիկ քամին, ձմեռը լինում է ցուրտ, ավելանում է խոնավությունը և ամբողջ ներքին տարածությունները լի են լինում գոլորշիներով։ Ցրտից կենդանիներին պաշտպանելու համար որոշ տեղերում դիմում են կենդանիների կենտրոնացմանը, ըստ որում 100 կովի համար նախատեսված կովանոցում տեղավորում են 200 կով, 500 ոչխարի համար նախատեսված ոչխարանոցում 1000 ոչխար և այլն։ Ջերմության ավելացման այս «սիստեմը» զուգակցված լուսամուտների արհեստական փոքրացման հետ, երբ տիպային նախագծերի բավական ընդարձակ լուսամուտները փոխարինվում են փոքրիկ լուսամուտներով, հաճախ հասցնում է օդային ռեժիմի ամենակոպիտ խախտումների։

Բացի այդ, շատ տեղերում չեն գործում օդաբեր և օդատար խողովակները, որոնց պատրաստման որակը գտնվում է ցածր մակարդակի վրա։

Այս պայմաններում ահա պատահական չէ բնավ, որ առանձին գոմերում հեղձուցիչ է օդը, շոգ է, խոնավ, կենդանիները քրտնում են, հետո՝ մրսում, հիվանդանում։

Որոշ դեպքերում միանգամայն սխալ են պատրաստում լուսամուտները — փոխանակ բացվելու մի թեքությամբ, ներքին առանցքի շուրջը, որը պայմանավորում է սառը օդի ներթափանցումը միայն վերևից, լուսամուտները պատրաստվում են բնակելի տների երկփեղկ լուսամուտների ձևով, և սառը օդը ուղղակի փչելով նրանցից ոչ հեռու կանգնած կենդանիների վրա, ստեղծում է որոշակի վտանգ վերջիններիս առողջության համար։ Այս պայմաններում գոմի ծածկի փայտի կոնստրուկցիաները, առանձին տեղերում գտնվելով մշտական շփման մեջ ժամանակին չհեռացվող գոլորշու հետ, փտում են և կամ վարակվում փայտի զանազան հիվանդություններով։



*Էջմիածնի Ա. Միկոյանի անվան կոլտնտեսության պահեստի ընդհանուր տեսքը*

*Վերջին տարիների ընթացքում տիպային նախագծերով կառուցվել են մի քանի հազար շենքեր և արդեն ավելի քան 200 կառուցվածքներում մեքենայացված են աշխատատար պրոցեսները, տեղավորված են ջրամատակարարման, էլեկտրական կիթի հարմարանքները և այլն։ Արտադրական կառուցվածքների լավ օրինակներ ենք տեսնում Շահումյանի, Արտաշատի էջմիածնի, Ախուրյանի, Սևանի և մի շարք այլ շրջանների կոլտնտեսություններում։*



*Անասնաբուժարանի հատակագիծը (12 տեղով)*
*Հեղ. ճարտ. Յու. Նալբանդյան*

*Բացի անասնապահական օբյեկտներից, գյուղական բնակավայրերում լայն ծավալ է ստացել պահեստների, չորանոցների և այլ օժանդակ կառուցվածքների շինարարությունը։*

Կոլտնտեսային գյուղի ճարտարապետության հետ անխզելիորեն կապված են նաև գյուղական հիդրոկայանների և ջրհան կայանների շենքերը, որոնք նորություն են և բոլորովին անհայտ էին հին գյուղին։ Մեր երկրի գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիան պայմանավորում է գյուղատնտեսական աշխատանքների աշխատատար պրոցեսների մեքենայացումը և հանդիսանում է այն տեխնիկական



Կաթնապրանքային օրինակելի ֆերմայի գլխավոր հատակագիծը
Հեղ. ճարտ. Բ. Սմբատյան

1. Կովանոց 100 կովի համար։ 2. Գոմ մատղաշների համար։ 3. Հորթանոց 100 հորթի համար։ 4. Սերմավորման կայան։ 5. Բրիգադային տուն։ 6. Կաթի մշակման կետ։ 7. Արմատապտուղների պահեստ։ 8. Կերախոհանոց։ 9. Կոնցենտրատների պահեստ։ 10. Կերի պահեստ։ 11. Սիլոսային խրամատներ։ 12. Կախովի միառելսային ճանապարհ։ 13. Պահականոց։ 14. Ջրամբար։ 15. Բակ կենդանիների համար։ 16. Ֆերմայի մուտք։ 17. Ջուգարան։ 18. Գոմաղբի հավաքման տեղ։ 19. Հակահրդեհային ինվենտարի պահեստ։ 20. Ավտոմեքենաների կշեռք։

բազան, որի վրա խարսխվում է սոցիալիստական գյուղատնտեսության և անասնապահության մթերատվության բարձրացման ուղղությամբ կատարվող ամբողջ աշխատանքը։ Մանր կոլտնտեսությունների խոշորացումը լայն հնարավորություններ ստեղծեց գյուղական բնակավայրերը ավելի լայն մասշտաբներով էլեկտրիֆիկացիայի ենթարկելու և էլեկտրական էներգիան գյուղատնտեսական արտադրության համարյա թե բոլոր ձևերի մեջ ներդնելու ուղղությամբ։

Ռեսպուբլիկայի առաջավոր շատ կոլտնտեսություններում էլեկտրականությունը օգտագործվում է կովերը կթելու, ոչխարները

խուզելու, կերը պատրաստելու, կալսելու, հացահատիկ մաքրելու, անտառանյութը սղոցելու և շատ ուրիշ այլ աշխատանքներում։

Էլեկտրական էներգիան հնարավորություն տվեց կիրճերով հոսող գետերի ջրերը վեր հանել դեպի սարահարթերը և սարալանջերը, ոռոգել դարերի ընթացքում ծարավից պապակված հազարավոր հեկտար խոպան հողեր, և դրանք ծածկել ծփացող արտերով, այգիներով և ծիախոտի պլանտացիաներով։



Ապարանի անասնապահական ֆերման

Գյուղական էլեկտրակայանները համեմատաբար ոչ մեծ շենքեր են, հաճախ դասավորված անդնդախոր կիրճերում, լեռնային գետակների ափերին և իրենց գերակշռող մեծամասնությամբ հաջող կերպով կապվում են շրջապատի բնության հետ։ Երբեմն ոչ մեծ լեռնային գետակի վրա դասավորված են լինում մի քանի կայաններ, ինչպես, օրինակ, Արենի գյուղի մոտ, Արփա գետի վրա դասավորված փոքր հիդրոկայանների կասկադը, որը էլեկտրականություն է մատակարարում Ազիզբեկովի շրջանի բազմաթիվ գյուղերին։

Առավել հաջողված կառուցվածքներում հեղինակները, կարողացել են հմտորեն ներգծել կայանի շինությունը շրջապատող բնության մեջ, և գտնել այն ներդաշնակությունը, որը այնքան անհրա-



*Ագարակի միջկոլտնտեսային հիդրոկայանը*
*Հեղ. ճարտ. Տ. Մարության*

*ժեշտ է ճարտարապետական գործերում։ Այդ տեսակետից անհրաժեշտ է նշել Այգեձորի, Մարտունու, Ագարակի, Արտաշատի (հեղ. ճարտ. Տ. Մարության), Հոկտեմբերյանի, Այրումի, Արենի, Ակների (հեղ. ճարտ. Ս. Մանուկյան) կայանների շենքերը, որտեղ հեղինակները պարզ և լակոնիկ ձևերով հասել են ճարտարապետական անհրաժեշտ արտահայտչականության, հաջող կերպով դրսևորելով ամբողջ կառուցվածքի արտադրական բնույթը։ Այսպես, օրինակ, Ագարակի միջկոլտնտեսային հիդրոկայանը դասավորված մի նեղ և երկար կիրճի վերջում, կառուցված մաքուր տաշած մոխրագույն քարից, հաջող կերպով կապվում է շրջապատի խիստ բնության հետ։ Հատկապես լավ է լուծված ընդերկայնական ճակատը, որտեղ երեք ուժեղ որմնամույթերը և նրանց միջև դասավորված մեծ լուսամուտները ընդգծում են շենքի արտադրական բնույթը և հետաքրքիր ռիթմ ստեղծում նրա ճակատում, թեև կիսաշրջանաձև լուսամուտները անհամոզեցուցիչ են և առանձնապես չեն նպաստում կառուցվածքի արտահայտչականության գործին։ Լավ է մշակված գեներատորային դահլիճի ինտերյերը։*

Միջկոլտնտեսային հիդրոկայանների մեջ իր ընդհանուր չափերով աչքի է ընկնում Արտաշատի հիդրոկայանը (ճարտ. Տ. Մարության), որն ըստ իր հիմնական կոմպոզիցիայի, մի ընդարձակ դահլիճ է աջակողմյան մասում դասավորված սենյակներով։ Գլխավոր ճակատը երեսապատված է դարչնագույն տուֆով և մշակված



Ազարակի միջկոլտնտեսային հիդրոկայանը և անասնապահական ֆերման
Հեղ. ճարտ. Տ. Մարության

ուժեղ կամարաշարքերով։ Քարի մշակման տարբեր ձևերը, երբ մաքուր տաշած արխիվոլտները կոնտրաստ են ստեղծում պատի ընդհանուր հարթության կոպիտ տաշած ֆոնի հետ, ներդաշնակ կերպով կապում են ամբողջ կառուցվածքը շենքի հետևում բարձրացող բլրաշարքի լերկ լանջերի և ապառաժների հետ։

Սակայն, այստեղ չի կարելի լիովին հաջողված համարել կողային ճակատի և հատկապես գլխավոր մուտքի համաչափությունները, որի կառուցումը ավարտվել է ամբողջ շենքը վերջացնելուց հետո, երբ գեներատորները տեղավորելուց հետո այլևս անհրաժեշտ չէր ունենալ այդքան մեծ մուտք։

Ի հակադրություն հյուսիսային ճակատի, հարավային ճակատը, որը ուղղված է դեպի ենթակայան, մշակված է համեմատաբար հաջող։ Սպիտակ ավաղի վրա ցայտուն կերպով դրսևորվում են բազմաթիվ դռները և նրանցից վեր դասավորված կիսաշրջանաձև

*ջրով լուսամուտները, իսկ ճակատը ավարտող ճակատոնը հաջող կերպով կապում է շենքի կենտրոնական մասը թևերի փոքր ինչ դուրս եկող ծավալների հետ։*

*Գյուղական փոքր հիդրոկայանների մեջ իր անսովոր կոմպոզիցիայով հետաքրքրական է Ակների կայանը (ճարտ. Ս. Մանուկյան), որը դասավորված է առաջին հարկը կազմող բարձր հիմնախարիսխի վրա, կպած է մոտակա ժայռի կրծքին և լավ տպավորություն է թողնում։*



*Արտաշատի միջկոլտնտեսային հիդրոկայանը*
*Հեղ. ճարտ. Տ. Մարության*

*Կառուցվածքի երկրորդ հարկի առանձին բաժանմունքները միմյանց հետ են կապվում նրանց շրջանցող ոչ լայն կոնսոլային պատշգամբի միջոցով, որից հիանալի տեսարան է բացվում լեռնային գետակի անդնդախոր կիրճի ամբողջ երկայնքով։ Սակայն պիտի նշել, որ հեղինակին լիովին չի հաջողվել գտնել այդ պատշգամբի և հատկապես այն պահող պահունակների համաչափությունները։*

*Գյուղական հիդրոկայանների մեջ աչքի է ընկնում Այգեձորի (ճարտ Տ. Մարության) հիդրոկայանը։ Այստեղ հատկապես հաջող են ընտրված գեներատորային դահլիճի ընդերկայնական ճակատի համաչափությունները և նրան ձևավորող բարձր լուսամուտները։*

*Սակայն այս բոլորի հետ միասին չի կարելի չնշել. որ տալով հիմնականում ֆունկցիոնալ ճիշտ լուծում առանձին կառուցվածքներում հեղինակները շատ են հրապուրվել արտաքին ճակատների մշակման հարցերով, և այդ պատճառով էլ ընակավայրից դուրս,*



*Այգեձորի միջկոլտնտեսային հիդրոկայանը*
*Հեղ. ճարտ. Տ. Մարության*

*լեռների և կիրճերի մեջ դասավորված այս շենքերը ստացել են անհամեմատ հարուստ ճարտարապետական հարդարանք, մինչդեռ հատկապես այս կառուցվածքները պետք է աչքի ընկնեն իրենց զուսպ ձևերով և ավելորդ դեկորատիվ զարդաքանդակների բացակայությամբ։ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի հայտնի որոշումը այս հարցում ևս ելակետ պետք է հանդիսանա, ապագայում կառուցվող հիդրոկայանների նախագծման ժամանակ։*

*Գյուղական հիդրոկայանների կառուցվածքների հետ միասին իրենց յուրահատուկ տեղն ունեն նաև ջրհան կայանների շենքերը, որոնց գողտրիկ ծավալները ձորերի եզրերին և կամ կիրճերի մեջ նշանակալից հետաքրքրություն են ներկայացնում։ Այդ կայաններից հատկապես հիշատակության արժանի են ճարտ. Գ. Մուշեղյանի նախագծերով կառուցված Ալավերդու (Աթոռիկի) և Քանաքեռի*

ջրհան կայանների շենքերը, որտեղ հեղինակը կարողացել է գտնել նրանց բնույթին համապատասխանող արտահայտիչ ձևեր։

**Ամփոփենք.**— *Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հսկայական օգնության հիման վրա գյուղի աշխատավորները կառուցել են հազարավոր բարեկարգ արտադրական շենքեր։ Արտադրական կառուցվածների բազմաթիվ կոմպլեքսները իրենց յուրահատուկ տեղն ունեն գյուղական բնակավայրերի ճարտարապետության մեջ և առավել ցայտուն կերպով ցուցադրում են սոցիալիստական գյուղատնտեսության հանրային բնույթը։*

*Գյուղական հիդրոկայանները նոր, թարմ մոտիվներ են մտցնում կոլտնտեսային գյուղի ճարտարապետության մեջ և նրանց լավագույն օրինակները իրավամբ պատկանում են սովետահայ ճարտարապետության նվաճումների թվին։ Սակայն արտադրական կառուցվածքների ուսումնասիրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ էական հաջողությունների կողքին, կան նաև որոշակի թերություններ, որոնց վերացումը ամենաառաջնակարգ խնդիրներից մեկն է հանդիսանում։ Այդ ամենից առաջ վերաբերում է արտադրական ֆերմաների և տեղական պայմաններին համապատասխանող արտադրական կառուցվածքների տիպային նախագծերի մշակմանը, որոնց բացակայությունը իր անմիջական բացասական ազդեցությունն է ունենում արտադրական կառուցվածքների որակի և այստեղից էլ՝ գյուղատնտեսության արտադրողականության վրա։*

*Զգալի թերություն է հանդիսանում նաև որոշ կոլտնտեսային հիդրոկայանների արտաքին ճակատների մշակման ժամանակ թույլ տրված ավելորդությունները և շռայլումները։*

*Էական թերություններ կան նաև արտադրական կառուցվածքների ռացիոնալ կոնստրուկցիաների մշակման գործում։ Չի կարելի բավարար համարել մինչև այժմ մշակված հակասեյսմիկ միջոցառումները։ Փաստորեն քիչ բան է արված հավաքովի երկաթ-բետոնի կոնստրուկցիաների օգտագործման գործում, որոնք էական նշանակություն ունեն և՛ անտառանյութերը խնայելու և կառուցվածքների դիմացկունությունը մեծացնելու տեսակետից։ Շատ տեղերում միանգամայն անբավարար է շինարարական աշխատանքների որակը, որը վերջին հաշվով իր բացասական ազդեցությունն է ունենում անասունների ներքին օդա-ջերմային ռեժիմի և այստեղից էլ անասունների մթերատվության բարձրացման գործում։*

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ

Կոլտնտեսային կարգերի հաստատումը, տնտեսական հնարավորությունների աննախընթաց վերելքը, գյուղացու կուլտուրական պահանջմունքների անհամեմատ աճը միանգամայն նոր նախադրյալներ ստեղծեցին մեր օրերի ժողովրդական ճարտարապետության զարգացման համար։

Ինչպես արդեն նշվեց, ժողովրդական բնակելի տան կոմպոզիցիոն ձևերը միևնույնը չէին Հայաստանի տարբեր շրջաններում։ Անմիջականորեն կապված ժողովրդի ապրելակերպի, ամեն մի շրջանի էկոնոմիկայի և կլիմայական պայմանների հետ, ժողովրդական բնակելի տան հիմնական ձևերը մեծ մասամբ թելադրվում էին բնակարանի այն կիսաարտադրական ֆունկցիայով, որը այնքան բնորոշ էր նախասովետական շրջանի գյուղական բնակելի տան համար։ Այդ շրջանում բնակելի տունը ընդհանուր առմամբ հանդիսանում էր ոչ միայն բնակարան այդ հասկացողության նեղ առումով, այլև իր մեջ պարունակում էր այն բոլոր օժանդակ կառուցվածքները, որոնք անհրաժեշտ էին գյուղացու ապրուստի միջոցների պահպանման և մշակման համար։ Եվ այդ է պատճառը, որ ամբողջ բնակարանում, բնակելի մասի հետ միասին, նրա կողքին, ոչ պակաս նշանակություն էր ստանում բնակարանի այն մասը, որտեղ պահվում էին կենդանիները, մթերքները, այգիներից ստացած բերքը, և որտեղ վերամշակվում ու օգտագործման էին նախապատրաստվում գյուղատնտեսական արտադրության տված բարիքները։ Ահա այս երկու ֆակտորներն էին, որոնք տարբեր ապրելակերպի, տեխնիկական հնարավորությունների և միջոցների առկայության պայմաններում, աշխարհագրական և կլիմայական տարբեր միջավայրերում հանգեցնում էին ժողովրդական բնակելի տան այն տարբեր կոմպոզիցիոն ձևերին, որոնք և տեսնում ենք Հայաստանի տարբեր մասերում։

Մյուս կողմից, ժողովրդական բնակելի տան առանձին ձևերի մշակման նախադրյալները կարելի է բաժանել երկու հիմնական մասերի.

ա) նախադրյալներ, որոնք հաստատուն են և էապես չեն փոփոխվում ժամանակի ընթացքում (կլիման, տեղական շինանյութերը և այլն).

բ) նախադրյալներ, որոնք փոփոխվում են մարդկային հասարակության զարգացման հետ մեկտեղ (բնակարանի կազմը, կուլտուրայի և տեխնիկայի զարգացման մակարդակը, կոնստրուկտիվ էլեմենտներ և այլն).

Կոլտնտեսային կարգերի հաստատումը հիմնավորապես վերափոխեց երկրորդ խմբի նախադրյալների բնույթը։

Գյուղացու կյանքում կատարված արմատական փոփոխությունները, որոնք ամենից առաջ արտահայտվեցին արտադրության միջոցների հանրայնացումով, երբ կոլտնտեսականի ապրուստի հիմնական, որոշիչ աղբյուրը դարձավ հանրային արտադրությունից ստացվող բարիքները, արմատապես փոխեցին բնակելի տան կոմպոնենտների փոխհարաբերությունները։

Բնակարանի կիսաարտադրական բնույթի վերացման հետ մեկտեղ վերացավ գյուղատնտեսական մի շարք օժանդակ շենքերի կառուցման անհրաժեշտությունը, և ամբողջ բնակարանի կոմպոզիցիայի մշակման համար ստեղծվեցին միանգամայն նոր նախադրյալներ, որտեղ հիմնականը, որոշիչը դարձավ բնակելի մասը, բնակելի սենյակները, իսկ արտադրական կառուցվածքները ստացան նոր բնույթ և որոշ չափով սահմանափակվեց նրանց ծավալը։

Սակայն, դրա հետ միասին, մնացին այն նախադրյալները, որոնք անմիջականորեն կապված էին տեղի աշխարհագրական միջավայրի, կլիմայի և տեղական շինանյութերի առկայության հետ։

Ինչպես նշվեց արդեն, նախասովետական շրջանում այդ նախադրյալներն իրենց էական, անմիջական ազդեցությունն են ունեցել բնակելի տների կոմպոզիցիոն ձևերի ստեղծման վրա և որոշիչ հանդիսացել առանձին կոմպոզիցիոն և կոնստրուկտիվ էլեմենտների մշակման հարցում։ Թվում է, թե այսօր էլ պետք է այդ նախապայմանները պահպանեին իրենց նույն նշանակությունը, որովհետև լեռնային շրջաններում այսօր էլ այնքան ցուրտ է ձմեռը, և բքաշունչ է քամին, ինչպես և դարեր առաջ։

Սակայն Սովետական իշխանության հաստատումը և հատկապես կոլտնտեսային կարգերի հաղթանակը իրենց որոշակի ազդե-

*ցությունն ունեցան նաև այս, առաջին հայացքից անփոփոխ թվացող նախադրյալների հարցում։*

*Ներկայումս արմատապես փոխվել են բնության դեմ մղվող պայքարի բոլոր պայմանները, և մեր այսօրվա կոլտնտեսականը բնավ նման չի մինչսովետական դարաշրջանների հարստահարվող և ճնշված գյուղացուն, որի համար ձմռան ամիսներին բնակարանի տաքացնելը էական պրոբլեմ էր հանդիսանում։ Եվ եթե այդ տեսակետից դեռևս նախասովետական տարիներին համեմատաբար քիչ թե շատ բարվոք էր դրությունը հարթավայրային շրջաններում, կամ անտառներով հարուստ տեղերում, ապա Հայկական լեռնաշխարհի նշանակալից մասը կազմող լեռնային անտառազուրկ շրջաններում, գյուղացիները մեծ դժվարությունների էին հանդիպում բնության խիստ պայմանների դեմ մղվող պայքարում։ Եվ պատահական չէ, որ հատկապես այդ շրջաններում են առավել մեծ քանակությամբ պահպանվել գլխատները, որտեղ բնակիչները ապրել են ձմռան ամիսներին, հաճախ անասունների հետ մեկտեղ։ Պատահական չէ նաև, որ այդ շրջաններում միայն հարուստների և կուլակների բնակարաններում է, որ հանդիպում էին հարթ առաստաղով և լուսամուտներով սենյակներ, որոնք ի դեպ, դարձյալ օգտագործվում էին առավել արտակարգ և հանդիսավոր դեպքերում։*

*Չնայած գլխատների վերացման պրոցեսը սկսվել էր դեռևս սովետական կարգերի հաստատումից շատ առաջ, սակայն Սովետական իշխանության և կոլտնտեսային կարգերի հաղթանակը միանգամայն այլ նախապայմաններ ստեղծեցին այս հարցի լուծման բնագավառում։*

*Տնտեսական հնարավորությունները և կուլտուրայի աննախընթաց վերելքը արմատապես փոխեցին հայ գյուղացուն, որը այժմ ստացել է կիսախավար գլխատներից դուրս գալու և նոր, բարեկարգ, հարթ առաստաղով և լուսավոր բնակարաններ կառուցելու բոլոր հնարավորությունները, շենքեր, որոնք նա կարող է այժմ առանց դժվարության տաքացնել նույնիսկ ամենախիստ ձմռան ամիսներին։*

*Դրա հետ միասին պետք է նշել, որ թեև նույն այդ լեռնային շրջաններում կառուցվող հարթ առաստաղով և երկթեք ծածկով ու լուսամուտներով բնակելի տները սկզբունքորեն մոտ են հարթավայրային շրջանների բնակարաններին, բայց և այնպես նրանք վերջիններիս մեխանիկական կրկնողությունը չեն, այլ ներկայաց-*

նում են միանգամայն նոր տիպի կառուցվածքներ, որոնք անհայտ էին հին, նախասովետական գյուղին։

Այս հանգամանքը ամենից առաջ դրսևորվում է այդ նոր տների ընդհանուր կոմպոզիցիայի, նրանց առանձին մասերի փոխհարաբերության և դասավորության մեջ, որտեղ կոլտնտեսականները կարողանում են օգտագործել հարթավայրային շրջանների բնակելի տների առանձին ձևերը, նրանց հարմարեցնելով լեռնային շրջանների կլիմային, լրացնելով մի շարք նոր էլեմենտներով և ստեղծելով բնակելի տների միանգամայն նոր և յուրահատուկ տիպեր։

Այս կապակցությամբ հատկապես անհրաժեշտ է նշել գլխատների կոմպոզիցիաների պահպանումը որոշ շրջանների հացատներում, որտեղ նրանց գոյությունը տվյալ էտապում միանգամայն տրամաբանական է և բացատրվում է այդ շրջանների տեղական կոնկրետ պայմաններով։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կոլտնտեսային կարգերի հաստատման հետևանքով, երբ Հայաստանի բոլոր շրջաններում ստեղծվեցին ապրելակերպի համանման պայմաններ, և երբ գյուղացու ապրուստի հիմնական աղբյուրը հանդիսանում է կոլտնտեսային հանրային արտադրությունից ստացվող բարիքները, իսկ տնամերձ տնտեսությունը ունի միայն օժանդակ նշանակություն, արմատապես վերանում է բնակարանի կիսաարտադրական ֆունկցիան և այնտեղ հիմնականը, որոշիչը դառնում է բնակելի մասը, բնակելի սենյակները։

Օժանդակ կառուցվածքները, որոնք տարբեր են որոշ շրջաններում, իրենց ծավալով և տեսակարար կշռով համեմատաբար փոքր են և բնավ չեն որոշում բնակելի տան ընդհանուր կոմպոզիցիան։

Բացի այդ, նշանակալից չափով թուլացել է նաև աշխարհագրական ֆակտորի ազդեցության նշանակությունը, և այժմ լեռնային շրջաններում էլ տեղ են գտնում առավել հարմար և բարեկարգ բնակելի տների տիպեր, ընդ որում նրանք հանդիսանում են ժողովրդական ճարտարապետության զարգացման նոր էտապի արգասիք և այդ տեսակետից էլ նշանակալից հետաքրքրություն են ներկայացնում։

* * *

Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղի ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրությունը առավել հարմար է կատարել ըստ աշխարհագրական գոտիների, որոնք այնքան

բնորոշ են Հայաստանի համար և այնքան մեծ նշանակություն են ունեցել ամեն մի շրջանի բնակելի տների կազմավորման հարցում։

Հայաստանի կլիման շատ բազմազան է։ Թեև Հայաստանը գտնվում է մերձարևադարձային գոտուց ոչ շատ հեռու, սակայն լեռնային ռելյեֆի շնորհիվ այնտեղ կարելի է հանդիպել բազմատիպի կլիմայական գոտիների։

Ըստ կլիմայական պայմանների Հայաստանը բաժանվում է հետևյալ գոտիների.

1. Չոր-մերձարևադարձային կլիմայի գոտի — Ղափանի, Մեղրու շրջանների ցածրադիր մասերը։

2. Չոր-ցամաքային կլիմայի գոտի — ընդգրկում է Արաքսի միջին հովիտը, որտեղ հատկապես շոգ է ամառը և ոչ ցուրտ ձմեռը։

3. Բարեխառն շոգ կլիմայի գոտի — ընդգրկում է նախալեռնային շրջանները (Կոտայք, Աշտարակ, Թալին), որտեղ համեմատած Արարատյան դաշտավայրի հետ ամառը ավելի զով է, իսկ ձմեռը ավելի ցուրտ։

4. Լեռնային կլիմայի գոտի — տարածվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում, Սևանի ավազանում և Զանգեզուրում. ամառը զով է, ձմեռը շատ խիստ.

5. Բարեխառն անտառային գոտի — ընդգրկում է հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջանները, որտեղ ամառը զով է, իսկ ձմեռը խիստ չէ։ Շատ են տեղումները և ամռանը և ձմռանը[1]։

Ըստ աշխարհագրական ռելյեֆային պայմանների Հայաստանը բաժանվում է հետևյալ երեք հիմնական մասերի.

1. Լեռնային շրջաններ.

2. Նախալեռնային շրջաններ.

3. Հարթավայրային՝ ցածրադիր շրջաններ։

Կոլտնտեսային գյուղի ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրությունն էլ առավել հարմար է կատարել հենց այդ շրջանների համապատասխան։

## ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվեց, լեռնային կլիմայական գոտին տարածվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում (Ղուկասյան, Ախուրյան, Արթիկ, Սպիտակ), Սևանի ավազանում (Սևան, Բայա-

[1] Ա. Բաղդասարյան, Ա. Ծուղուրյան, Կ. Օհանջանյան, Հայկական ՍՍՌ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1951, էջ 30։

գետ, Մարտունի, Թասարգեշար) և Զանգեզուրում (Միկոյան, Սիսիան)։

Նախասովետական տարիներին այս շրջանների բնակչության հիմնական զբաղմունքն էր անասնապահությունը և դաշտավարությունը։ Անտառների համարյա թե իսպառ բացակայությունը, ցուրտ ձմեռը, վառելիքի միակ տեսակը՝ աթարը և կյանքի համեմատաբար ծանր պայմանները դեռևս շատ հնուց որոշել էին այս շրջանների բնակելի տների հիմնական տիպի՝ գլխատան ձևերը։

Այն հանգամանքը, որ գլխատան ճարտարապետական կոմպոզիցիան մշակված դեռևս տոհմատիրական հասարակարգի ընդերքում, պահպանել է իր գոյությունը այսքան երկար տարիներ և հասել մինչև մեր օրերը, իհարկե, չի կարելի պատահական համարել։ Բնակելի տան այդ տիպը լիովին համապատասխանում էր մինչսովետական հասարակարգում ապրող լեռնային շրջանների գյուղական բնակչության ապրելակերպին, և այն կարող էր բավարարել և՛ մեծ և՛ փոքր ընտանիքներին։ Այս բանը շատ կարևոր էր հատկապես հին ժամանակներում, երբ հաճախ ամբողջ գերդաստանը ապրում էր համատեղ. տեղավորվում մի բնակարանում, մի գլխատան մեջ։ Բացի այդ, նույն կոմպոզիցիայով հեշտությամբ հնարավոր էր կառուցել նաև համեմատաբար փոքր տներ, այս անգամ արդեն ամեն մի առանձին ընտանիքի համար, ճիշտ այնպես, ինչպես հանդիպում ենք մինչև մեր օրերը պահպանված գլխաների գերակշռող մեծամասնության մեջ[1]։

Գլխատների մյուս առավելությունը կայանում է նրա ծածկի յուրահատուկ կոնստրուկտիվ ձևերի մեջ, մի հանգամանք, որը նույնպես քիչ նշանակություն չի ունեցել այդ տիպի «երկարակեցության» համար։

Գլխատան կոնստրուկտիվ առավելություններից մեկն այն է, որ նրա ծածկը՝ հազարաշենը, համեմատած համանման չափեր ունեցող հարթ ծածկերի հետ, նշանակալից չափով ավելի պակաս երկարության գերաններ է պահանջում։ Հազարաշենի կոնստրուկտիվ ձևերը հնարավորություն են տալիս ամբողջ ծածկում գործադրել ընդամենը 4 երկար գերան (իսկ որոշ տիպի ծածկեր հնարավոր է կառուցել առհասարակ առանց երկար գերանների), որը

---

[1] Степан Лисициан, К изучению армянских крестьянских жилищ. Карабахский Карадам. Известия Кавказского Историко-Археологического Института, т. III, 1925.



Հայկական գլխատների ծածկերի տեսակները

դարձյալ էական նշանակություն ուներ Հայաստանի այս գրեթե անտառազուրկ մասերում, որտեղ փայտի գերանները բերվում էին այլ շրջաններից։ Դրա հետ միասին հազարաշենի վերին մասի նշանակալից թեքության պայմաններում հողի ծածկը եւ միանգամայն բավարար կերպով պաշտպանում էր բնակարանը մթնոլորտային տեղումներից և հատուկ կափարիչ էր ունենում միայն երդիկը։ Մյուս կողմից գլխատների լայն տարածմանը մեծապես նպաստում էր նաև այն հանգամանքը, որ նրանք հիանալի կերպով հարմարեցված էին այդ շրջանների վառարանի փաստորեն միակ տեսակին՝ թոնրին։ Գլխատան կենտրոնական, կոնաձև մասը ստեղծում էր ծխի հեռացման համար առավել նպատակահարմար պայմաններ. և դեպի երդիկն էր ձգում թոնրի ամբողջ ծուխը։ Լուսամուտների բացակայությունը նպաստում էր ներքին ջերմության պահպանմանը. այս հանգամանքը միաժամանակ հնարավորություն էր տալիս ազատ կերպով դասավորել գլխատունը, կաշկանդված չլինելով ոչ շրջապատի կառուցվածքներից, ոչ էլ օրիենտացիայի պահանջներից, և ընտրելով տեղանքի նկատմամբ առավել նպատակահարմար դասավորություն[1]։

Ահա թե ինչո՛ւ չպետք է պատահական թվա, որ գլխատան կոմպոզիցիան լայնորեն տարածված է ամբողջ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում, սկսած Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան[2]։

Լեռնային շրջանների ժողովրդական բնակելի տան կոմպլեքսի մեջ գլխատունը հիմնական կորիզն էր հանդիսանում և նրան կից, համարյա թե անխտիր բոլոր բնակարաններում կցվում էին մի շարք օժանդակ կառուցվածքներ, կապված գյուղատնտեսական արտադրության այդ շրջանի գլխավոր ճյուղի և հատկապես անասնապա-

---

[1] Գլխատան կոմպոզիցիան իր որոշակի դրսևորումն է գտել միջնադարյան հայկական ճարտարապետության մի շարք կառուցվածքներում։ Այդ բանը առանձնակի հստակությամբ դրսևորվում է գավիթներում, որոնց գերակշռող մեծամասնությունը կրկնում է գլխատան չորս սյուներով և երդիկով կոմպոզիցիան (Սանահին, Հախպատ, Հովհաննավանք, Սաղմոսավանք և այլն)։ С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952. Որոշակի կապ է նկատվում նաև գլխատների և սեղանատների միջև (Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1946)։

[2] М. Ильина, Древнейшие типы жилищ Закавказья, Сообщения института истории и теории архитектуры Академии архитектуры СССР, выпуск 5, Москва, 1946.

հության հետ (գոմեր, մարագներ և այլն)։ Այդ կառուցվածքներից հիմնականը միշտ էլ հանդիսանում էր գոմը, որի մուտքը հաճախ արվում էր գլխատան միջից, և հնարավորություն էր տալիս ձմռան ամիսներին օգտագործել կենդանիների ջերմությունը։ Հաճախ ամբողջ ընտանիքը փոխադրվում էր գոմ և ապրում նրա մի կողմում հարմարեցված մասում, այսպես կոչված գոմի օդայում։ Կենդանիների ջերմության օգտագործման հարցերից ոչ պակաս նշանակություն ուներ կենդանիների ապահովության հարցը, որը մինչսովետական ժամանակներում հանդիսանում էր գյուղացու առավել մեծ հոգսերից մեկը, իսկ նշված կոմպոզիցիայի ժամանակ դա ստանում էր համեմատաբար բավարար լուծում։ Մյուս կողմից, չնայած նրան, որ նշված դասավորությունը ստեղծում էր սանիտարական անբարենպաստ պայմաններ, բայց և այնպես հնարավորություն էր տալիս խնամել կենդանիներին առանց ծածկի տակից դուրս գալու, որը կարևոր էր հատկապես լեռնային շրջանների խիստ ձմռան պայմաններում[1]։

Այսպիսով, կարելի է ասել, որ լեռնային շրջանների ժողովրդական բնակարանի կոմպլեքսը և հատկապես գլխատան կոմպոզիցիան, մշակված դեռևս տոհմատիրական հասարակարգի ընդերքում, համապատասխանում էր մինչսովետական շրջանի գյուղացու ապրելակերպին և հանդիսանում ժողովրդական ճարտարապետության, ժողովրդի ծոցից դուրս եկած վարպետների առավել նշանակալից նվաճումը։

Մենք այսքան մանրամասն կանգ առանք գլխատների կոմպոզիցիայի վրա հատկապես այն պատճառով, որ մինչև այսօր էլ Հայաստանի վերը նշված շրջաններում դեռևս պահպանվում են գլխատները, և նրանց վերացման պրոցեսը հանդիսանում է Սովետական իշխանության և կոլտնտեսային կարգերի հաղթանակի առավել ցայտուն դրսևորումներից մեկը ժողովրդական ճարտարապետության բնագավառում։

---

[1] Հատկանշական է, որ այս վերջին հանգամանքը ՌՍՖՍՌ հյուսիսային շրջաններում հիմք է հանդիսացել ժողովրդական ճարտարապետության մեջ այնքան լայն տարածված փակ բակերի կոմպոզիցիայի ստեղծման համար, որոնք նույնպես հնարավորություն են տալիս խնամել անասուններին առանց ծածկի տակից դուրս գալու, որը էական նշանակություն ունի երկարատև ձմեռների և ձմռան խիստ սառնամանիքների ժամանակ (Е. Ащепков, Русское деревянное зодчество, Москва, 1950, стр. 16).



Գլխատան ընդհանուրը տեսքը

Այս կապակցությամբ ոչ պակաս նշանակություն ունեցավ սովետական գյուղի կուլտուրայի ընդհանուր մակարդակի անհամեմատ աճը, երբ լայն նյութական հնարավորությունները արմատապես փոխեցին գյուղացու ամբողջ ապրելակերպը։ Այժմ համարյա բոլոր գյուղերում կառուցվում են դպրոցներ և ակումբներ, մանկապարտեզներ և մանկամսուրներ, հիվանդանոցներ, միջկոլտնտեսային էլեկտրակայաններ և գյուղատնտեսական արտադրության բարեկարգ, մեքենայացված կապիտալ կառուցվածքներ։

Կոլտնտեսականների բնակարաններում այժմ սովորական են էլեկտրական լամպը և հարթուկը, ռադիոն, գրքի պահարանը, հանդերձապահարանը, զսպանակավոր մահճակալները և շատ այլ իրեր, որոնք լիովին անհայտ էին նախասովետական գյուղին։

Ահա այս պայմաններում գլխատունը իր կիսախավար ներքին տարածություններով, երդիկից ներթափանցող աղոտ լույսով, նրա կենտրոնում դասավորված թոնրով, արմատական հակասության մեջ էր նոր կյանքի նոր պայմանների հետ։

Այդ է պատճառը, որ այժմ անխտիր բոլոր շրջաններում կոլտնտեսականները քանդում են գլխատները և նոր տիպի բնակարաններ կառուցում, որոնք հարմար են, լուսավոր ու բարեկարգ։

Կյանքի նոր պայմանները այժմ լիովին հնարավորություն են տալիս կոլտնտեսականներին ձեռք բերել անհրաժեշտ բոլոր շինանյութերը նոր բնակարան կառուցելու համար։ Նորակառույց բնակելի սենյակներից արդեն մեկ ընդ միշտ դուրս է վանված թոնիրը և ձմռան ամիսներին բնակարանը տաքացվում է պատի կամ թիթեղյա վառարաններով։ Թեև վառելիքի հիմնական տեսակը նշված շրջաններում այժմ էլ դեռևս մնում է աթարը, սակայն այն ոչ պակաս հաջողությամբ օգտագործվում է և՛ պատի և՛ թիթեղյա վառարաններում։ Այս նոր տիպի բնակարաններում բնակելի սենյակները որոշակի կերպով անջատված են հացատնից, որտեղ դեռևս պահպանվում է թոնիրը, որպես ճաշ եփելու և գլխավորապես հաց թխելու տրադիցիոն սովորություններից եկող հարմար վառարանի մի ձև։

Ահա այս հացատներում է, որ մինչև այժմ պահպանվում է գլխատան ձևը և շատ դեպքերում դա նույն հին բնակարանի կենտրոնը հանդիսացող հին տունն է, որ ներկայումս վեր էածվել հացատան, մինչդեռ կոլտնտեսականի ամբողջ ընտանիքը տեղափոխվել է նրան կից կառուցված հարթ առաստաղով, լուսավոր և բարեկարգ սենյակները։

Հատկանշական է, որ այժմ գլխատան կոմպոզիցիան բնավ չի օգտագործվում բնակելի սենյակներում. և ընդհակառակը, հին գլխատները շատ հաճախ վեր են ածվում հացատների։ Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, գլխատան կոմպոզիցիան լայն օգտագործում է գտնում նույնիսկ ամենավերջին տարիների նորակառույց հացատներում։

Կարելի է նշել բազմաթիվ օրինակներ, երբ այսօր էլ կառուցվում են այնպիսի բնակարաններ, որտեղ բնակելի սենյակների կողքին, սովորաբար նրանցից անջատված ոչ լայն միջանցքով, տեղավորվում է համեմատաբար փոքր չափերի գլխատունը, որը շատ հաճախ ծառայում է և՛ որպես խոհանոց, և՛ որպես մթերքների պահեստ, և՛ որպես ճաշասենյակ։

Այս տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Սևանի ավազանի, և հատկապես Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի շրջանների ժողովրդական ճարտարապետության այսօրվա պրակտիկան։

Առանձնապես հետաքրքիր են վերջին տարիներում կառուցված բնակելի տները, որտեղ և հարթ ծածկով սենյակները, և գլխատունհացատունը հանդես են գալիս միասնական ճարտարապետական ամբողջության մեջ, և որտեղ ցայտուն կերպով դրսևորվում են

գյուղացու կյանքում կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ առաջ եկած փոփոխությունները։ Ժողովրդական ճարտարապետության այսօրվա պրակտիկայում լիովին պահպանվել են հնից եկող այն պրոգրեսիվ տրադիցիաները, որոնք վերաբերվում են բնակելի տունը հերթականությամբ կառուցելու հարցերին։ Ինչպես ցույց է տալիս ժողովրդական ճարտարապետության հնագույն օրինակների ուսումնասիրությունը, գյուղացու բնակելի տունը համարյա միշտ կառուցվել է աստիճանաբար և մի հիմնական կենտրոնական միջուկին հետզհետե մեծ հմտությամբ միացվել են բնակարանի մյուս օժանդակ մասերը և կառուցվածքները։

Այս ռեալիստական մոտեցումը ճարտարապետության հարցերին, ժողովրդական ճարտարապետության յուրահատուկ գծերից մեկն է և անշուշտ պետք է լայնորեն ուսումնասիրվի և օգտագործվի այսօր, գյուղի համար մեր ճարտարապետների կողմից նախագծվող բնակարաններում։ Որպես տիպիկ մի օրինակ կարելի է նշել Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի Ս. Առաքելյանի բնակարանը, որը կառուցվել է երկու հերթով։ Սկզբում, 1948—1949 թվականների ընթացքում կառուցել են մառանը և հացատունը, միաժամանակ ապրել այնտեղ և երբ հնարավորություն է ստեղծվել, ձեռնարկել են հիմնական բնակելի սենյակների կառուցմանը (1950—1951 թթ.)։ Բնակարանն իր նեղ կողմով դուրս է գալիս դեպի փողոց, իսկ ամբողջ ընդերկայնական ճակատով դեպի բակը, ընդ որում նա դասավորված է հողամասի մի անկյունում, և դեպի հարևանն է նայում բնակարանի խուլ պատը։ Այսպիսով, բնակարանը փաստորեն կազմված է երկու մասից։ Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այստեղ ներկայացված երկու մասերն էլ հանդիպում են առանձին-առանձին, որպես անջատ կառուցվածքներ։ Այդ տեսակետից հատկապես հատկանշական է առաջին մասի կոմպոզիցիան, որտեղ զուգակցված են սենյակը և հացատունը. մի կոմպոզիցիա, որը մեծ տարածում ունի այս շրջաններում։

Այսպես, օրինակ, 1950 թ. կառուցված Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղում Ա. Բաղալյանի բնակարանում համեմատաբար ոչ լայն միջանցքը բաժանում է բնակելի սենյակը հացատնից, և ամբողջ կոմպոզիցիան ստացվում է կոմպակտ և համախմբված։ Այստեղ փաստորեն ներկայացված է ժողովրդական բնակելի տան այն առաջին հիմնական մասը, որի շուրջը և կառուցվում են մնացած բոլոր կառուցվածքները և առաջին հերթին գոմը։

Ինչպես արդեն նշվեց, գոմի դասավորության հարցում դարե-

րից եկող տրադիցիաները մինչև այսօր էլ դեռևս այնքան ուժեղ են և այնքան կենսունակ, որ գոմը կառուցվում է կպած բնակելի սենյակներին, թեև անհրաժեշտ է նշել, որ այժմ իսպառ բացակայում է գոմի մուտքը բնակարանի ներսում դասավորելու հին պրակտիկան, և դրա փոխարեն գոմը անջատվում է բնակարանի մյուս մասերից միջանցքով, որը թեև չի կարելի բավարար համարել սանիտարական տեսակետից, բայց և այնպես վկայում է այն նշանակալից տեղաշարժի մասին, որ տեղի է ունեցել ժողովրդական ճարտարապետության զարգացման բնագավառում։ Այդ տեսակետից պետք է նշել Բասարգեչարում Ս. Գևորգյանի բնակարանը, որտեղ գոմը անջատվում է հացատնից մի համեմատաբար նեղ միջանցքով, ընդ որում հացատունը իր մյուս պատով ընդհուպ կպած է բնակելի սենյակին և կապվում է վերջինիս հետ մեկ դռնով։ Այստեղ ևս բնակարանը փաստորեն ունի մեկ մուտք, որը տանում է և՛ դեպի հացատունը, և՛ դեպի բնակելի սենյակը, և՛ դեպի գոմը։

Բնակարանի առանձին կոմպոնենտների այսպիսի դասավորությունը, իհարկե, չի կարելի բավարար համարել, եթե ի նկատի ունենանք այն հակասանիտարական դրությունը, որը ստեղծվում է գոմի առջև ընկած միջանցքում։ Սակայն, պետք է նշել, որ նորակառույց բնակարանների գերակշռող մեծամասնության մեջ գոմը որպես կանոն ունենում է անասունների համար առանձին մուտք, արված անմիջապես բակից, ընդ որում շատ հաճախ պահպանվում է նաև մի առանձին մուտք էլ բնակարանի մյուս մասերից՝ միջանցքից կամ ուղղակի հացատնից, որը հնարավորություն է տալիս պահպանել կենդանիների խնամքը ձմռան ամիսներին, առանց բնակարանից դուրս գալու։ Այդ տիպի բնակարանի օրինակ է հանդիսանում Բայազետի շրջանի Նորադուզ գյուղից Ա. Կարապետյանի բնակարանը, որտեղ միևնույն ճարտարապետական կոմպլեքսի մեջ են համախմբված բնակելի սենյակները, նրանց առջև ընկած պակեպատ պատշգամբով, հացատունը և գոմը։ Այստեղ ուշագրավն այն է, որ հացատունը և գոմը (որն ունի առանձին մուտք նաև բակից) մի նեղ միջանցքով կապվում են պակեպատ պատշգամբի հետ և այսպիսով հնարավորություն ստեղծում ձմռան ցուրտ եղանակներին գոմ գնալ՝ առանց դուրս գալու շենքից։

Այն հանգամանքը, որ պակեպատ պատշգամբները հատկապես լայնորեն տարածված են այս շրջաններում, լիովին բխում է տեղի աշխարհագրական պայմաններից և կլիմայից։ Այստեղ, լեռնային, անտառազուրկ շրջանների չոր, կոնտինենտալ կլիմայի

պայմաններում բաց պատշգամբները համարյա թե ամենուր անօգտագործելի են մնում, որովհետև ուժեղ, ցուրտ քամիները, որոնք փչում են նույնիսկ ամռան ամիսներին, իսկ ձմեռը ձյունով լցնում ամբողջ պատշգամբը, նրանց դարձնում են աննպատակահարմար։ Ահա այս պայմաններում միանգամայն տրամաբանական են ապակեպատ պատշգամբները, որոնք ժողովրդական ճարտարապետության մեջ տեղ են գտել քաղաքի ազդեցության շնորհիվ։

Ի տարբերություն քաղաքային բնակարանների ապակեպատ պատշգամբների ձևերի, որտեղ նրանց ներքևի մասը անջատվում է թեթև տախտակամածով, այստեղ այն սովորաբար ներկայացնում է հիմնախարիսխի շարունակությունը, և այսպիսով ապահովվում պատշգամբը ավելորդ ցրտեցումից։ Բացի այդ, այս հանգամանքը հնարավորություն է տալիս պատշգամբի սյուները անել ավելի կարճ, հրաժարվել ներքևի մասի տախտակամածից և այսպիսով խնայել անտառանյութը։ Ավելորդ ցրտեցումից խուսափելու համար լայնորեն տարածված է պատշգամբի կողային մասերը պատերով (անտերով) սահմանափակելու պրակտիկան, ինչպես նաև ամբողջ պատշգամբի դասավորումը բնակարանի ներս ընկած մասում, որտեղ դեպի բակ է դուրս գալիս նրա միայն մեկ, ընդերկայնական ճակատը։

Որոշակի կերպով նկատվում է կոլտնտեսականների ձգտումը անջատել ոչ միայն գոմի մուտքը բնակարանի մուտքից, այլև լիովին առանձնացնել այն մասը, որը անմիջապես կապված է տնտեսական գործունեության և հատկապես անասունների խնամքի հետ, ստանալ, այսպես կոչված, տնտեսական բակ, որի կողքին, սովորաբար բնակելի մասի մոտ, դասավորվում է սպարտեզը իր պտղատու ծառերով և բանջարանոցով։ Հետաքրքրական օրինակ է Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի բնակիչ Մ. Հարությունյանի բնակարանը։ Այստեղ ևս բնակարանը կառուցվել է երկու հերթով։ 1935—1937 թթ. ընթացքում կառուցվել են հացատունը և գոմը. իսկ հետպատերազմյան տարիներին՝ բնակելի սենյակները։

Հողամասն ունի անկյունային դասավորություն, որի մի կողմով անցնում է գյուղի գլխավոր փողոցը, իսկ մյուս կողմով՝ նրբանցքը։ Այն ժամանակ, երբ հացատունը և գոմը կառուցված են հողամասի ընդերկայնական ուղղությանը զուգահեռ, բնակելի սենյակները դասավորված են նրան ուղղահայաց, և այդպիսով փաստորեն ամբողջ հողամասը բաժանում են երկու մասի, ստեղծելով մի ընդարձակ տնտեսական բակ. իր հատուկ, դեպի նրբանց-



Մարտունու շրջանի բնակելի տների հատակագծերը

քը բացվող մուտքով և փոքրիկ ծառազարդ պարտեզով, դասավորված բնակելի սենյակների առջև գլխավոր փողոցին զուգահեռ։ Երկու բնակելի սենյակները անջատված են միջանցքով, որն ունի առանձին մուտքեր և՛ գլխավոր փողոցի, և՛ բակի կողմից։ Հարթ առաստաղով այդ սենյակները ունեն երկուական լուսամուտներ և ձմռան ամիսներին տաքացվում են թիթեղյա վառարաններով։ Բնակելի սենյակների այսպիսի դասավորությունը լայնորեն տարածված է այսօրվա կոլտնտեսային գյուղում և պետք է ասել ունի այն որոշակի առավելությունը, որ լիովին հնարավորություն է տալիս սենյակների կառուցումից հետո նրա հետևի մասում ավելացնել կամ լրացուցիչ սենյակներ. կամ օժանդակ կառուցվածքներ և կամ թե չէ հատուկ մուտք ունենալ դեպի տնտեսական բակը, ինչպես այդ տեսնում ենք այստեղ, Հարությունյանի բնակարանում։

Այսպիսով, հատակագծային այս կոմպոզիցիայում արդեն որոշակի կերպով տնտեսական կառուցվածքները անջատվում են բնակելի սենյակներից և ստեղծվում է տնտեսական գործունեության մի առանձին կենտրոն դեպի փողոցն ունեցած իր առանձին ելքով։ Բնակելի սենյակների առջև ստացված փոքրիկ բակը, որը այստեղ ծառազարդված է և իրենից ներկայացնում է մի փոքրիկ պարտեզ, հիանալի տպավորություն է թողնում։ Տնտեսական մասի անջատման այս տենդենցը, որը նկատվում է վերը նշած բնակարաններում, իր որոշակի արտահայտությունն է գտնում նույն շրջանների մի շարք այլ բնակարաններում։ Ավելի հաճախ դա նկատվում է այն նորակառույց բնակարաններում, որտեղ կոլտնտեսականը դուրս գալով գլխատնից և այն դարձնելով մառան և հացատուն, նոր բնակելի սենյակները կառուցում է արդեն հին տնից որոշ հեռավորության վրա։ Այդպես է, օրինակ, Մարտունու շրջանի Ծովինար գյուղի Հ. Կարապետյանի բնակարանը, որտեղ բնակելի սենյակները կառուցված են հին գլխատնից մոտ 20 մետր հեռավորության վրա, հողամասի մյուս կողմում։ Դրանով իսկ հացատունը և նրան կից գոմը լիովին անջատված են հարթ ծածկով և լուսամուտներով բնակարանից, որը այստեղ ևս ունի համարյա նույն կոմպոզիցիան, ինչ նախորդ օրինակում նշված Հարությունյանի բնակարանի բնակելի սենյակները, սակայն այն տարբերությամբ, որ այստեղ բնակարանը ունի միայն մեկ մուտք, և իր գլխավոր ճակատով ուղղված է դեպի նրա առջև տարածվող, խնձորենիներով շրջապատված բանջարանոցը։

Ժողովրդական բնակելի տան այս կոմպոզիցիան լայնորեն

տարածված է Ծովինարում, Նորադուզում, Ալուչալուում և Սևանի ավազանի շատ այլ գյուղերում։

Անհրաժեշտ է նշել մի շատ էական երևույթ, որը դարձյալ բնորոշ է այսօրվա գյուղին։ Առաջին հայացքից թվում է, թե թոնրի



Բնակելի տուն Բասարգեչարում

պահպանումը պետք է անպայման կանխորոշեր հազարաշենի առկայությունը նաև այն բնակարաններում, որոնք նոր են կառուցվում և որոնց տնտեսական մասը անջատ չէ բնակելի սենյակներից։ Սակայն, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս նոր կյանքը իր որոշակի փոփոխություններն է մտցնում դարերի խորքից եկող այդ երկու էական էլեմենտների՝ հազարաշենի և թոնրի փոխհարաբերության մեջ։

Բնակարանի հին կոմպոզիցիայի ժամանակ հազարաշենն էր, որ հնարավորություններ է ստեղծում ծխի հեռացման համար և թեև ծուխը շատ հաճախ լցնում էր նրա ամբողջ ներքին տարածությունը (հատկապես թոնիրը վառելու սկզբում), սակայն այդ համարվում էր անխուսափելի մի երևույթ, և հին գյուղի կյանքի պայմանների յուրահատուկ կողմերից մեկը։ Ահա այդ ամեն ինչ մրոտող, բնակիչների աչքերի խրոնիկ հիվանդություններ առաջացնող ծխի առկայությունը, իհարկե, չէր կարող ոչ մի կերպ համակերպվել գյուղացու նոր և կուլտուրական պահանջների հետ։ Այս ուղղությամբ առավել հեշտ և արմատական լուծումը եղավ բնակե-

*լի սենյակների լրիվ անջատումը բնակարանի տնտեսական մասից և նրանց տաքացումը ժամանակակից վառարաններով, մի լուծում, որի ցայտուն օրինակները նշվեցին վերևում։*

*Սակայն դրա հետ մեկտեղ դեռևս այսօր էլ շարունակում են կառուցվել այնպիսի բնակարաններ, որտեղ տնտեսական մասը զուգակցվում է բնակելի մասի հետ և որտեղ շատ հաճախ բնակելի սենյակը հացատնից բաժանված է միայն մի միջանցքով։ Իսկ այնտեղ, որտեղ գլխատունը դեռևս պահպանվել է որպես բնակելի սենյակ, լայնորեն օգտագործում են թիթեղյա վառարանը, որի ծխնելույզը դուրս է բերվում հազարաշենի աստիճանաձև ծածկի միջից։ Բացի այդ, թոնրի ծխի հեռացումը այժմ աստիճանաբար ստանում է միանգամայն նոր լուծում, և արտահայտվում է այն հետաքրքիր կոնստրուկցիայով, ինչպես այդ հանդիպում ենք Վարդենիկ գյուղում Ս. Չիթոյանի բնակարանում։ Ամբողջ բնակարանը այստեղ բաղկացած է 2 հիմնական սենյակներից և նրանց անջատող համեմատաբար լայն միջանցքից։ Այս միջանցքը, որն ունի 3,5 մետր լայնություն, փաստորեն մի օժանդակ սենյակ է, որի մուտքի հանդիպակած մասում տեղավորված է թոնիրը և տնտեսության մնացած օժանդակ հարմարանքները։ Ամբողջ բնակարանը ծածկված է հարթ ծածկով, բնակելի սենյակները լուսավորվում են լայն ու ընդարձակ լուսամուտներով։ Այստեղ հետաքրքիրը թոնրի տեղավորումն է հարթ ծածկ ունեցող սենյակում, որը թվում է, թե պետք է ամբողջովին լցվի ծխով և որից չեն կարող ազատվել միջանցքի հետ դռներով հաղորդակցվող բնակելի սենյակները։ Սակայն, ժողովրդական վարպետները նոր ելք են գտել։ Այստեղ թոնրի ծուխը հեռանում է ոչ թե դեպի վեր, նրա վերին լայն բացվածքից, այլ մի առանձին աղյուսապատ հորիզոնական խողովակ, որը միանում է թոնրի հետ նրա վերին մասում, տանում է ծուխը դեպի պատին զուգահեռ տեղավորված ուղղաձիգ թիթեղյա խողովակը, որի միջոցով և ծուխը հեռանում է բնակարանից։ Վառելու պահին, երբ շատ ծուխ է առաջանում, թոնրի բացվածքը ծածկում են հատուկ թիթեղյա կափարիչով և ամբողջ ծուխը հեշտությամբ հեռանում է հիշյալ խողովակներով։ Եվ երբ արդեն աթարը այրվում է, և առաջանում է թեժ կրակ (որից ի դեպ համարյա թե ծուխ չի բարձրանում), վերցնում են թոնրի կափարիչը, և թոնիրը ազատ կերպով օգտագործում։ Ծխի հեռացման այդ պարզ ու հասարակ կոնստրուկցիան հնարավորություն է տալիս ազատել բնակելի սենյակները հեղձուցիչ ծխի քուլաներից, միաժամանակ պահպանե-*

լով աթարի համար հարմար ազգային տրադիցիոն վառարանի այդ ձևը։



Բնակելի տուն Ալուչալուում

*

Այսպիսով, որոշակի կերպով կարելի է տեսնել, թե ինչպես կյանքի նոր պայմանները աստիճանաբար, քայլ առ քայլ վերափոխում են հին գյուղը, դարերի ընթացքում կազմավորված և հին կյանքին հարմարեցված բնակելի տների հին ձևերը, ստեղծելով միանգամայն նոր նախադրյալներ ժողովրդական ճարտարապետության զարգացման համար։

Նոր բնակարանների ճարտարապետական կոմպոզիցիայի մեջ հնարավոր է տեսնել ժողովրդական վարպետների համառ և քրտնաջան աշխատանքը, ուղղված ինչպես նոր ձևերի ստեղծման, այնպես էլ հին, տրադիցիոն կոմպոզիցիաների առավել պրոգրեսիվ էլեմենտների օգտագործման և վերամշակման ուղղությամբ։

Դա երևում է ինչպես բնակարանների հատակագծային ձևերում, այնպես էլ առանձին ճարտարապետական էլեմենտների և մանրամասնությունների մշակման մեջ, երբ էկոնոմիկ լուծման մեջ ամենայն մանրամասնությամբ հաշվի են առնվում և՛ աշխարհագրական պայմանները, և՛ ժողովրդի կենցաղն ու սովորությունները, և՛ հատկապես տեղական շինանյութի հատկությունները,

որոնք և վերջին հաշվով ստեղծում են ամեն մի շրջանի ժողովրդական բնակելի տան յուրահատուկ գծերը։

Այդ ենք տեսնում առանձնապես բնակելի տների արտաքին ճակատների ձևավորման բնագավառում, որտեղ վարպետները ստիպված են խիստ կերպով սահմանափակել մաքուր տաշած քարերի քանակությունը՝ ելնելով տեղական շինանյութի՝ բազալտի մշակման դժվարություններից։

Որոշ շրջանների բնակարանների գերակշռող մեծամասնության մեջ ճակատների և հատկապես գլխավոր ճակատների մշակման ժամանակ վարպետները սահմանափակվում են շեշտելով միայն մի քանի հիմնական և տեկտոնիկ տեսակետից կարևոր էլեմենտները՝ հիմնախարիսխը, պատերի անկյունները, լուսամուտների ու դռների շրջանակները և քիվը։ Պատի մնացած ամբողջ հարթությունը սովորաբար թողնվում է անմշակ, շարվում ճեղքված քարով։

Բացի այդ, այստեղ համարյա թե բացակայում են բաց պատշգամբները, որոնք սովորաբար փոխարինվում են փակ ապակեպատ պատշգամբներով, մինչդեռ այն շրջաններում, որտեղ բարձր լեռները և խոր կիրճերը թուլացնում են քամու ուժը, իսկ անտառների առկայությունը որոշ չափով մեղմացնում է կլիման՝ այնտեղ արդեն հանդիպում են բաց, լայն ու ընդարձակ պատշգամբներ, ինչպես այդ կարելի է տեսնել Գորիսի շրջանում։ Չնայած տեղանքի խիստ կտրտված ռելյեֆին, և նրան, որ բնակարանները կառուցվում են լեռների և կիրճերի լանջերին, այստեղ չկա բնակելի տան այն համեմատաբար փակվածությունը, որը նկատվում է Սևանի ավազանի բնակավայրերի ժողովրդական ճարտարապետության մեջ։

Լեռնային յուրահատուկ պայմանները, գյուղերի դասավորությունը թեք լեռնալանջերին շատ յուրահատուկ պայմաններ է ստեղծում Զանգեզուրի ժողովրդական ճարտարապետության համար, որտեղ բնակարանի տանիքը որոշ դեպքերում որպես բակ է ծառայում նրանից վերև դասավորված բնակարանի համար։

Ի հակադրություն Սևանի ավազանի, Ազիզբեկովի և Սիսիանի շրջանների ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված բնակելի տների ձևերի, որտեղ հարթ ծածկով բնակարանները հնում կազմում էին համեմատաբար շատ չնչին տոկոս, այստեղ (հատկապես Մեղրու շրջանում) հարթ ծածկով բնակարանները հանդիսանում են ժողովրդական ճարտարապետության հնագույն տիպերից մեկը և անմիջականորեն կապված են կլիմայական համանըման պայմաններում գտնվող, հարթավայրային ցածրադիր շըր-

ջաններում տարածված և հարթ ծածկ ունեցող բնակարանների ճարտարապետական ձևերի հետ։

Լեռնային կլիմայական գոտու գյուղական բնակավայրերի ժողովրդական ճարտարապետության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանների բնակելի տները, որոնք իրենց կոմպոզիցիոն ընդհանուր ձևերով որոշ չափով առնչվում են Սևանի շրջանի համարյա թե նույն պայմանների մեջ գտնվող բնակավայրերի ժողովրդական բնակարանների ճարտարապետության հետ։ Այդ ընդհանրությունը, որ նկատվում է հատակագծային ձևերի մեջ, հիմնականում բացատրվում է ինչպես ապրելակերպի, այնպես էլ կլիմայական պայմանների որոշակի նմանությամբ։ Սակայն այն ժամանակ, երբ Սևանի ավազանի ժողովրդական ճարտարապետության մեջ բնակելի տան արտաքին արտահայտչականության ձևերը խիստ սահմանափակ են հիմնական շինանյութ հանդիսացող ճեղքված բազալտի կիրառման պատճառով, Արթիկ տուֆի առկայությունը այստեղ ժողովրդական վարպետներին լայն հնարավորություններ է տալիս ավելի ազատ մշակելու բնակելի տների ճակատները։ Իսկ եթե կոլտնտեսային գյուղի ժողովրդական տան հատակագծային կոմպոզիցիան հիմնականում մնում է հաստատուն, արտաքին ճակատների մշակման բնագավառում նկատելի է ճարտարապետական ձևերի մեծ բազմազանություն, որտեղ ակնհայտ կերպով կարելի է տեսնել քաղաքի մոնումենտալ կառուցվածքների ճարտարապետական ձևերի որոշակի ազդեցությունը։

Այդ երևույթն առավել ցայտուն կերպով դրսևորվում է շենքերի վրա քիվերի, որմնասյուների սանդրիկների և այլ էլեմենտների օգտագործման մեջ։ Տեղական վարպետները, որոնք, ի դեպ, համարյա թե բոլորն էլ երկար տարիներ աշխատել են քաղաքներում, նորակառույց շենքերի շինարարության վրա, գյուղ են տեղափոխում իրենց ծանոթ մի շարք ձևեր և օգտագործում գյուղական կառուցվածքներում։

Քաղաքային ճարտարապետության այս ազդեցությունը ժողովրդական ճարտարապետության վրա, անշուշտ, պրոգրեսիվ երևույթ է և հարստացնում է վերջինիս։ Սակայն, դրա հետ միասին պետք է նշել, որ մի շարք դեպքերում առանձին էլեմենտներ քաղաքի բազմահարկ շենքերից գյուղում կառուցվող հիմնականում մեկ հարկանի շենքերի վրա շատ անգամ անհաջող կերպով տեղափոխվելով, բնավ չեն կապվում վերջիններիս հետ և չեն մերվում նրանց ընդհանուր ծավալային և ճարտարապետական կոմպոզիցիային։

Ինչպես նշվեց, այստեղ ևս նախասովետական շրջանում բնա-

կելի տան հիմնական կոմպոզիցիոն ձևը հանդիսանում էր գլխատունը, թեև հանդիպում էին նաև հարթ ծածկով բնակարաններ։ Կոլտնտեսային կարգերի հաղթանակից հետո գյուղերում ծավալված մասսայական բնակարանաշինարարության ժամանակ առաջնակարգ տեղը գրավեցին հարթ ծածկով բնակարանները, իսկ հին գլխատները (ինչպես և Սևանի ավազանի շրջաններում) սկսեցին վեր ածվել մառանների կամ հացատների։ Նորակառույց բնակարաններում, որոնք կառուցվում են նոր հողամասում օժանդակ շենքերի մեջ, գլխատները դարձյալ իրենց որոշակի տեղն ունեն, թեև նրանց չափերը արդեն խիստ սահմանափակ են և դրանք հարմարեցված են լոկ, իբրև հացատուն օգտագործելու համար։

Բնակելի սենյակների կոմպոզիցիան, որը և վերջին հաշվով որոշում է կոլտնտեսականի բնակելի տան ընդհանուր կերպարը, այս շրջաններում հիմնականում սահմանափակվում է բնակարանը ընդլայնական ուղղությամբ երկու մասի բաժանող միջանցքով և 1—2 սենյակներով, ընդ որում առավել հաճախ հանդիպում են հետևյալ հատակագծային լուծումները.

1. Միջանցքը գտնվում է կենտրոնում և նրա երկու կողմերում դասավորված են մեկական սենյակներ։

2. Միջանցքը դասավորված է բնակարանի մի կողմում և նրա կողքին կա միայն մեկ սենյակ։

3. Միջանցքը դասավորված է բնակարանի մի կողմում և նրանից դեպի աջ կամ դեպի ձախ դասավորված են երկու սենյակներ, ընդ որում նրանցից մեկը ստացվում է միջանցիկ։

Օժանդակ կառուցվածքները որպես կանոն դասավորված են բնակարանի հետևի մասում և անմիջապես կապված են միջանցքի հետ։ Գոմը արվում է բնակարանի հետևի մասում։

Առաջին տիպի կառուցվածքներից է, օրինակ, Ա. Նազարյանի բնակարանը Մարալիկում։ Բնակարանը կառուցված է գյուղի գլխավոր փողոցի վրա, կարմիր գծից մոտ 15 մետր հետ և բաղկացած է ընդամենը երկու սենյակից և նրանց բաժանող միջանցքից, որը մուտք ունի և՛ փողոցի և՛ բակի կողմից։ Սենյակները անմիջապես կապվում են միջանցքի հետ միմյանց դիմաց գտնվող դռներով և լուսավորվում և՛ փողոցի կողմից (երկուական լուսամուտ յուրաքանչյուր սենյակում), և՛ բակի կողմից, որտեղ բացվում են յուրաքանչյուր սենյակից մեկական լուսամուտ։

Օժանդակ մասերը դեռևս չեն կառուցված։ Բնակարանի այսպիսի կոմպոզիցիան լայնորեն տարածված է ինչպես Մարալիկում,

այնպես էլ Հայաստանի հյուսիս-արևմտյան բոլոր շրջաններում և հանդիսանում է այդ շրջանների ժողովրդական ճարտարապետության յուրահատուկ տիպերից մեկը։

Այն հանգամանքը, որ միջանցքը անմիջապես կապված է և փողոցի և բակի հետ, որոշ առավելություններ է տալիս բնակարանի օգտագործման ժամանակ. բացի այդ, լուսամուտների նշված դասավորությունը, որը բացի օդափոխության և ինսոլյացիայի բարենպաստ պայմաններ ստեղծելուց, հնարավորություն է տալիս սենյակներից դիտել բակը, տնամերձ տնտեսությունը. Նույնպես քիչ նշանակություն չունի գյուղական բնակարանի համար։ Շենքը կառուցված է Արթիկ-տուֆից (ինչպես և այս շրջանների համարյա թե բոլոր բնակելի տները) և ի հակադրություն գրեթե անմշակ թողնված բակի և կողային ճակատների, անհամեմատ հարուստ մշակված է նրա գլխավոր, դեպի փողոց դուրս եկող ճակատը, որը ամբողջապես շարված է մաքուր տաշած քարով և ունի բավական ճոխ ճարտարապետական հարդարում։ Շենքի հիմքերը, ինչպես և ցոկոլը շարված են բազալտից։

Սկզբունքորեն նույն, սակայն ավելի պարզեցված կոմպոզիցիա ունի Մ. Մանուկյանի բնակարանը Սառնաղբյուրում, որը բաղկացած է մի միջանցքից և նրանից աջ դասավորված մեծ սենյակից։ Այստեղ կարելի է նշել դեպի բակ տանող մուտքի բացակայությունը, որը բնակարանի կառուցման այս առաջին ստադիայում բացատրվում է նրանով, որ միջանցքի դեպի բակ ուղղված մասը ևս օգտագործվում է որպես օժանդակ սենյակ և խոհանոց։

Շենքի հիմքերը և հիմնախարիսխը կառուցված են բազալտից, իսկ պատերը Արթիկ տուֆից, ընդ որում այստեղ ևս մաքուր տաշված քարից շարված է միայն գլխավոր, դեպի փողոց դուրս եկող ճակատը։ Ի տարբերություն նախորդ օրինակի, որտեղ շենքը ծածկված է երկթեք թիթեղյա ծածկով, այստեղ արված է հողի հարթ ծածկ, ուստի և միանգամայն տրամաբանական է պարապետի ներկայությունը, որը ապահովում է ծածկի անհրաժեշտ թեքությունը դեպի շենքի հետևի կողմում դասավորված ջրատար խողովակները։ Որպես կանոն, այն բոլոր շենքերում, որտեղ արվում են հարթ հողածածկ կտուրներ, միշտ էլ առկա են պարապետները, իսկ այնտեղ, որտեղ շենքը ծածկված է երկթեք ծածկով, նրանք իսպառ բացակայում են և շենքի ճակատը ավարտվում է ուժեղ քիվով։

Ճարտարապետական այս կոմպոզիցիան հանդիպում է Թալինում, Ախուրյանում և Արթիկում։ Հատկանշական է, որ եթե ըստ

Հատակագծային մշակման այս կոմպոզիցիան էական փոփոխություններ չի կրում (որոշ տեղերում միայն ավելանում են օժանդակ կառուցվածքները բնակարանի հետևի մասում) ճակատների մշակման տեսակետից նկատվում է մեծ բազմազանություն։



Արթիկ. բնակելի տուն

Նշված հատակագծային կոմպոզիցիայի զարգացումն է հանդիսանում այն տիպը, որտեղ միջանցքի մի կողմում տեղավորվում են ոչ թե մեկ, այլ երկու սենյակներ և միջանցքին կից դասավորված սենյակը սովորաբար ստացվում է միջանցիկ։

Արտաքին ճակատներում այս տիպի շենքերը դարձյալ սկզբունքային փոփոխություններ չեն կրում և նոր ավելացված մասում փաստորեն կրկնվում է նույն ձևավորումը, ինչ որ արվում էր բնակարանի մյուս մասում։

Շենքերի լուսամուտների դասավորությունը որպես կանոն արվում է, ելնելով սենյակի ինտերյերից և միշտ էլ ունենում են սենյակի ներսում սիմետրիկ դասավորություն, որի պատճառով ինչպես շենքի ամբողջ ճակատը, այնպես էլ բացվածքների և որմնասյուների դասավորությունը հաճախ ստացվում է անսիմետրիկ և որմնասյուների միջև եղած տարածությունը, որը արտահայտում է ամեն մի սենյակի երկարությունը, մասնատվում է լուսամուտներով, անկախ հարևան սենյակի լուսամուտների դասավորությունից։ Կա-

րելի է տեսնել նաև զուգակցված բնակարանների տիպեր, որտեղ միջանցքները դասավորված են շենքի երկու ծայրում, իսկ սենյակները արված են միմյանց կողքի։ Այսպիսի ձևը, հանդիպում է համեմատաբար շատ քիչ, որովհետև կոլտնտեսականները առհասարակ խուսափում են զուգակցված տներից։



Նոր-կյանք. բնակելի տուն

Պետք է նշել, որ վերը թված բնակարանների մեծամասնությունը կառուցվել է վերջին տարիների ընթացքում, դեռևս զուրկ է օժանդակ կառուցվածքներից և իբրև այդպիսիք հիմնականում ծառայում են հին բնակելի շենքերը, որոնք այժմ վեր են ածվել մառանների և հացատների։ Երբեմն (ինչպես այդ տեսանք Սևանի ավազանի գյուղական բնակավայրերում), սկզբում կառուցում են օժանդակ մասերը (հացատուն, մառան) և մի առ ժամանակ այնտեղ ապրելուց հետո, ձեռնարկում բարեկարգ բնակելի սենյակների կառուցմանը։

Այդպիսին է Ս. Ոււռուտյանի բնակելի տունը Մարալիկում։ Այստեղ առաջին հերթին կառուցել են մառանը և նրան կից հացատունը, և պատերազմից հետո միայն ձեռնարկել բարեկարգ և լուսավոր բնակելի սենյակների շինարարությունը։

Գլխավոր ճակատի կոմպոզիցիոն կենտրոն հանդիսացող կամարը նշանակալից հետաքրքրություն է տալիս շեքին և միաժա-

մանակ ապահովում միջանցքի լուսավորությունը, որը վերը նշած օրինակներում ստացվում էր դռան վերին մասում արված համեմատաբար նեղ ֆրամուգայի միջոցով։



Արթիկ. բնակելի տուն

Այսպիսով, այս շրջանների ժողովրդական ճարտարապետության առավել յուրահատուկ գծերից են արտաքին ճակատների մշակման ձևերը, որոնց լուծման հիմնական նախադրյալները պայմանավորված են տեղական այնպիսի հիանալի շինանյութի առկայությամբ, ինչպիսին է Արթիկ տուֆը։

Ի տարբերություն Սևանի ավազանի ժողովրդական բնակելի տան մեջ տեղ գտած սկզբունքների, որտեղ վարպետները բավարարվում են շեշտելով միայն առանձին ճարտարապետական էլեմենտները և թողնում պատի մնացած ամբողջ հարթությունը առանց որևէ ձևավորման, այստեղ գլխավոր ճակատի մշակման ելակետը հանդիսանում է շենքի ներքին կոմպոզիցիայի կոնստրուկտիվ էլեմենտների և առաջին հերթին հիմնական պատերի դրսևորումը շենքի ճակատում, որոնք սովորաբար հանդես են գալիս բուստներով մշակված որմնասյուների ձևով։

Կարելի է նշել. բնակելի տների նաև մի այլ յուրահատուկ կողմը, որը անմիջական հետևանք է տեղական աշխարհագրական պայմանների։ Ուժեղ քամիները, որոնք այստեղ հատկապես զգալի են ձմռան խիստ սառնամանիքների ժամանակ, ստիպել են բնա-

կիշներին հրաժարվել նույնիսկ ապակեպատ պատշգամբներից, որոնք այս շրջաններում հանդիպում են շատ հազվագյուտ դեպքերում։



Արթիկ. բնակելի տուն

Այս ամենը, զուգակցված քաղաքային մոնումենտալ ճարտարապետության որոշակի ազդեցության հետ, վերջին հաշվով հասցրել է ժողովրդական բնակելի տների այն յուրահատուկ տիպերի ստեղծմանը, որոնք հատկանշական են հատկապես այս շրջանի համար և չեն հանդիպում Հայաստանի մյուս շրջաններում։

* * *

Լեռնային շրջանների ժողովրդական ճարտարապետության մեջ յուրահատուկ տեղ են գրավում Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջանների բնակելի տները, որոնք իրենց ճարտարապետական ձևերով արմատապես տարբերվում են ինչպես Սևանի ավազանի, այնպես էլ Շիրակի սարահարթի բնակելի տներից։

Այս շրջանները (Կիրովական, Ստեփանավան, Ալավերդի, Նոյեմբերյան, Շամշադին, Դիլիջան, Իջևան) հարուստ են անտառային բուսականությամբ, ամառը զով, է ձմեռը՝ խիստ չէ, մթնո-

լորատային տեղումները համեմատաբար շատ են և՛ ամռան և՛ ձմռան ամիսներին։

Ահա այս յուրահատուկ կլիմայական և աշխարհագրական պայմաններն էլ նշանակալից չափով որոշել են այդ շրջանների ժողովրդական բնակելի տների թե՛ ճարտարապետական կոմպոզիցիաները և թե՛ կոնստրուկտիվ էլեմենտները։

Ամենից առաջ պետք է նշել, որ այս շրջաններում ևս որոշակի կերպով նկատվում է գլխատների հարաճուն անհետացումը։ Շատ գյուղերում այսօր չի մնացել և ոչ մի գլխատուն, որը մինչսովետական շրջանում ժողովրդական բնակելի տան հիմնական ձևերից մեկն էր[1]։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ նախասովետական շրջանում ևս Լոռվա շատ գյուղերում լայնորեն տարածված էին հարթ առաստաղներով և երկլանջ ծածկով բնակելի տները, որոնք և աստիճանաբար դուրս մղեցին գլխատներին և այժմ դարձել են այդ շրջանների միակ հիմնական և գերիշխող տիպը։

Հարթ առաստաղով և երկլանջ ծածկով բնակելի տան տիպը այս շրջաններում ունի շատ հին ծագում և նրա գոյությունը լիովին բացատրվում է տեղական կլիմայական և աշխարհագրական առանձնահատկություններով (շինափայտի առկայությունը, համեմատաբար մեղմ ձմեռը և հատկապես տեղումների առատությունը թե ամռանը և թե ձմռանը)։

Սակայն, միաժամանակ չպետք է մոռանալ այն նշանակալից դժվարությունները, որոնք կապված էին շինափայտ գնելու և հատկապես այդ տիպի բնակարանները ձմռան ամիսներին տաքացնելու հետ, և որոնք նախասովետական շրջանում մեծ չափով սահմանափակում էին նրանց տարածումը։ Ահա թե ինչու բնավ պատահական չէր, որ գլխատան կոմպոզիցիան լայնորեն տարածված էր այդ շրջանների համարյա թե բոլոր գյուղերում։

Բնորոշ է, որ գլխատան կոմպոզիցիան ևս այս շրջաններում մասամբ հարմարեցվում է տեղական կլիմայական պայմաններին։ Առատ մթնոլորտային տեղումների առկայությունը թելադրում էր նշանակալից չափով բարձրացնել գլխատան կենտրոնական մասի փայտյա աստիճանաձև գմբեթը, ծածկի դրսի հողածածկ մակերեսներին անհրաժեշտ թեքություն տալու նպատակով, որպեսզի հեշտությամբ հեռացվի ջուրը, ձյունը և բնակարանը չկաթի։ Մթնոլոր-

[1] Գ. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956, էջ 115։

տային տեղումների դեմ պայքարելու ձգտումն է, անշուշտ, որ հիմքեր է ստեղծում երկլանջ ծածկի կոնստրուկցիայի մշակման համար։ Հայտնի է, որ նույն այդ շրջանների մոնումենտալ ճարտարապետության մեջ արդեն 5-րդ դարում բազմաթիվ հուշարձաններ ծածկված են եղել երկլանջ, կղմինդրյա ծածկով։

Ավելի ուշ շրջանում (9—10-րդ դդ.) հայկական մոնումենտալ ճարտարապետության մեջ կղմինդրները փոխարինվում են քարե սալերով, որոնք հիմնականում պահպանում են կղմինդրի կոնստրուկտիվ գլխավոր ձևերը։

Այն իրողությունը, որ 10—13-րդ դարերի աշխարհիկ ճարտարապետության մեջ (սեղանատներ, գավիթներ, գրատներ, աղբյուրներ) ծածկերը ոչ մի կոնստրուկտիվ տարբերություն չունեն ժամանակակից մոնումենտալ կուլտային կառուցվածքների երկլանջ ծածկերից, հիմք է տալիս ենթադրելու, որ ժողովրդական բնակելի տան երկլանջ ծածկերը ևս ունեն իրենց խորը տեղական արմատները։

Հետագայում երբ աստիճանաբար փոխվում է կյանքը, Հայաստանը ազատագրվում է պարսկական բռնակալ լծից, և միացվում Ռուսաստանին, գյուղերը ավելի սերտ կերպով են կապվում քաղաքի հետ, կառուցվում են ճանապարհներ, բարեփոխվում է գյուղացիների տնտեսական դրությունը, որոշ հիմքեր են ստեղծվում կղմինդրածածկ բնակարանի տարածման համար։

Միաժամանակ պետք է նշել նաև 19-րդ դարում ռուս վերաբնակիչների կողմից կառուցված բնակարանների ձևերի որոշակի ազդեցությունը նշված տիպի բնակարանների կառուցման բնագավառում։ Գլխատների վերացման պրոցեսը իր գագաթնակետին է հասնում Սովետական իշխանության տարիներին և հատկապես կոլտնտեսային կարգերի հաղթանակից հետո, երբ մասսայաբար քանդվում են հին, իրենց դարն ապրած գլխատները և կառուցվում նոր, բարեկարգ բնակարաններ։

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև մի այլ շատ յուրահատուկ հանգամանք, կապված հատկապես այս շրջանների ժողովրդական ճարտարապետության հետ։ Այն ժամանակ, երբ գլխատունը դեռևս իր գոյությունը պահպանում է Սևանի ավազանում և Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում (թեև նրանք այնտեղ արդեն դադարել են բնակարան լինելուց և կառուցվում են միայն որպես հացատներ), Լոռիում, որտեղ թոնիրը այժմ բնավ այն նշանակությունը չունի գյուղացու կյանքում, ինչ որ նշած մյուս շրջաններում



*Ստեփանավան. բնակելի տուն*

*(այստեղ վառարանի հիմնական տիպն է փոքրիկ փուռը, որտեղ և հաց են թխում և ճաշ պատրաստում), գլխատները վերանում են հիմնավորապես և նորակառույց բնակարաններում որպես կանոն նրանք փոխարինվում են փոքրիկ խոհանոցով, դասավորված բնակարանի մի կողմում։ Այս բանը իր հերթին անմիջականորեն կապվում է տեղական յուրահատուկ պայմանների հետ, որովհետև, եթե Սևանի ավազանում և Շիրակում հիմնական վառելանյութը հանդիսանում է աթարը, որը առավել ռացիոնալ կերպով հնարավոր է օգտագործել միայն թոնրում, ապա Լոռիում վառելանյութի հիմնական ձևը հանդիսանում է փայտը, անտառներից հավաքած ճյուղերը, մացառները, որոնք և վերջին հաշվով որոշիչ են հանդիսացել վառարանի այնպիսի ձևի տարածման համար, ինչպիսին է փոքրիկ վառարանը կամ փուռը։*

*Լոռվա ժողովրդական բնակելի տան ճարտարապետական կոմպոզիցիայի մեջ իրենց յուրահատուկ տեղն ունեն նաև ընդարձակ, սովորաբար բնակարանի դեպի բակը նայող ճակատի ամբողջ երկարությամբ ձգվող բաց պատշգամբները, որոնք համարյա թե պարտադիր էլեմենտներ են այս շրջանների բոլոր բնակելի տների համար։*

Պատշգամբների առկայությունը այստեղ բացատրվում է տեղի բարենպաստ, մեղմ կլիմայական պայմաններով, նրանք փաստորեն ներկայացնում են բաց սենյակներ, և լայնորեն օգտագործվում բնակիչների կողմից ամռան տաք ամիսներին։



Ստեփանավան. բնակելի տուն

Այսպիսով, տեղական կոնկրետ պայմանները վերջին հաշվով որոշիչ են հանդիսացել այս շրջանների բնակելի տների թե՛ ընդհանուր կոմպոզիցիոն լուծման (երկլանջ ծածկ, հարթ առաստաղ), թե՛ առանձին ճարտարապետական էլեմենտների (բաց պատշգամբներ) և թե՛ բնակարանի առանձին կոմպոնենտների (հացատունխոհանոց) յուրահատուկ ձևերի մշակման հարցում, ձևեր, որոնք տարբերում են Լոռվա բնակելի տունը Հայաստանի մյուս լեռնային շրջանների բակելի տներից։

Ըստ իրենց ծավալային կոմպոզիցիայի այս շրջանների բնակելի տները լինում են մեկ հարկանի, կիսանկուղային հարկով և երկհարկանի։

Բնակարանների ընդհանուր տիպերի մեջ հիմնական, գերակշռող մասի հատակագծային կոմպոզիցիաները փաստորեն համընկնում են Հայաստանի մյուս շրջաններում հանդիպող ձևերին, մի բան, որը հանդիսանում է ամբողջ հայկական ժողովրդական ճար-

*տարապետության միասնական սկզբունքների գոյության ցայտուն ապացույցը։*

*Հատակագծային կոմպոզիցիայի առավել պարզ ձևը — դա մեկ միջանցք և մեկ սենյակ ունեցող բնակելի տան կոմպոզիցիան է, որի հետագա զարգացումն է հանդիսանում երկրորդ սենյակի ավելացումը, որը և առաջացնում է ճիշտ այնպիսի լուծում, ինչպիսին հաճախ հանդիպում ենք Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում։ Պետք է հենց սկզբից նշել, որ ինչպես ամենապարզ ձևերը, այնպես էլ համեմատաբար բարդ հատակագծային կոմպոզիցիա ունեցող բնակելի տները, որպես կանոն, իրենց ընդերկայնական ճակատի ուղղությամբ ունենում են բաց պատշգամբներ և որոշ դեպքերում էլ կիսանկուղային հարկեր։ Այդ էլեմենտների առկայությունը բնավ չի փոխում բնակարանի ճարտարապետության ընդհանուր ձևերը, որոնց արտաքին ծավալային լուծումները ստացվում են որոշ չափով միօրինակ և միայն պատշգամբի մշակման կոմպոզիցիոն տարբերատեսակներն են, որ որոշ աշխուժություն են մտցնում ամբողջ կառուցվածքի մեջ։*

*Զանազան տարբերատեսակներ են հանդիպում նաև աստիճանների դասավորության, սյունաշարքերի և նրանց մանրամասնությունների մշակման մեջ, որոնք և վերջին հաշվով ստեղծում են բնակելի տների այնքան յուրահատուկ գծերը։*

*Ինչ վերաբերում է շինարարական տեխնիկային, ապա այս շրջաններում ևս բնակելի տների պատերը շարվում են հիմնականում բազալտի ճեղքված քարերից, միայն շենքի անկյուններում է, որ շարքը կատարվում է համեմատաբար ավելի մեծ և տաշված քարերից։ Այն տեղերում՝ որտեղ հանդիպում է դյուրին մշակվող քար, բնակելի տան հիմնական ճակատներն էլ շարվում են բավական մաքուր տաշած քարերից, ինչպես այդ կարելի է տեսնել Շահնազար գյուղում, որտեղ նորակառույց բոլոր շենքերը, շարված բաց-դեղնագույն ֆիլզիտային տուֆից, հիանալի տպավորություն են թողնում։*

*Շատ տեղերում շենքերը սվաղում են ոչ միայն ներսից, այլև դրսից։ Փայտի կոնստրուկցիաները պարզ են, առանց որևէ ավելորդությունների։ Փողոցի նկատմամբ բնակարանները, մեծ մասամբ, դասավորված են որոշ չափով դեպի հետ և նրանց առջևում արվում է փոքրիկ ծաղկանոց։*

*Տեղի կլիմայական պայմանների որոշակի մեղմությունը այստեղ ավելի լայն հնարավորություններ է տալիս բնակարանների*

օպտիմալ օրիենտացիայի համար, քան մյուս լեռնային շրջաններում։ Այստեղ մեծ մասամբ խուսափում են պատշգամբները դեպի հյուսիս դասավորելուց։

Այստեղ որոշակի նշանակություն է ստանում նաև հյուսիսային սառը քամիների ուղղությունը, որն իր անմիջական ազդեցությունն է ունենում որոշ տեղերի բնակելի տների դասավորության վրա։ Այս առավել ցայտուն կերպով երևում է Ստեփանավանի շրջանի հյուսիսային անտառազուրկ մասերում, Կալինինոյում և մի շարք այլ գյուղերում, որտեղ ցուրտ քամիների ուղղությունը թելադրել է փողոցների կառուցապատման սիստեմը։

Այսպես, օրինակ, միջօրեականին զուգահեռ դասավորություն ունեցող Կալինինոյի հիմնական փողոցում, անխտիր բոլոր բնակարանների պատշգամբները ուղղված են դեպի հարավ, մինչդեռ դեպի հյուսիս ուղղված պատերի վրա լիովին բացակայում են բացվածքները։ Այսպիսի դասավորությունը իր հերթին կանխորոշել է բնակելի տան տեղաբաշխումը հողամասի նկատմամբ, երբ բնակելի տան հյուսիսային խուլ պատը, որպես կանոն, դրվում է հողամասի հյուսիսային սահմանագծում։

Բնակարանների այսպիսի դասավորությունը շատ յուրահատուկ տեսք է տալիս փողոցին։ Հարավից դեպի հյուսիս գնալիս, այցելուի առջև բացվում են գեղեցիկ ձևավորված պատշգամբների ամբողջ շարքերը, որոնք միանգամայն փակվում են, երբ շարժվում ենք հյուսիսից դեպի հարավ։ Այս դեպքում երևում են միայն բնակելի տների խուլ պատերը, և որոշ հետաքրքրություն են մտցնում միայն առանձին բնակարանների դեպի փողոց դուրս եկող պատշգամբները, որոնք իրենց հերթին հյուսիսից պաշտպանվում են մի առանձին, փաստորեն բնակարանի հյուսիսային պատի շարունակությունը ներկայացնող պատով (անտով)։ Պատշգամբների կողային ճակատները քամիներից պաշտպանելու այս տրադիցիան, որը առհասարակ յուրահատուկ է լեռնային շրջանների ժողովրդական բնակելի տանը, այստեղ գտնում է իր որոշակի դրսևորումը, և հանդիպում շատ բնակարաններում։ Անտերի դասավորությունը որպես կանոն արվում է ելնելով գերակշռող քամիների ուղղությունից, ընդ որում այն վայրերում, որտեղ քամիների ուղղությունները փոփոխական են, հանդիպում ենք անտերի երկկողմանի դասավորության։ Այն դեպքում, երբ փողոցն ունի լայնական դասավորություն, այսինքն ձգված է արևմուտքից-արևելք, հյուսիսային գերակշռող քամիների ժամանակ նրա կառուցապատումը դարձյալ

ստանում է միանգամայն անսիմետրիկ լուծում, ինչպես այդ կարելի է տեսնել Ստեփանավանում, դեպի Թումանյան ձգվող փողոցում, որտեղ փողոցի հյուսիսային կողմում դեպի փողոց են դուրս գալիս պատշգամբների անընդհատ շարքերը, մինչդեռ հարավային կողմում դասավորված բնակելի տներից միայն խուլ պատերն են երևում, մի բան, որն իհարկե, բնավ չի նպաստում փողոցի ճարտարապետական արտահայտչականությանը։



Կուրթան. բնակելի տուն

Ինչպես արդեն նշվեց այս շրջաններում բնակարանի օժանդակ մասերը (մառան, գոմ, մարագ և այլն) սովորաբար կառուցվում են բնակարանին կից, նրա դեպի բակը ուղղված կողմում, երբեմն այդ նպատակով օգտագործվում է կիսանկուղային հարկը։ Հաճախ անտի միջոցով առանձնացվում է փոքրիկ տարածություն, որտեղ տեղավորվում է փուռը և օգտագործվում որպես խոհանոց։ Օժանդակ կառուցվածքները փաստորեն կրկնում են բնակելի տան ծավալային կոմպոզիցիան, թեև ավելի համեստ չափերով։

Հատկանշական է այդ տեսակետից սովորաբար մի շարքի վրա դասավորված կառուցվածքների սիլուետը, երբ բնակարանի առավել մեծ ծավալից հետո գալիս է գոմի ավելի փոքր ծավալը, որին կից արվում է գոմից էլ ավելի քիչ տեղ բռնող մարագը։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի հյուսիս և հյուսիս-արևելյան շրջանների ժողովրդական ճարտարապետության

մեջ մշակվել են բնակելի տան և օժանդակ կառուցվածքների յուրահատուկ տիպեր, որոնք որոշակիորեն տարբերվում են մյուս լեռնային շրջանների բնակելի տների ձևերից, և լիովին համապատասխանում տեղական բնակչության ապրելակերպին և կլիմայական պայմաններին։ Կոլտնտեսային կարգերի հաստատումը այս շրջանների ժողովրդական ճարտարապետության մեջ թեև արմատական փոփոխություններ չմտցրեց և այստեղ դժվար է նշել այնպիսի միանգամայն նոր տիպի կառուցվածքների լայն տարածումը, ինչպիսիք են հարթ ծածկով բնակարանները Սևանի ավազանում, բայց և այնպես այստեղ ևս արագացավ գլխատների վերացման պրոցեսը և ժողովրդական ճարտարապետության զարգացումը հիմնականում ընթացավ արդեն մշակված ձևերի հետագա զարգացման և բարելավման ուղղությամբ։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է հատկապես նշել երկհարկանի բնակարանների, կղմինդրածածկ տների լայն տարածումը և գոմի ու մարագի անջատումը բնակելի տնից, որոնք վերջին հաշվով նշանակալից չափով ազդեցին Լոռվա կոլտնտեսային գյուղի ընդհանուր տեսքի վրա։

## ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ՑԱԾՐԱԴԻՐ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական Հայաստանի ցածրադիր, հարթավայրային շրջանները և հատկապես Արարատյան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված բնակելի տների տիպերը իրենց յուրահատուկ ձևերով պատկանում են հայ ժողովրդի ճարտարապետական կուլտուրայի ամենանշանակալից ստեղծագործությունների թվին և արժանի են հատուկ ուշադրության[1]։

Ինչպես ցույց են տալիս հնագիտական և հատկապես ուրարտական Թեյշեբաինի քաղաքի (Կարմիր բլուր) պեղումները, Հայաստանի տերիտորիայում հարթ ծածկով բնակարանները նույնքան հին են, նույնքան յուրահատուկ հայ ժողովրդի ճարտարապետական կուլտուրային, ինչպես և գլխատները։

Անվերապահորեն կարելի է ասել, որ եթե Հայաստանի լեռնային շրջաններում դեռևս շատ հին ժամանակներից, երբ նոր էր կազմակերպվում ինքը հայ ժողովուրդը, հայտնի էին գլխատները, նույն

---

[1] В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества. Москва, 1951.

մգքետիտատոց վմգդո վիգհտդմ վմգդդտծմՂ դվՐտմՐտխտթմտՉ



այդ ժամանակաշրջանում հարթավայրային, ցածրադիր շրջանների բնակելի տան հիմնական ձևը հանդիսանում էր հարթ ծածկով բնակարանը, որը առավել քան մի այլ ճարտարապետական ձև համար էր տվյալ շրջանների ապրելակերպին, կլիմայական, աշխարհագրական և կենցաղային պայմաններին։ Ահա այդ հնագույն դարերից եկող տրադիցիաներն են, որ պահպանվել և հասել են մինչև մեր օրերը և դրսևորվել Արարատյան դաշտավայրի տարբեր շրջանների բնակելի տների տարբեր կոմպոզիցիաներում[1]։

Արարատյան դաշտավայրի կենտրոնական և հարավային շրջաններում հիմնական շինանյութը հանդիսանում է կավը (պատի շարքում՝ չթրծված աղյուսը), որը և որոշում է շատ ճարտարապետական ձևեր։ Բնակելի տները հիմնականում սահմանափակվում են մեկից երկու հարկանի կոմպոզիցիաների շրջանակներում։

Նույն Արարատյան դաշտավայրի հյուսիսային շրջաններում, որոնք ընդհուպ մոտենում են Արագածի փեշերին (Աշտարակ, Օշական, Ոսկեվազ և այլն), որտեղ հիմնական շինանյութը հանդիսանում է քարը, բնակարանի պատերը սովորաբար շարվում են ճեղքված քարից, իսկ կոնստրուկտիվ առավել պատասխանատու հանգույցներում (կամարներ, պատերի անկյուններ, քիվեր և այլն) օգտագործում են նաև մաքուր տաշած քարեր։ Պետք է նշել, որ ինչպես հարավային, այնպես էլ հյուսիսային շրջաններում որոշակի տեղ է գրավում նաև թրծած աղյուսի օգտագործումը, որը սակայն, միայն օժանդակ նշանակություն ունի և վճռական դեր չի խաղում բնակելի տների կառուցման ժամանակ։

Ինչպես մյուս շրջաններում, այնպես էլ այստեղ ժողովրդական բնակելի տան ընդհանուր կոմպոզիցիայի լուծման վրա իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել գյուղատնտեսական արտադրության ձևերը, ժողովրդի ապրելակերպը, կլիմայական ու աշխարհագրական պայմանները։ Այդ տեսակետից էլ ճիշտ այնպես, ինչպես լեռնային շրջաններում բնակչության հիմնական զբաղմունքը հանդիսացող անասնապահությունը և դաշտավարությունը իրենց դրսևորումն էին գտել բնակելի տան ընդհանուր կոմպոզիցիայում և արտահայտվել գոմի և հացատան ձևերով, այստեղ օժանդակ կառուցվածքների տիպերի արմատական տարբերությունը, զուգակցվելով հարթ ծածկ ունեցող բնակելի սենյակների հետ, հիմք է

---

[1] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини. Кармир Блур IV, Ереван, 1955, стр. 35.

հանդիսացել Արարատյան դաշտավայրի բնակելի տների յուրահատուկ կոմպոզիցիաների մշակման համար, որոնց ճարտարապետական ձևերը չեն կորցրել իրենց արժեքը նաև այսօրվա կոլտնտեսային գյուղի բնակարանային ճարտարապետության անհամեմատ բարձր պահանջների ժամանակ։



Օշական. Ա. Կամրասցյանի բնակարանը. 1951 թ.

Կոլտնտեսային կարգերի հաղթանակի կապակցությամբ, ժողովրդական բնակելի տան ճարտարապետության ձևերի մեջ տեղի ունեցած այն արմատական փոփոխությունը, որը հետևանք էր բնակելի տան կիսաարտադրական ֆունկցիայի վերացմանը, իր որոշակի արտահայտությունն է գտել նաև այս շրջանների բնակարանների կոմպոզիցիոն լուծումների մեջ։

Սակայն, դրա հետ միասին, համարյա թե անփոփոխ պահպանվել են ժողովրդական բնակարանի հիմնական մասը հանդիսացող բնակելի սենյակների կոմպոզիցիաների լուծման սկզբունքները, որոնք մշակված են տասնյակ դարերի ընթացքում և հարմարեցված են տեղական կլիմայական պայմաններին։

Արարատյան դաշտավայրի բնակելի տների բաղկացուցիչ մասերն են հանդիսանում բնակելի սենյակները, նրանց առջև ձգվող ընդարձակ բաց պատշգամբները, մառանները և հաճախ ծածկված մուտքը (հովանոցը կամ դալանը)։ Տնտեսական կա-

ռուցվածքների մեջ առաջնակարգ տեղը գրավում են մառանները, ապա ամառային բաց հացատունը և հետո միայն գոմը։ Անհրաժեշտ է նշել, որ անասնապահությունը այս շրջաններում ունի համեմատաբար սահմանափակ նշանակություն, և այդ է պատճառը, որ ժողովրդական բնակելի տան ընդհանուր կոմպլեքսում գոմը էական տեղ չի գրավում և սովորաբար կառուցվում է բնակարաններին կից, կամ ավելի հաճախ հողամասի մի անկյունում։ Հացատունը ևս նշանակալից տեղ չի գրավում և իրենից ներկայացնում է մի բաց, փոքրիկ սենյակ, դասավորված բակի մի կողմում, բնակելի սենյակներից ոչ հեռու, որի մի պատի բացակայությունը ազատ հնարավորություն է տալիս թոնրի ծխի հեռանալուն։ Հիմնական վառելանյութը այստեղ ոչ թե աթարն է, այլ այգիներից հավաքվող ճյուղերը, մացառները և այլն։

Ըստ ծավալային կոմպոզիցիայի՝ բնակելի տները լինում են մեկ և երկու հարկանի, սովորաբար դասավորված փողոցի սահմանագծի վրա, իսկ ամբողջ հողամասը սահմանազատվում է փողոցից հիմնական, խուլ պատով։ Ժողովրդական ճարտարապետության այս տրադիցիաները մեծ չափով պահպանվել են նաև այսօր, թեև այժմ շատ դեպքերում կոլտնտեսականները չեն կառուցում այդ խուլ պատերը, դրանք փոխարինում են ցանկապատերով, իսկ բնակելի տները դասավորվում փողոցի կարմիր գծից որոշ չափով դեպի հետ (1,5—3 մետր) առջևում անելով ծաղկանոց։

**Մեկ հարկ ունեցող բնակելի տները** ունենում են հիմնականում հետևյալ կոմպոզիցիաները.

ա) Բնակարանը ձգված է փողոցի երկարությամբ։ Կոմպոզիցիոն կենտրոնը կազմում է ծածկած մուտքը, որից աջ և ձախ դասավորված են լինում բնակելի սենյակները, մառանը, և այլ օժանդակ կառուցվածքներ։

բ) Թե՛ բնակելի սենյակները և թե՛ մառանը դասավորված են ծածկված մուտքի մի կողմում և կազմում են միմյանց անմիջական շարունակությունը։ Այս դեպքում դեպի փողոց է դուրս գալիս սովորաբար մառանը, մինչդեռ բնակելի սենյակները և նրա առջև դասավորված պատշգամբը դասավորվում են բակի կողմում։

**Երկհարկ բնակելի տներ** — Այս տիպի կառուցվածքների կոմպոզիցիոն լուծումները շատ ավելի բազմազան են և ժողովրդական վարպետները հատկապես այս կառուցվածքներում է, որ ցույց են տալիս իրենց մեծ հմտությունը։

Ըստ հատակագծային լուծման այստեղ ևս պահպանված է տնտեսական մասի և բնակելի սենյակների դասավորությունների համարյա թե նույն սկզբունքը, երբ առաջին հարկը որպես կանոն զբաղեցնում են մառանը և դալանը, իսկ երկրորդ հարկը՝ բնակելի սենյակները և պատշգամբը։



Օշական. Լ. Սարգսյանի բնակարանը. 1948 թ.

Սակայն, քիչ չեն դեպքեր, երբ հովանոցը (դալանը) լրիվին բացակայում է, և բնակարանի մուտքը արվում է բակից։ Նշենք այդ տիպի երկու կոմպոզիցիա։

ա) Առաջին հարկում տեղավորված են մառանը և հովանոցը, որը ձգվում է մառանի ամբողջ երկարությամբ։ Քարե խուլ աստիճանները տանում են դեպի երկրորդ հարկում գտնվող պատշգամբը, որտեղ և բացվում են հովանոցի վրա դասավորված բնակելի սենյակների մուտքերը։

բ) Բնակարանը դասավորված է զուգահեռ փողոցին։ Բացակայում է հովանոցը։ Դարպասից մտնելով և շրջանցելով բնակարանի կողային պատը, այցելուն իր առջև տեսնում է դեպի երկրորդ հարկը տանող աստիճանները, որտեղ դասավորված են և՛ պատշգամբը և՛ բնակելի սենյակները։ Առաջին հարկում, մառանի առջև, պատշգամբի տակ, ստացվում է մի ընդարձակ և բաց սրահ, որը լայն

հնարավորություններ է տալիս ամենաբազմապիսի տնտեսական գործողությունների այստեղ կազմակերպելու համար։

Նշված կոմպոզիցիաները, որքան էլ որ նրանք տիպական լինեն Արարատյան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետության համար, դեռևս հեռու են այդ շրջանների բնակարանների տիպերի մեծ բազմազանությունն արտահայտելուց։



Աստան (Արտաշատի շրջան). Թ. Հովհաննիսյանի բնակարանը. 1955 թ.

Բնակարանների հատակագծային և ծավալային լուծումների մեծամասնությունը, մշակված դեռևս նախասովետական շրջանում, իրենից ներկայացնում է ժողովրդական բազմադարյան ճարտարապետական կուլտուրայի և շինարարական տրադիցիաների դրսևորումը և այդ տեսակետից էլ շատ ուսանելի էլեմենտներ է պարունակում իր մեջ։

Կոլտնտեսային կարգերի հաստատումը էական փոփոխություններ մտցրեց նաև այս շրջանների ճարտարապետության մեջ։

Մեկ հարկանի բնակարաններում որոշակի կերպով նկատելի է գոմի անջատումը բնակելի մասից և նրա կառուցումը հողամասի մի ծայրում։

Նշենք որպես օրինակ Խ. Պետրոսյանի բնակարանը Մրգաշատում կառուցված 1951 թ.։ Բնակարանը բաղկացած է երկու հիմնական սենյակներից և մեկ մառանից, որն իր ձևերով քիչ

րանով է տարբերվում մյուս բնակելի սենյակներից, թեև որոշ չափով փոքր է նրանցից և ունի ավելի պակաս լուսավորություն։ Մառանն անջատված է բնակելի սենյակներից միջանցքով և առնված է բնակարանի ընդհանուր ծածկի տակ։



Ոստան. Թ. Հովհաննիսյանի բնակարանը բակի կողմից

Բնակելի տան առջևում, բակի կողմից, ձգվում է լայն ու ընդարձակ պատշգամբը։ Բնակարանների այս տիպը հատկապես շատ է տարածված այսօր և ցայտուն կերպով ցույց է տալիս ժողովրդական ճարտարապետության մեջ վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները։

Ինչպե՛ս նախասովետական շրջանում, այնպես էլ այսօր բնակելի տների գերակշռող մեծամասնությունն ունի հարթ հողածածկ տանիք։ Կոնստրուկտիվ այս ձևն ունի շատ խորը գնացող տրադիցիաներ, քանի որ ինչպես հնում, այնպես էլ այժմ շատ տեղերում քնում են տանիքների վրա, չորացնում այնտեղ մրգեր և այլն։ Սակայն, մյուս կողմից, հարթ հողածածկ տանիքների էական անհարմարությունը կայանում է նրանում, որ նրանք փաստորեն չեն պահպանում բնակելի սենյակները գերտաքացումից, որովհետև ամռան շոգ ամիսներին. ամբողջ օրվա ընթացքում լինելով ճառագայթների անմիջական ազդեցության տակ, նրանք ուժեղ տաքանում են, և հենց այդ է պատճառը, որ շոգ ամիսներին այնքան

հեղձուցիչ է օդը այդ բնակարանների ներսում։ Բացի այդ, հարթ հողածածկ կտուրների պահպանումը պահանջում է սիստեմատիկ վերանորոգումներ և շատ դեպքերում լիովին չի ապահովում բնակարանը կաթելուց։ Կղմինդրյա երկթեք ծածկը այդ տեսակետից ունի էական առավելություններ և պատահական չէ, որ այժմ այն սկսվում է տարածվել նաև այս շրջաններում։

Հարթավայրային շրջանների բնակարանային ճարտարապետության յուրահատուկ էլեմենտներից են նաև լայն, ընդարձակ պատշգամբները, որոնց կառուցման գործում ժողովրդական վարպետները շատ լավ կարողանում են դրսևորել իրենց մեծ հմտությունն ու ճաշակը։

Այդ պատշգամբների դեկորատիվ էլեմենտները, որոնք կապված չեն նշանակալից ծախսերի հետ, պետք է լայնորեն օգտագործվեն այսօրվա կոլտնտեսային գյուղի նորակառույցներում և իրենց արժանի տեղը գտնեն գյուղական բնակարանների համար նախատեսված տիպային նախագծերում, մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, մի շարք նորակառույց կոլտնտեսային ավաններում բնավ չի օգտագործվել այդ ոչ թանկ, սակայն հետաքրքիր միջոցը։

## ՆԱԽԱԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ

Նախալեռնային շրջանների կլիմայական և աշխարհագրական յուրահատուկ պայմաններն իրենց որոշակի կնիքն են դրել կառուցվող բնակելի տների ճարտարապետության վրա, որը դրսևորվել է հարթավայրային և լեռնային շրջանների բնակելի տների կոմպոզիցիաների յուրահատուկ միահյուսումով։ Այսպես, օրինակ, Արարատյան դաշտավայրի սահմանագծին մոտ դասավորված գյուղերում (Ավան, Առինջ, Եղվարդ, Աշտարակ) բնակելի տան հիմնական, որոշիչ կոմպոզիցիան է հարթավայրային, ցածրադիր շրջաններին յուրահատուկ հարթ ծածկով բնակարանների ձևերը, մինչդեռ գլխատները այս բնակավայրում եզակի երևույթ են։

Սակայն, դեպի լեռները բարձրանալու և կլիմայի ու գյուղատնտեսական արտադրության փոփոխման հետ միասին, պարզ կերպով կարելի է նկատել հարթավայրային տիպի կառուցվածքների որոշ էվոլյուցիան, նրանց հարմարեցումը կլիմայական ավելի խիստ պայմաններին և դրան զուգընթաց, լեռնային շրջանների յուրահատուկ կոմպոզիցիաների ներթափանցումը, որը դրսևորվել է արդեն գլխատների առկայությամբ։

Այս գյուղերում, այգեգործության հետ միասին, գյուղատնտեսական արտադրության մեջ ոչ պակաս էական տեղ են գրավում անասնապահությունը և դաշտավարությունը։ Այս բանը դեռևս նախասովետական շրջանում չէր կարող իր որոշակի ազդեցությունը չթողնել ժողովրդական բնակելի տան ճարտարապետական կոմպոզիցիաների վրա։ Եվ իսկապես, պարզ կերպով կարելի է նկատել, որ այս շրջաններում կառուցվող հարթ ծածկով տները արդեն չունեն այն ընդարձակ մառանները և պատշգամբները, որ ունեն հարթավայրային շրջանների տները, այստեղ բնավ չեն կառուցվում այն հովանոց-դալանները, որոնք յուրահատուկ էին ցածրադիր վայրերի ժողովրդական ճարտարապետությանը։ Սակայն, միաժամանակ բնակարանի կոմպլեքսում, հարթ ծածկով սենյակների կողքին, սովորական է նաև հազարաշենի գոյությունը, որը, ճիշտ է, կառուցվում է հիմնականում որպես հացատուն, սակայն նախասովետական շրջանում քիչ չէին և այնպիսի բնակարաններ, որտեղ բացակայում էին հարթ ծածկով սենյակները և ամբողջ ընտանիքը տեղավորվում էր գլխատան մեջ։

Նշենք մի քանի օրինակներ։ Կապուտան գյուղում (Կոտայքի շրջան) Վ. Մանուկյանի բնակարանը՝ կառուցված 1937 թվականին, բաղկացած է 2 սենյակից, ընդ որում առաջին, միջանցիկ սենյակը օգտագործվում է նաև որպես խոհանոց և ճաշասենյակ։ Բնակարանն ունի փոքրիկ նախամուտք, որի համեստ չափերը բացատրվում են այդ շրջաններում ուժեղ քամիների և ձյան առկայությամբ, որոնք համարյա թե անօգտագործելի են դարձնում մեծ պատշգամբները։ Ըստ հատակագծային կոմպոզիցիայի այստեղ ևս կրկնվում է բնակարանի այն լայնորեն տարածված ձևը, որին հանդիպում ենք և՛ լեռնային, և՛ հարթավայրային շրջաններում։

Սակայն, միաժամանակ, այստեղ բացակայում են դեպի հյուսիս ուղղված բացվածքները և թե՛ նախամուտքը, թե՛ դռներն ու լուսամուտները ուղղված են դեպի հարավ։ Բնակարանը ծածկված է քառալանջ էտերնիտի ծածկով, որն այս շրջաններում համեմատաբար լայն մասշտաբներով տարածվել է վերջին տասնամյակների ընթացքում։

Երկհարկ բնակարաններում բնակելի սենյակները դասավորվում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հարկում։ Այսպես է նույն գյուղում Ս. Նազարյանի բնակարանը, որի առաջին հարկը կառուցված է 1936 թվականին, իսկ երկրորդ հարկը 1946 թվականին։ Հին բնակարանը, որը մի ոչ մեծ գլխատուն էր, վեր է ածվել

մառանի և հացատան։ Առաջին հարկում, միջանցիկ սենյակի մի մասը նույնպես օգտագործվում է որպես մառան։ Դեպի երկրորդ հարկն են տանում քարի ոչ մեծ աստիճանները, որոնք դասավորված են փոքրիկ պատշգամբի առջևում, բնակարանի դեպի բակ ուղղված ճակատին ուղղահայաց։ Այս շրջաններում հիմնական շինանյութը հանդիսանում է ճեղքված քարը, թեև այն գյուղերում, որտեղ կան լավ քարհանքեր (Ավան, Առինջ, Ջրվեժ), շատ բնակարաններ կառուցված են մաքուր տաշած տուֆից։ Հատկանշական է, որ սովետական շրջանում կառուցված բնակարանի արտաքին ճակատները ձևավորող զարդաքանդակների մեջ որոշակի տեղ է բռնում սովետական թեմատիկան, և բնակարանների ճակատների վրա հաճախ կարելի է տեսնել ամենաբազմազան բուսական և կենդանական զարդաքանդակների հետ մեկտեղ էմբլեմաներ, աստղեր, մուրճ և մանգաղ և այլն։

* • *

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ժողովրդական ճարտարապետության զարգացումը կոլտնտեսային կարգերի հաղթանակից հետո ընթանում է բնակելի տան կիսաարտադրական գործոնի վերացման և կլիմայական պայմաններից նրա ունեցած կախվածության էական թուլացման ճանապարհով։

Ժողովրդական ճարտարապետության զարգացման վրա առավել բարենպաստ ազդեցություն կոչված են ունենալու ճարտարապետական արվեստանոցներում մշակված և կոլտնտեսական գյուղի համար նախատեսված բնակարանների նախագծերը, որոնք գյուղ են տանում մեր այսօրվա գիտական հիմքերի վրա մշակված ճարտարապետական կուլտուրան և կոլտնտեսականներին ակնառու կերպով ապացուցում նոր ձևի բնակարանների նշանակալից առավելությունները։

Գյուղական բնակավայրերի համար անհատական բնակելի տների նախագծումը, որը սկսվել էր դեռևս երեսունական թվականներին, հատկապես լայն թափ ստացավ հետպատերազմյան տարիներին, երբ մշակվեցին սակավահարկ բնակարանների նախագծեր, բաղկացած մեկից չորս սենյակ ունեցող բնակելի տների բազմաթիվ տարբերակներից։ 1947—49 թվականներին նախապատրաստվեցին սակավահարկ տների նախագծերի մի քանի սերիաներ, որոնք որոշ նշանակություն ունեցան գլխավորապես քաղաքամերձ

ավանների կառուցման համար։ Այդ նախագծերը շատ քիչ կիրառվեցին կոլտնտեսային գյուղում հետպատերազմյան տարիներին ծավալված բնակարանային շինարարության մեջ։ Հազարավոր բնակարաններ կառուցվեցին գյուղում, կրկնելով ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված ձևերը։ Այս բանը, իհարկե, պատահական չէր։ Բանը նրանում է, որ նախագծերի մեծ մասը կազմված էր քաղաքատիպ վայրերի համար, և համարյա թե հաշվի չէին առնըված կոլտնտեսային գյուղի կոնկրետ պայմանները։

Նախագծերի սերիաների հիմնական թերություններից մեկն էլ նրանց շրջայնացված չլինելն էր, ինչ դրսևորվում էր առաջին հերթին պատշգամբների և տերրասների առկայության հարցում, էլեմենտներ, որոնք ժողովրդական ճարտարապետության մեջ լայնորեն տարածված են հատկապես հարթավայրային, ցածրադիր շրջաններում և շատ սահմանափակ օգտագործում են գտնում և կամ լրիվին փոխարինվում ապակեպատ պատշգամբներով, լեռնային կլիմայական գոտում։

Եվ այն հանգամանքը, որ նախագծերում նախատեսված էին ինչ որ «միջին» չափի պատշգամբներ, իհարկե, չէր կարող բավարարել ոչ ցածրադիր շրջանների և ոչ էլ լեռնային շրջանների պահանջներին։ Ցածրադիր շրջաններում նրանք միանգամայն անբավարար էին, իսկ լեռնային շրջաններում՝ ավելորդ։ Գյուղական բնակավայրերի շինարարական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շարքերի նույնիսկ այն նախագծերը, որոնք համեմատաբար ավելի հարմար էին գյուղական պայմաններին, էական փոփոխությունների են ենթարկվել և լեռնային և հարթավայրային շրջաններում։ Այսպես, օրինակ, ճարտ. Ա. Կանայանի նախագծով Սպիտակում կառուցված բնակարաններում բաց պատըշգամբը ամբողջովին փոխարինված է ապակեպատ պատշգամբով։ Սակայն նույն նախագծով Արարատյան դաշտավայրում կառուցված բնակարաններում այս համեմատաբար փոքր պատշգամբները արդեն բնավ չեն բավարարում տեղական պայմաններին և որպես կանոն մեծացվում են մի քանի անգամ։

Պատշգամբների դասավորության հարցը ամենասերտ կերպով կապված է նաև բնակարանի ընդհանուր կոմպոզիցիայի հետ։

Եթե հարթավայրային շրջաններում բնակելի սենյակների փոխադարձ դասավորության ժամանակ էական նշանակություն ունի նրանց անմիջական կապը պատշգամբի հետ, ապա լեռնային շըրջաններում, որտեղ ամեն ինչ արվում է բնակարանը ավելորդ ցըր-

տեցումից պաշտպանելու համար, պարզ է, որ բնակարանի կոմպոզիցիան պետք է լուծված լինի միայն մեկ, հիմնական մուտքի առկայության պայմաններից ելնելով, որը և իբրև կանոն պետք է բացվի նախամուտքում։

Նույն բանը կարելի է ասել նաև նկուղների դասավորության և հատկապես նրանց մուտքերի նկատմամբ, որոնք ցածրադիր շրջաններում արվում են առանձին, իսկ լեռնային շրջաններում կարող են անմիջական կապ ունենալ խոհանոցի կամ միջանցքի հետ։

Պետք է նշել նաև մի այլ հանգամանք, որը առավել էական է և պետք է հաշվի առնվի սակավահարկ անհատական բնակարանների կառուցման և հատկապես գյուղական բնակարանների կառուցման ժամանակ։ Դա բնակարանների կառուցման հերթականության սկզբունքն է, մի բան, որը հանդիսանում է հայկական ժողովրդական ճարտարապետության դարավոր տրադիցիաներից մեկը, և պետք է լայնորեն օգտագործվի նաև նոր բնակարանների նախագծերը կազմելու ժամանակ։ Ինչպես ցույց է տալիս ժողովրդական բնակելի տների ուսումնասիրությունը, գյուղացին որպես կանոն իր բնակարանը կառուցում է մի քանի հերթով։ Տարբեր շրջաններում կան տարբեր սովորություններ։ Մի շրջանում սկզբում կառուցում են բնակելի սենյակները և ապա մի քանի տարի անցնելուց հետո պատշգամբը և այլն, մյուս շրջաններում առաջ կառուցում են օժանդակ մասերը (մառան, հացատուն և այլն) և որոշ ժամանակ այստեղ ապրելուց հետո, կառուցում բնակելի սենյակները։

Բնակարանային շինարարության այս մեթոդը լայնորեն կիրառվում է կոլտնտեսականների կողմից նաև այսօր, անհատական բնակարանային շինարարության ժամանակ, ունի իր զգալի առավելությունները և հնարավորություն է տալիս շենքի կառուցմանը ձեռնարկել նույնիսկ տնտեսական սահմանափակ միջոցների առկայության պայմաններում։

Սակայն, շինարարության այս մեթոդի ժամանակ գյուղական բնակավայրերում հաճախ կարելի է տեսնել կիսավարտ շենքեր, որոնք, ինչ խոսք, չեն կարող որևէ ճարտարապետական ձևավորում տալ գյուղի փողոցին։ Ահա այս նախադրյալներն էլ մեր կարծիքով, անպայման պետք է հաշվի առնվեն նոր նախագծերում և ժողովրդական ճարտարապետության այս պրոգրեսիվ տրադիցիաները հարմարվեցին կոլտնտեսային գյուղում կատարվող շինարարության պայմաններին։ Նախագիծը հնարավորություն պետք է տա ոչ միայն կառուցել շենքը մաս առ մաս, այլև այն պետք է մշակված

լինի այնպես, որ շինարարության յուրաքանչյուր ստադիան իրենից ներկայացնի մի ճարտարապետական ամբողջություն, և կառուցվածքը չթողնի կիսավարտ շենքի տպավորություն։ Շինարարության հաջորդ ստադիան պետք է նախատեսված լինի այնպես, որ կցվելով արդեն գոյություն ունեցող մասին, բնավ չպահանջի նրա որևէ կոնստրուկտիվ էլեմենտի էական փոփոխությունը։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել ճարտ. Գ. Ջաքիևի նախագծած երեք սենյականոց բնակարանը, հաշված երկհերթ կառուցման համար։ Ըստ նախագծի, սկզբում կառուցվում է բնակարանի մեկ սենյակը և նրան կից օժանդակ մասերը (խոհանոց, միջանցք, փոքրիկ պահեստ)։ Հետագայում կարելի է ավելացնել երկրորդ սենյակը, որի կառուցումը չի խախտում նախապես կառուցված մասի և ոչ մի ճարտարապետական էլեմենտ։ Թեև այս նախագծով կոլտնտեսային ավաններում կառուցվեցին մի շարք բնակարաններ, բայց և այնպես այդ դրական փորձը լայն տարածում չստացավ և բնավ չարտահայտվեց ավելի ուշ տարիներում արված նախագծերում։ Մինչդեռ տիպային նախագծերի ներդրման գործում նշանակալից խոչընդոտներից մեկը հենց հանդիսանում է շենքի, այսպես ասած «միանգամից» կառուցելու անհրաժեշտությունից բխող նրա ոչ էկոնոմիկ լինելը, որովհետև կոլտնտեսականը փաստորեն ոչ մի հնարավորություն չունի կառուցելու այն մաս-մաս, առանց ապագայում այն շարունակելու դեպքում հիմնական էլեմենտների, և հատկապես արդեն կառուցած մասի ծածկի քանդման սպառնալիքի առաջ կանգնելուց։ Նախագծերի նշված սերիաների մեջ լուրջ թերություններ կան նաև առանձին բնակարանների հատակագծային կոմպոզիցիաների և կոնստրուկտիվ ձևերի բնագավառում։ Այսպես, օրինակ՝ նախագծերի մեծամասնության մեջ պատշգամբների սյուները արված են մաքուր տաշված քարերից, որոնց վրա հենվող երկաթբետոնի հեծանի վրա շարվում է մեկ-երկու շարք քար։ Ինչ խոսք, որ այս կոնստրուկցիան, մեխանիկորեն փոխադրված քաղաքի մոնումենտալ կառուցվածքներից, էական դժվարություններ կստեղծի գյուղական պայմաններում կառուցելու ժամանակ։

Այս և նման կարգի կոնստրուկտիվ մի շարք թերություններ, պարզ է, որ չէին կարող նպաստել նախագծերի լայն կիրառմանը կոլտնտեսային գյուղի շինարարական պրակտիկայում։ 1951—52 թթ. նախագծերի սերիաների մեջ կան համեմատաբար հաջողված գործեր, որոնցից նշենք մի քանիսը։

**Մեկ սենյականոց բնակարան** *(հեղ. ճարտ. Հ. Դավթյան)* — *Բնակարանը բաղկացած է մեկ հիմնական սենյակից, խոհանոցից, միջանցքից և ընդարձակ պատշգամբից։ Բնակարանը ունի նաև ընդարձակ նկուղ, որը բռնում է բնակելի սենյակի և խոհանոցի տակ ընկնող ամբողջ տարածությունը։*





*Մեկ սենյականոց բնակարանի նախագիծ*
*հեղ. ճարտ. Հ. Դավթյան*

*Բնակարանի ամբողջ կոմպոզիցիան պարզ է, կոմպակտ։ Լավ է դասավորված նկուղի մուտքը, դրան առջև ստացվում է որոշ ծածկված տարածություն։ Սակայն, նախագիծն ունի նաև թերություններ, որոնցից է կոնստրուկտիվ տեսակետից չբացատրված պատշգամբի անկյան քարե սյունը, որը ազատ կերպով կարելի է փոխարինել փայտի սյունով։*

**Երկու սենյականոց բնակարան** *(Հեղ. ճարտ. Ա. Կանայան)* — *Այս նախագիծը ևս, վերը նշածների նման հաշված է հարթ վայրում կառուցելու համար։ Ընդհանուր դասավորությունը հաջող է, մակերեսները լավ են օգտագործված։ Սակայն պետք է նշել, որ այստեղ պատշգամբը լրիվին մեկուսացված է բնակելի սենյակներից և դրա հետ միասին միջանցիկ է իր ամբողջ երկարությամբ, մի բան, որը անհարմարություններ կարող է ստեղծել այն օգտագործելու ժամանակ։*



*Երկու սենյականոց բնակարանի նախագիծ*
*Հեղ. ճարտ. Ա. Կանայան*

*Տեղանքի թեքությունը հաճախ էական նշանակություն է ստանում բնակարանի ընդհանուր կոմպոզիցիայի մշակման ժամանակ։ Նշենք մի քանի նախագծեր, որտեղ հեղինակներին, անշուշտ, հաջողվել է օգտագործել տեղանքի թեքությունը և ստանալ հետաքրքիր լուծումներ։*

**Երկու սենյականոց բնակարան** *(Հեղ. ճարտ. Գ. Գրիգորյան)* — *Բնակարանն առջևի մասում ունի երկհարկ կոմպոզիցիա և դրված է փողոցի նկատմամբ ընդլայնական ուղղությամբ, այնպես որ դեպի փողոց են դուրս գալիս ճաշասենյակի լուսամուտները և նրա առջև արված փայտյա փոքրիկ, նուրբ զարդաքանդակներով ձևավորված պատշգամբը։ Բնակարանի աջ կողմում դասավորված է փոքրիկ նախամուտքը, որտեղ և բացվում են ճաշասենյակի, խոհանոցի և ննջարանի դռները, իսկ բնակարանի դեպի բակը նայող ճակատի ամբողջ երկարությամբ տեղավորված լայն ու ընդարձակ պատշգամբի մի կողմում, խոհանոցի պատին կից, արված է ամառային օջախը։*

*Ճաշասենյակի տակ տեղավորված է նկուղը. վերջինս ունի իր առանձին մուտքը, մի բան, որը լրիվին համապատասխանում է*

Արարատյան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետության տրադիցիաներին։ Ճաշակով են ձևավորված նաև արտաքին ճակատները, որտեղ հեղինակին հաջողվել է հմտորեն օգտագործել ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված էլեմենտները և հասնել նշանակալից հաջողության։



Երկու սենյականոց բնակարանի նախագիծ հեղ. ճարտ. Հ. Իսաբեկյան

Սակայն, միաժամանակ պետք է նշել, որ բակի կողմի ճակատի մշակումը (պատշգամբի ծածկը արված է բաց ճակտոնի ձևով, նրա թեք հեծանները պահող երկու փայտյա սյուներով) հարազատ չէ հայկական ժողովրդական ճարտարապետությանը։

**Երկու սենյականոց բնակարան** (ճարտ. Հ. Իսաբեկյան) — Կառուցվածքն ունի երկհարկանի կոմպոզիցիա։ Առաջին հարկում տեղավորված է նկուղը, իսկ երկրորդ հարկում՝ բնակելի սենյակները, խոհանոցը և պատշգամբը։ Բնակարանի ընդհանուր, անշուշտ, հաջող կոմպոզիցիան հնարավորություն է տվել նկուղի առջև ստանալ պատշգամբի մակերեսին հավասար մի բաց տարածություն, որը ծածկված լինելով վերևից պատշգամբով, փաստորեն մի բաց սրահ է, շատ հարմար տնտեսական զանազան գործողությունների համար։ Հեղինակին այստեղ հաջողվել է օգտագործել ժողովրդական ճարտարապետության մեջ հանդիպող համանման լուծումները և ստանալ մի լրացուցիչ օժանդակ մակերես։

Պատշգամբում տեղավորված դուռը տանում է նախասենյակը, որտեղ բացվում են ճաշարանի և խոհանոցի մուտքերը։ Անշուշտ, հաջող է մշակված սենյակների և խոհանոցի հատակագծային լուծումը, թեև այն հանգամանքը, որ սենյակները անմիջական ոչ մի կապ չունեն պատշգամբի հետ, և ոչ մի լուսամուտ չի բացվում ոչ դեպի պատշգամբը և ոչ էլ դեպի բակը, որոշակի անհար-

մարությունններ կարող է ստեղծել բնակիչների կենցաղում։ Արտաքին ճակատները պարզ են, ճաշակով մշակված։





*Երկու սենյականոց բնակարանի նախագիծ*
*Հեղ. ճարտ. Գ. Գրիգորյան*

**Երկու սենյականոց բնակարան** *(Հեղ. ճարտ. Հ. Հակոբյան)— Բնակարանը նախատեսված է Լոռվա պայմաններում կառուցելու համար, և ունի դարձյալ երկհարկ կոմպոզիցիա։ Պետք է հաջողված համարել բնակարանի ընդհանուր հատակագծային լուծումը որտեղ հեղինակին հաջողվել է օգտագործելով ռելյեֆի թեքությունը, գտնել բնակելի սենյակների և օժանդակ մասերի փոխադարձ հարմար դասավորություն։ Սակայն նախագիծը ունի նաև մի շարք վիճելի կողմեր, որոնցից նշենք նկուղի մուտքի դասավորությունը բնակարանի գլխավոր ճակատում, բնակարանի գլխավոր*

մուտքի կոմպոզիցիայի անհաջող լինելը, որտեղ դեպի երկրորդ հարկ տանող ծածկված սրահը մի կողմից ունի կամարակապ բացվածք, իսկ մյուս կողմից վերջինիս անմիջապես կից արխիտրավային ծածկ։ Մակերեսի որոշ կորուստ կա նաև նկուղում, որտեղ միանգամայն անօգտագործելի է մնում նկուղը ներքին աստիճանների հետ կապող տարածությունը։



*Երկու սենյականոց բնակարանի նախագիծը*
*Հեղ. ճարտ. Հ. Հակոբյան*

Անհատական մենատների այս սերիաներից հետո Ռեսպուբլիկական նախագծային ինստիտուտը ձեռնարկեց կազմելու տիպային նախագծերի սերիաներ, որտեղ նշանակալից չափով հաշվի են առնված վերը նշված առանձին թերությունները։ Որպես առավել դրական երևույթ պետք է նշել տիպային նախագծերի շրջանացված լինելը, որը հնարավորություն տվեց մշակել միևնույն նախագծային առաջադրանքի համապատասխան մի քանի նախագծեր՝ Սովետական Հայաստանի հարթավայրային, ցածրադիր շրջանների համար։

Տիպային բնակելի տների նախագծման այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս հասնել առանձին կառուցվածք-

ների բազմազան կոմպոզիցիոն լուծումների, պահպանելով միաժամանակ արտաքին ճարտարապետական լուծումների մեջ մի որոշակի ընդհանրություն։



*Երկու սենյականոց բնակարանի տիպային նախագիծ*
*Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան*

*Մյուս կողմից, այս մեթոդը հնարավորություն է տալիս մշակված նախագծերի հիման վրա հասնել բնակավայրի առանձին թաղամասերի, փողոցների և նույնիսկ ամբողջ ավանների անսամբլային կառուցմանը, պահպանելով առանձին կոնստրուկտիվ հանգույցների և էլեմենտների տիպական ձևերը, որը և իր հերթին նախադրյալներ է ստեղծում նրանց կենտրոնացված արհեստանոցներում պատրաստելու և այսպիսով գյուղական բնակավայրերում կատարվող շինարարությունը արդեն պատրաստի մանրամասներով մատակարարելու համար։*

*Տիպային նախագծերի այս շարքը բաղկացած է երկու սենյականոց բնակարանների երեք նախագծերից (№ 1, 2, 3 հեղինակները համապատասխանաբար ճարտարապետներ Ռ. Իսրաելյան, Հ. Դավթյան և Ս. Ներսիսյան և երեք սենյականոց բնակարանների երկու նախագծերից № 4 № 5 կազմված համապատասխանաբար*

ճարտարապետներ Ա. Կանայանի և Ս. Հովհաննիսյանի կողմից)։ Բնակելի տների նախագծերի հետ մեկտեղ մշակված են նաև տնամերձ հողամասերի հատակագծման նախագծերը, ընդ որում ընդունված են այդ հողամասերի տարբեր չափեր՝ 512 և 1152 քառակուսի մետր։ Նախագծերի սերիայում մշակված են բոլոր կոնստրուկտիվ մանրամասները, որոնք, ի դեպ, ընդհանուր են բոլոր շենքերի համար։ Միաժամանակ բոլոր կառուցվածքները մշակված են ինչպես մաքուր տաշած քարով երեսպատելու, այնպես էլ սվաղելու համար, մի բան, որը լայն հնարավորություններ կտա հասնելու տիպային շենքերի որակյալ կառուցմանը նաև այն բնակավայրերում, որտեղ էական դժվարություններ են հանդիպում լավորակ քար գտնելու տեսակետից։



Երկու սենյականոց բնակարանի տիպային նախագիծ
Հեղ. ճարտ. Հ. Դավթյան

Մանրամասն կերպով մշակված են նաև ինչպես բոլոր կոնստրուկտիվ հանգույցները, այնպես էլ արտաքին ճակատների բոլոր էլեմենտները։ Նախագծերի այս շարքում հեղինակներին անշուշտ հաջողվել է ստանալ էկոնոմիկ և համախմբված հատակագծային լուծումներ ունեցող և ժողովրդական ճարտարապետության ձևերին հարազատ մանրամասնություններով ձևավորված շենքեր, որոնք նշանակալից ներդրում են գյուղական և կոլտնտեսային բնակարանային շինարարության գործում։ Սակայն այստեղ ևս կան մի քանի թերություններ, որոնք, մեր կարծիքով, հիմնականում հետևանք են ժողովրդական ճարտարապետության պրոգրեսիվ էլեմենտների անբավարար օգտագործելուն։ Այսպես, օրինակ՝ ինչպես վերը նշված նախագծերում, այնպես էլ այստեղ, հաշվի չեն առնված բնակելի տների կառուցման հերթականության հարցերը, որը իհարկե էական թերություն է այսպիսի մանրամասն կերպով մշակված նախագծային սերիայի համար։ Բացի այդ, համարյա բոլոր նախագծերն էլ կազմված են նկատի ունենալով բնակելի տան փողոցի նկատմամբ միայն մեկ ձևի դասավորությունը, որը հարթավայրային ցածրադիր շրջաններում անպայման կառաջացնի որոշ դժվարություններ և առանձին դեպքերում հնարավոր չի լինի խուսափել այդ

շրջանների համար բնակելի սենյակների առավել անբարենպաստ՝ արևմտյան օրիենտացիայից։

Նույնպես չի կարելի բավարար լուծում համարել խոհանոցի և նկուղի կապը միայն խոհանոցից բացվող լյուկի միջոցով, որը բնավ յուրահատուկ չէ հայկական ժողովրդական ճարտարապետության ընդհանրապես և ցածրադիր շրջանների համար մասնավորապես։



Երկու սենյականոց բնակարանի տիպային նախագիծ
Հեղ. ճարտ. Ս. Ներսեսյան

Արարատյան դաշտավայրի ժողովրդական ճարտարապետության մեջ որպես կանոն նկուղները միշտ էլ ունենում են առանձին մուտքեր, որոնք սովորաբար դասավորված են լինում բնակարանի դեպի բակը ուղղված ճակատում։

Այսպիսի կոմպոզիցիան, անշուշտ, ունի իր որոշակի նախադրյալները (համեմատաբար մեղմ ձմեռը, նկուղում մեծ ծավալի իրեր քթոցներ, կարասներ և այլն պահելու անհրաժեշտությունը) և լիովին արդարացնում է իրեն, մինչդեռ բոլոր նախագծերում էլ հե-

ղինակները հրաժարվել են այդ լուծումից և փոխարինել առանձին մուտքը լյուկով, մի բան, որը որոշակի դժվարություններ կառաջացնի տեղում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ առանձին մուտքի կառուցումը և կոնստրուկտիվ և տնտեսական տեսակետից ոչ մի դժվարություն չի ներկայացնում։



Երկու սենյականոց բնակարանի տիպային նախագիծ
Հեղ. ճարտ. Ա. Կանայան

Ոչ բոլոր նախագծերում է, որ հաջող է լուծված սանիտարական հանգույցների տեղավորման հարցը։

Առանձին թերություններ կան նաև պատշգամբների դասավորության տեսակետից, որոնք ժողովրդական ճարտարապետության մեջ որպես կանոն միշտ էլ ուղղված են դեպի բակը, որովհետև հատկապես Արարատյան դաշտավայրի գյուղական բնակավայրե-

րում լայն, ընդարձակ պատշգամբներում են բնակիչները անց կացնում իրենց ազատ ժամանակի մեծ մասը, այնտեղ և՛ ճաշում են, և՛ հանգստանում և՛ քնում։



Երկու սենյականոց բնակարանի տիպային նախագիծ
Հեղ. ճարտ. Ս. Հովհաննիսյան

Սակայն, որոշ նախագծերում այդ պատշգամբները համարյա ամբողջությամբ դիտվում են փողոցից, իսկ ճարտ. Հ. Դավթյանի նախագծում այն ամբողջովին դուրս է գալիս դեպի փողոց, որը որոշակի անհարմարություններ կարող է ստեղծել այս տիպի բնակարաններում ապրող կոլտնտեսականի կենցաղում և բացի այդ կպահանջի շենքի հեռացումը կարմիր գծից, որն իր հերթին կսահ-

մանափակի այդ տիպի կիրառումը։ Բնակելի տների արտաքին ճակատների ընդհանուր կոմպոզիցիաները պարզ են, առանց ավելորդությունների և հեղինակներին անշուշտ հաջողվել է օգտագործելով ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված ձևերը, ստանալ կոլտնտեսային գյուղի բնակելի տների լավ օրինակներ, թեպետ առանձին դեպքերում, փոխանակ օգտագործելու ժողովրդական ճարտարապետության մեջ փայտի տարբեր էլեմենտների զարդաքանդակների մշակման հարուստ ժառանգությունը, առաջարկված են ձևեր, որոնք արդյունք են միջնադարյան քարի մոնումենտալ ճարտարապետության մեջ հանդիպող ձևերի մշակմանը, և այդ պատճառով էլ իրենց բնույթով խորթ են փայտին։

Ամփոփելով տիպային նախագծերի այս շարքը, կարելի է ասել, որ չնայած առանձին թերություններին, հաջողվել է ստեղծել կոլտնտեսային գյուղերի և ավանների համար այնքան անհրաժեշտ բնակելի տների տիպային նոր նախագծեր, որոնք իրենց որակով մի քայլ առաջ են անցնում մինչև այժմ մեզ մոտ մշակված համապատասխան նախագծերից։

Սակայն, նախագծերի այս սերիան կազմված է միայն հարթավայրային, ցածրադիր շրջանների համար և այժմ առաջնահերթ խնդիր է հանդիսանում կազմել համանման տիպային նախագծեր նաև Սովետական Հայաստանի կլիմայական այլ գոտիների և առաջին հերթին լեռնային շրջանների համար։

* * *

Ամփոփենք — Գյուղական բնակավայրերի բնակելի տների ճարտարապետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոլտնտեսային կարգերի հաղթանակը արմատական փոփոխություններ մտցրեց ոչ միայն գյուղացիների ապրելակերպի մեջ, այլև իր որոշակի ազդեցությունն ունեցավ ժողովրդական ճարտարապետության վրա, հիմնովին փոխելով նրա զարգացման ուղին։

Կոլտնտեսային կարգերի հաստատումը, աշխարհագրական տարբեր դիրք ունեցող շրջաններում ապրող կոլտնտեսականների համար ստեղծեց ապրելակերպի համանման պայմաններ. կոլտնտեսականի ապրուստի հիմնական աղբյուրը դարձավ հանրային արտադրությունից ստացած եկամուտը, իսկ տնամերձ տնտեսությունը ստացավ միայն օժանդակ կարիքները բավարարող նշանակություն։ Այս պայմաններում կոլտնտեսական գյուղում բնակելի

տան ճարտարապետական կոմպոզիցիայի հիմնական էլեմենտն է դառնում բնակարանի բնակելի մասը, իսկ օժանդակ կառուցվածքները, որոնք առաջներում բնակելի մասից ոչ պակաս նշանակություն ունեին բնակարանի ընդհանուր կոմպոզիցիայի կազմավորման ժամանակ, այժմ գրավում են երկրորդական, ստորադաս



Տիպային բնակելի տներից կազմված թաղամասի հատակագիծը

տեղ։ Թեև ամեն մի աշխարհագրական շրջանում այդ կառուցվածքների ձևերը դարձյալ թելադրվում են այդ շրջանների գյուղատնտեսական արտադրության հիմնական տեսակներից (անասնապահական կառուցվածքները առկա են անխտիր բոլոր շրջաններում), սակայն նրանք ըստ իրենց բացարձակ չափերի համեմատած բնակարանի բնակելի մասի հետ, հետին պլանի վրա են մղվում և որպես կանոն աստիճանաբար անջատվելով բնակելի մասից, կազմում են մի առանձին տնտեսական մաս, նրանց առջև արված փոքրիկ բակով։ Այս ամենը հասցրեց նրան, որ կոլտնտեսային գյուղում ապրելակերպի համանման պայմանները նախադրյալներ են ստեղծում նաև բնակելի տների համանման, իրենց կոմպոզիցիայով առավել ռացիոնալ տիպերի տարածման համար և այժմ առանձին շրջանների նոր բնակելի տների միջև եղած տարբերությունները ավելի շատ հետևանք են կոնկրետ աշխարհագրական պայմանների, տեղական շինանյութերի և կառուցողական տարրեր ձևերի։

Այս առավել ցայտուն կերպով դրսևորվում է լեռնային շրջաններում, որտեղ կոլտնտեսային կարգերի հաղթանակը հիմք հանդիսացավ գլխատների, որպես բնակարանի վերացման համար։

Լեռնային շրջաններում այժմ բնակելի տան հիմնական տիպը դառնում է հարթ առաստաղով և լուսամուտներով բնակարանը, որտեղ իրենց յուրահատուկ տեղը ունեն սովորաբար ապակեպատ պատշգամբները։

Ռեսպուբլիկայի ինչպես անտառներով հարուստ (Լոռի), այնպես էլ հարթավայրային, ցածրադիր շրջաններում (Արարատյան դաշտավայր) դեռևս նախասովետական ժամանակաշրջանում ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված բնակելի տների մի շարք ռացիոնալ ձևերը անշուշտ կարող են էական նշանակություն ունենալ բնակելի տների նոր տիպերի մշակման ժամանակ։ Սովետական Հայաստանի գյուղական բնակավայրերի և բնակելի հատվածի շինարարության գործում ամենաառաջնակարգ տեղը պետք է գրավեն նախագծային արվեստանոցներում կազմված տիպային նախագծերը .որոնք նախատեսնում են շինարարության կատարյալ մեթոդներ։ Այն դրական փորձը, որը կուտակվել է մինչև այժմ, պետք է լայնորեն ուսումնասիրվի և հիմք հանդիսանա նախագծերի հետագա սերիաների մշակման ժամանակ։ Բացի այդ, առաջնակարգ խնդիրներից մեկը պետք է հանդիսանա այդ նախագծերի լայն պրոպագանդան. նրանց մասսայական տիրաժներով հրատարակելը, մի բան, որը զգալիորեն կնպաստի նրանց տարածմանը և գյուղական բնակավայրերի որակյալ կառուցապատմանը և բարեկարգմանը։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

*Գյուղում սոցիալիզմի հաղթանակը հիմք հանդիսացավ գյուղական բնակավայրերի միանգամայն նոր տիպի հասարակական կենտրոնների կազմավորման համար, որտեղ սովորաբար տեղավորվում են գյուղսովետի և կոլտնտեսության վարչության գրասենյակները, ակումբը, փոստը, գյուղական հյուրանոցը, խանութները և այլ շենքեր։*

*Այս կառուցվածքներն են, որ հանդիսանում են սոցիալիստական գյուղի հասարակական կենտրոնը որոշող հիմնական էլեմենտները և նրանց ճարտարապետական կերպարն է, որ առավել ցայտուն կերպով բնորոշում է նոր գյուղի ընդհանուր պատկերը, արտահայտում այստեղ տեղի ունեցած սոցիալական հեղաշրջումը, նոր կենցաղը և կյանքի նոր պայմանները։*

*Կոլտնտեսային գյուղի հասարակական կենտրոնի ճարտարապետությունը պետք է օրգանապես կապված լինի գյուղի ընդհանուր կառուցապատման, բնության, շրջապատի պեյզաժի հետ և հարազատ լինի ժողովրդական արվեստին։*

*Հասարակական կենտրոնը պետք է որոշակի կերպով աչքի ընկնի ամբողջ գյուղի հատակագծային սխեմայում, դրսևորվելով այնտեղ կառուցված շենքերի թե ընդհանուր ծավալով, և թե ճարտարապետական մեկնաբանությամբ։ Կոլտնտեսային գյուղի հատակագծման հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի պարզ և հստակ ճարտարապետական կոմպոզիցիա ունեցող հասարակական կենտրոնի մշակումը, որը և պետք է հանդիսանա բնակավայրի ամբողջ հատակագծային սխեմայի կորիզը։*

*Կոլտնտեսային ավանների հատակագծային բազմապիսի պայմանները առաջ են բերում հասարակական կենտրոնների մշակման տարբեր կոմպոզիցիաներ, որոնք կարող են ունենալ և հրապա-*

րակի և կենտրոնական փողոցների լայնացված խաչմերուկի ձևեր, կախված բնակավայրի մեծության, փողոցների և տեղանքի ռելյեֆային պայմաններից։ Գյուղական բնակավայրերի հրապարակները կարող են կազմավորվել ինչպես պարզ երկրաչափական, այնպես էլ ազատ դասավորության հիման վրա, նայած թե երկու սկզբունքներից որն է ավելի համապատասխան տվյալ բնակավայրի կոնկրետ պայմաններին։

Բնակավայրի հասարակական կենտրոնի կոմպոզիցիան մշակելու ժամանակ պետք է ելնել տվյալ բնակավայրում կատարվող ռեալ շինարարությունից, որովհետև եթե շրջանային կենտրոններում և քաղաքատիպ վայրերում հասարակական կենտրոնը կազմող հրապարակը սովորաբար ամբողջ պարագծով կառուցապատվում է հասարակական և ադմինիստրատիվ շենքերով, ապա գյուղական բնակավայրերում, բացի հասարակական շենքերից, այնտեղ կարող են տեղավորվել նաև բնակելի տներ։

Գյուղական բնակավայրերում երբեմն բացակայում են հրապարակները և հասարակական կենտրոնը կազմավորվում է կամ զբոսայգու շուրջը, ինչպես, օրինակ՝ Մարալիկում (Անիի շրջան) կամ թե չէ ներկայացնում գլխավոր փողոցի կենտրոնական մասի լայնացված հատվածը, ինչպես, օրինակ՝ Արտաշատի շրջանի Անաստասավան գյուղում։ Կոլտնտեսային ավանների հասարակական կենտրոնների կազմավորման հարցում էական դեր կարող են խաղալ նաև կանաչապատ տարածությունները, երբ գյուղական հրապարակի մի մասը անմիջապես սահմանափակվում է գյուղական պարկով, ինչպես, օրինակ՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում։

Գյուղական բնակավայրերի հասարակական կենտրոնի յուրահատուկ կողմը հանդիսանում է նրա սակավահարկ կառուցապատումը և շենքերի ազատ, միմյանցից սովորաբար նշանակալից հեռավորության վրա դասավորումը, մի բան, որը արմատական տարբերություն է մտցնում գյուղական և քաղաքատիպ վայրերի հրապարակների և հասարակական կենտրոնների միջև։

Ռեսպուբլիկայի գյուղական շատ բնակավայրերի հասարակական կենտրոնները այժմ գտնվում են կազմավորման պրոցեսում։ Այնտեղ առավել տարածված դեպքերում կառուցված են միայն ակումբները և դեռևս շատ գյուղերում չեն ավարտված հասարակական կենտրոնները կազմավորող մյուս կառուցվածքները, ինչպիսիք են կոլվարչությունների և գյուղսովետների դրասենյակները։ Վեր-

ցիններս բազմաթիվ գյուղերում տեղավորված են նորակառույց ակումբներում, զբաղեցնում են ակումբային սենյակների մի մասը և այդպիսով դժվարեցնում են նրանց աշխատանքը, մինչդեռ այն գյուղերում, որտեղ կառուցված են այդ գրասենյակների առանձին շենքերը (Բամբակաշատ, Նալբանդյան, Ակատան, Մարալիկ), ստեղծված են աշխատանքի ավելի լավ պայմաններ։ Բացի այդ, ունենալով նշանակալից ծավալ նրանք միաժամանակ էական դեր են խաղում նաև գյուղի հասարակական կենտրոնի ձևավորման հարցում։

Կոլտնտեսային գյուղի հասարակական կենտրոնի առավել նշանակալից կառուցվածքները հանդիսանում են ակումբները, և նրանց ճարտարապետական կերպն է, որ հիմնականում որոշում է ամբողջ հասարակական կենտրոնի անսամբլի բնույթը։ Այդ պատճառով էլ նրանց ճարտարապետության վրա անհրաժեշտ է կանգ առնել ավելի հանգամանորեն։

Ակումբը թե իր իդեական կողմով և թե իր ճարտարապետական դերով հանդիսանում է կոլտնտեսային գյուղի ամենահիմնական կառուցվածքներից մեկը։ Դրանով էլ բնորոշվում է այն տեղը, որ նա պետք է գրավի գյուղի հասարակական կենտրոնում։ Այս կապակցությամբ առաջնակարգ նշանակություն են ստանում ակումբի տեղի և դասավորության հարցերը, որովհետև լինելով գյուղական հասարակական կենտրոնի հիմնական, որոշիչ կառուցվածքը, ունենալով մյուս կառուցվածքների նկատմամբ կենտրոնական դասավորություն, ակումբը պետք է ունենա համապատասխան բարեկարգ, շրջապատ, որտեղ լավագույն կերպով պետք է օգտագործվեն տեղանքի բոլոր գեղարվեստական հնարավորությունները։

Այս տեսակետից ակումբի առավել նպատակահարմար դասավորությունն այն է, երբ գյուղական հրապարակի մի կողմում դասավորված ակումբի շենքին ընդհուպ կցվում է գյուղի կուլտուրայի և հանգստի պարկը, մի բան, որը լայն հնարավորություններ է ստեղծում ամռան ամիսներին շատ ակումբային միջոցառումներ այնտեղ փոխադրելու համար։

Գյուղական բնակավայրի հիմնականում միահարկ կառուցապատման պայմաններում առաջնակարգ նշանակություն է ստանում ակումբի ծավալային մշակման և սիլուետի հարցը, որովհետև ակումբը այստեղ դիտվում է բնակավայրի համարյա թե բոլոր կողմերից։

Միաժամանակ ակումբի ընդհանուր ճարտարապետական կոմպոզիցիան պետք է բխի նրա սոցիալիստական բովանդակությունից,

լավագույն պայմաններ ընձեռի ակումբային աշխատանքի համար և իբրև կոնկրետ միջավայրի արգասիք, լինի պարզ, առանց ավելորդությունների, ճշմարտացի արտահայտի նրա իդեական բովանդակությունը և սերտ կերպով կապված լինի ժողովրդական և ազգային մոնումենտալ ճարտարապետության հետ։ Ոչ պակաս նշանակություն ունի ակումբի ինտերյերի մշակման հարցը, որովհետև ամեն ինչ պետք է անել լավագույն կերպով օգտագործելու համար այն համեմատաբար ոչ մեծ տարածությունները, որոնք կան գյուղական ակումբներում։ Այդ տեսակետից էլ ակումբի ինտերյերը կազմակերպված պետք է լինի այնպես, որպեսզի ճարտարապետական հիմնական տարածությունները ունենան տրամաբանական հաջորդական զարգացում։ Միահյուսված, ինչպես տարածական, այնպես էլ ծավալային ձևերի հետ, ակումբի ինտերյերի ամեն մի առանձին մասը պետք է ունենա իր որոշակի բնութագիրը։ Ակումբները խոշոր դեր են կատարում գյուղի ամբողջ հասարակական կյանքում։ Ակումբում են հավաքվում կոլտնտեսայիններն իրենց արտադրական ամենակարևոր հարցերը լուծելու համար և այնտեղ է, որ գումարվում են կոլտնտեսության ընդհանուր ժողովները։

Այս հանգամանքն անշուշտ իր որոշակի ազդեցությունը կունենա գյուղական ակումբի ճարտարապետական կոմպոզիցիայի վրա և վերջինս պետք է ընտրված լինի այնպես, որ ապահովի դահլիճի տարողության հետագա ընդարձակման հնարավորությունը։

Մեր կարծիքով, գյուղական ակումբի հատկապես այդ առանձնահատկությունն էլ պետք է դրվի ակումբային շենքերի նախագծման հիմքում և բոլոր ակումբների ընդհանուր կոմպոզիցիաների մշակումը պետք է կատարվի հատկապես այս նախապայմաններից ելնելով։ Մինչդեռ ինչպես ցույց կտրվի ստորև, կոլտնտեսային ակումբների միայն եզակի օրինակներ կարելի է նշել, որտեղ հաշվի են առնված գյուղական բնակավայրերում կառուցվող ակումբների այս առանձնահատուկ կողմը։

Գյուղական ակումբների և հատկապես փոքր ծավալ ունեցող ակումբների մյուս առանձնահատկությունը կայանում է ակումբային սենյակների բազմատեսակ օգտագործման մեջ, և հատկապես նրանց մի մասը ժամանակավորապես դերասանական սենյակների վերածելու անհրաժեշտությունը, մի բան, որը նույնպես քիչ է հաշվի առնված ռեսպուբլիկայում կառուցված մի շարք ակումբներում։

Գյուղական ակումբների և առանձնապես մինչև 400 մարդ տեղավորող դահլիճներով ակումբների, շահագործման փորձը ցույց է տալիս, որ այդ տիպի կառուցվածքներում ոչ մի անհրաժեշտություն չկա անջատելու ակումբային մասը թատերական մասից և դրանք մշակելու որպես առանձին էլեմենտներ։ Այս ցույց է տալիս ֆոյեի բազմատեսակ օգտագործման պայմանները, մասնավորապես այն փաստը, որ այնտեղ շատ հաճախ կազմակերպվում են խաղեր, պարեր և այլ հավաքույթներ և ֆոյեն հանդիսանում է այն միավորող օղակը, որով դահլիճը սերտ կերպով կապվում է ակումբի մասի սենյակների հետ։

* * *

Ակումբաշինարարությունը Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղերում առավել լայն զարգացում ստացավ հետպատերազմյան տարիներին, թեև ակումբների շինարարությունը



Ակումբ Գետաշենում
Նկ. ճարտ. Գ. Գոխմանյան 1935 թ.

սկսվել էր դեռևս երեսունական թվականներին։ Ակումբաշինարարության գործի կարգավորմանը նշանակալից չափով նպաստեց 1945 թվականին Մինիստրների Սովետին կից ճարտարապետության գործերի վարչության և Կուլտ. լուս. հիմնարկների կոմիտեի կողմից

հայտարարված կոնկուրսը, որը հնարավորություն տվեց ընտրելու 100, 200 և 300 տեղ ունեցող դահլիճներով ակումբների մի շարք նախագծեր և դրանք հանձնարարելու ռեսպուբլիկայի գյուղական բնակավայրերում կառուցելու համար։ Բացի այդ նախագծերով կառուցված շենքերից, զգալի թվով ակումբներ են կառուցվել նաև անհատական նախագծերով։

Ճարտարապետական արվեստանոցներում մշակված նախագծերի հիման վրա կառուցված շենքերից բացի, կան նաև ակումբներ, որոնք կառուցվել են ժողովրդական վարպետների կողմից և իրենց ճարտարապետական ձևերով յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում։

Այդ կարգի բոլոր շենքերը իրենցից ներկայացնում են շատ պարզ կառուցվածքներ, բաղկացած հիմնականում մեկ դահլիճից և որոշ դեպքերում էլ նրան կից 1—2 ակումբային սենյակներից։ Այս տիպի շենքեր են Ժդանովո, Գյուլագարակ, Պրիվոլնի, Նորադուզ, Բատիկյան գյուղի ակումբները։ Որոշ դեպքերում դահլիճը կառուցված է երկրորդ հարկում, իսկ առաջին հարկում տեղավորված են կոլտնտեսության և գյուղսովետի գրասենյակները, կամ դպրոցը (Հացառատ)։ Սրանց արտաքին ճարտարապետական ձևավորումը շատ համեստ է և սովորաբար սահմանափակվում է մաքուր տաշված քարերից շարած դռների և լուսամուտների շրջանակներով թեև առանձին դեպքերում նկատվում է վարպետների ձգտումը՝ ստանալ ավելի արտահայտիչ լուծումներ, ինչպես, օրինակ՝ Պրիվոլնիում, որտեղ գլխավոր մուտքը ձևավորված է առանձին կամարաշարքով։

## ԱԿՈՒՄԲՆԵՐ 100 ՄԱՐԴ ՏԵՂԱՎՈՐՈՂ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՎ

Այս տիպի ակումբները գլխավորապես կառուցված են ռեսպուբլիկայի փոքր և հատկապես լեռնային գյուղերում և, պետք է ասել, հիմնականում բավարարում են տեղական պահանջներին։ Բացի դահլիճից, այստեղ կա ոչ մեծ ֆոյե և մի քանի ակումբային սենյակներ։ Նշված էլեմենտների խիստ սահմանափակությունը, և հեղինակների ձգտումը մշակել առավել պարզ կոմպոզիցիաներ. անշուշտ պետք է հանգեցներ և իրոք հանգեցրել է ճարտարապետական առավել օպտիմալ տարբերակի մշակմանը, որը և հանդիպում ենք 1945 թվականի կոնկուրսում ընտրված չորս նախագծերից երեքում։ Այսպես, օրինակ՝ ճարտ. Հ. Մարգարյանի, ճարտ.

*Ա. Սահինյանի և ճարտ. Ա. Աստրյանի նախագծերում ամբողջ կոմպոզիցիայի կենտրոնական էլեմենտը հանդիսանում է ֆոյեն, որը և համախմբում է դահլիճը և ակումբային սենյակները։ Բոլոր նախագծերում էլ (բացառությամբ Ա. Աստրյանի նախագծի) ընտրված է ակումբի մեկ հարկանի կոմպոզիցիա, որը միանգամայն տրամաբանական է այդ ոչ մեծ կառուցվածքների համար։*



*Ակումբ 100 մարդու համար*
*Հեղ. ճարտ. Ա. Սահինյան*

*Նշված ակումբներից առավել պարզ լուծում ունեն ճարտ. Ա. Սահինյանի նախագծով կառուցված ակումբները Մեղովկա (Ստեփանավանի շրջան), Գոմաձոր (Սևանի շրջան) և այլ գյուղերում։ Այստեղ ամբողջ կառուցվածքի կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսանում է ֆոյեն, դեպի ուր տանում է գլխավոր ճակատի ուղղանկյուն խորշի մեջ դասավորված մուտքը։ Ֆոյեից դեպի աջ և ձախ տեղավորված են ակումբային սենյակները, իսկ գլխավոր մուտքի դիմաց բացվում են դեպի դահլիճ տանող դռները։ Բեմը անմիջապես*

*կապ ունի աջակողմյան ակումբային սենյակներից մեկի հետ, որը ներկայացման օրերին կարող է օգտագործվել որպես դերասանական սենյակ, իսկ դահլիճի հետևի մասում դասավորված է կինո խուցն իր առանձին մուտքով։ Կառուցվածքի պարփակ հատակագիծն իր որոշակի դրսևորումն է գտել նաև նրա ընդհանուր ծավալային լուծման մեջ, որտեղ պարզ և հստակ ճարտարապետական ձևերով մշակված են ինչպես գլխավոր, այնպես էլ մյուս ճակատները։*

*Գլխավոր ճակատի հիմնական էլեմենտը հանդիսանում է մուտքի կիսաշրջանաձև վերջավորություն ունեցող խորշը, որի առանցքով բարձրացող ճակտոնը հաջող կերպով ավարտում է ճակատի ամբողջ կոմպոզիցիան։*

*Խորշի ներսում դասավորված մուտքը ներդաշնակ կերպով կապվում է ակումբային սենյակների ուղղանկյուն լուսամուտների հետ, որոնց համաչափությունները կրկնվում են նաև մյուս ճակատներում, մի բան, որը որոշակի միասնականություն է տալիս ամբողջ կառուցվածքին։*

*Անհրաժեշտ է նշել, նաև կողքի ճակատների ճակտոնների առկայությունը, որոնք ևս արտահայտիչ են դարձնում շենքը և անջատում նրան գյուղական բնակավայրի համեմատաբար ոչ բարձր բնակելի շենքերից։ Դժբախտաբար այս տիպի շենքերից նույնիսկ առավել լավ կառուցված Մեղովկայի ակումբում նշանակալից են խախտումները (կենտրոնական խորշի կիսաշրջանաձև վերջավորությունը փոխարինված է ուղղանկյունով, չեն արված սանդրիկները և այլն). էլ չենք ասում Գոմաձորի ակումբի մասին, որտեղ նախագծից փաստորեն պահպանվել է միայն... հատակագիծը և բանը հասել է նրան, որ չի արվել նույնիսկ գլխավոր մուտքի կենտրոնական խորշը։ Այս բոլորից հետո հասկանալի է, որ ակումբային շենքը այստեղ մեծապես կորցրել է իր արտահայտչականությունը և դժվարությամբ է տարբերվում շրջապատի բնակելի տներից։*

*Հարյուր մարդ տեղավորող դահլիճներով ակումբների թվին է պատկանում նաև ճարտ. Հ. Մարգարյանի նախագծով Թալինի շրջանի Վերին Սասունաշեն և ռեսպուբլիկայի բազմաթիվ այլ գյուղերում կառուցված շենքերը։ Ըստ հատակագծային կոմպոզիցիայի այստեղ ևս դահլիճը գտնվում է շենքի հետևի մասում և դասավորված է կառուցվածքի գլխավոր ճակատին զուգահեռ։*

*Ֆոյեն, որը գրավում է դահլիճի ամբողջ երկարությունը, հանդիսանում է կառուցվածքի կոմպոզիցիոն կենտրոնը և ի մի է համախմբում թե դահլիճը և թե ակումբային սենյակները։ Հատկա-*

նշական է, որ ֆոյեի կողային մասերը հեշտությամբ կարող են վեր ածվել ակումբային սենյակների, իսկ նրանցից աջակողմյանը, որն անմիջական կապ ունի բեմի հետ, թատերական ներկայացումների օրերին կարող է օգտագործվել որպես դերասանական սենյակ. բուն ակումբային սենյակները դասավորված են փոքրիկ վեստիբյուլի երկու կողմերում և անհրաժեշտության դեպքում հեշտությամբ կարող են առանձնացվել թատերական մասից։




Ակումբ Վերին Սասունաշենում.
Հատակագիծ
հեղ. ճարտ. Հ. Մարգարյան

Գլխավոր մուտքը բացվում է լայն ու ընդարձակ կամարակապ սյունասրահի մեջ, որն իր ճարտարապետական կոմպոզիցիայով հանդիսանում է ակումբի առավել արտահայտչական մասը, և իր մոնումենտալ կոմպոզիցիայով շեշտում ամբողջ կառուցվածքի հասարակական բնույթը։ Շքամուտքի ուժեղ կամարները, հենված կենտրոնական սյուների վրա, կարծես թե լայնորեն բացում են ակումբի դռները հանդիսատեսի առջև և ներս հրավիրում նրան։ Շենքի ընդհանուր կոմպոզիցիան, նրա կոմպակտ, համախմբված ծավալները որոշակի կերպով շեշտում են նրա ներքին կառուցվածքը։ Այդ տեսակետից միանգամայն տրամաբանական է դահլիճի ծավալի անջատումը ֆոյեի և ակումբային սենյակների ընդհանուր ծավալից և դահլիճի կողային ճակատների մշակումը ճարտարապետական ուժեղ էլեմենտներով, որոնք որոշակի կապ են ստեղծում կողային ճակատների և գլխավոր ճակատը ձևավորող շքամուտքի կամարների միջև։

Հարյուր մարդ տեղավորվող դահլիճներով ակումբների հաջորդ տիպը — դա Ս. Սաֆարյանի նախագծով ռեսպուբլիկայի մի շարք գյուղերում կառուցված շենքերն են (Ագարակ, Ողջաբերդ, Կողես)։ Չնայած նրան, որ այստեղ ևս պահպանված է հատակագծային համարյա նույն սկզբունքը, ինչ որ վերը նշած նախագծերում, սակայն շնորհիվ այն որոշակի տարբերությանը, որը կա մի կողմից

ակումբային սենյակների և ֆոյեի, իսկ մյուս կողմից դահլիճի բարձրությունների միջև, արտաքին ծավալային կոմպոզիցիան այս տիպի շենքերում ստացվել է միանգամայն տարբեր։



Ակումբ Ագարակում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Ա. Ասատրյան

Այստեղ ևս ֆոյեն հանդիսանում է այն ընդհանուր օղակը, որը միավորում է դահլիճը ակումբային սենյակների հետ. որոնք դասավորված ֆոյեի երկու կողմերում, որոշ չափով առաջ են գալիս վերջինիս նկատմամբ և ստեղծում նրա առջև մի ոչ մեծ, բաց հարթակ։ Դահլիճի ձախակողմյան մասում դասավորված է գրադարան-ընթերցարանը, իսկ նրա վերևում, ևս մի ակումբային լրացուցիչ սենյակ։

Թեև ամբողջ կառուցվածքը հատակագծում ստացվել է համախմբված և կոմպակտ, սակայն արտաքին ծավալների զգալի կտրտվածությունը որոշ չափով մասնատում են նրան և թուլացնում նրա ընդհանուր արտահայտչականությունը։

Մինչև այժմ նշված բոլոր կառուցվածքներից իր հատակագծային կոմպոզիցիայով տարբերվում է ճարտ Գ. Ճգնավորյանի նախագծով Ապարանի շրջանի Բլխեր գյուղում կառուցված ակումբը, որտեղ դահլիճի ընդերկայնական առանցքը դասավորված է գլխավոր ճակատին ուղղահայաց, ֆոյեն կազմում է նրա նեղ կողմի անմիջական շարունակությունը, իսկ ակումբային սենյակները դասավորված են ֆոյեի երկու կողմերում։

Պետք է նշել, որ այստեղ ֆոյեի և ակումբային սենյակների կապը համեմատաբար ավելի հաջող է, բայց բեմական մասը զուրկ է օժանդակ սենյակներից, իսկ ակումբային սենյակների հեռու լինելը զրկում է նրանց ներկայացման օրերին որպես դերասանական սենյակներ օգտագործելու հնարավորությունից։

Մյուս կողմից բնավ չի արդարացված ֆոյեի բարձրությունը դահլիճի բարձրությանը հասցնելը՝ քանի որ այդ ոչ մի անհրաժեշտություն չի ներկայացնում այս կարգի փոքր շենքերում։

Չի կարելի հաջողված համարել նաև արտաքին ճակատների մշակումը։ Այդ հատկապես զգացվում է գլխավոր ճակատում, որ-

տեղ զգալի տարածություն գրավող խուլ պատերը, և ծանր համաչափություններ ունեցող ճակատները բացասական ազդեցությունն են ունենում կառուցվածքի ընդհանուր ճարտարապետական կերպարի վրա։




Ակումբ Բլխեր գյուղում.
Հատակագիծ
Հեղ. ճարտ. Գ. Ծգնավորյան



Ակումբ 121 մարդու համար.
Հատակագիծ
Հեղ. ճարտ. Գ. Ջաքիև

Այնուամենայնիվ օգտագործված հատակագծային այն ձևը, երբ ֆոյեն կազմում է դահլիճի անմիջական շարունակությունը, կարող է հիմք ծառայել այս տիպի ակումբների ռացիոնալ կոմպոզիցիաներ մշակելու համար, կապված գյուղական բնակավայրերում դահլիճի տարողության նշանակալից ավելացման հնարավորության հետ, որը, անշուշտ, պետք է հանդիսանա կոլտնտեսային ակումբների առավել յուրահատուկ կողմերից մեկը։ Ահա այս տեսակետից էլ ճարտ. Գ. Ծգնավորյանի նախագիծն ունի էական առավելություններ և մեր կարծիքով հետագայում վերամշակման ենթարկելուց հետո կարող է դառնալ այս կարգի ակումբների մեջ ամենահետաքրքիր օրինակներից մեկը։

Ակումբների այս խմբի մեջ է մտնում նաև ճարտ. Գ. Ջաքիևի 121 մարդ տեղավորող դահլիճով երկհարկ ակումբի նախագիծը, որը իր կոմպոզիցիոն լուծումով արմատապես տարբերվում է վերը նշված բոլոր ակումբային շենքերից։

Այստեղ առաջին հարկում տեղավորված է կառուցվածքի կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսացող ֆոյեն, որի ձախ կողմում դասավորված են ակումբային սենյակները, իսկ աջ կողմում՝ դեպի դահլիճ տանող հիմնական աստիճանավանդակը և գրադարան-ընթերցարանը։

Ինչպես գլխավոր ճակատի վրա, այնպես էլ բակի կողմում արված են հարթակներ, որոնք ամռան ամիսներին կարող են օգտագործվել որպես ամառային ֆոյեներ և որտեղ կարելի է կազմակերպել ակումբային շատ միջոցառումներ։ Կառուցվածքի երկրորդ հարկը համարյա ամբողջությամբ բռնում են դահլիճը և բեմը։

Թեև իր ընդհանուր ծավալային լուծումով և հատկապես իր երկհարկանի կոմպոզիցիայի շնորհիվ այս կառուցվածքը կարող է դառնալ գյուղական բնակավայրի հասարակական կենտրոնի դոմինանտ և չնայած տնտեսական որոշ առավելությունների (այստեղ որոշ չափով կրճատվում են շինարարական մի շարք աշխատանքներ), բայց և այնպես այն նշանակալից դժվարությունները, որոնք կապված են գյուղական բնակավայրերում միջհարկային ծածկը երկաթ-բետոնից պատրաստելու անհրաժեշտության հետ, մինչև վերջին ժամանակներս բարդություններ էր ստեղծում, այս տիպի կառուցվածքների շինարարության համար։

Իրենց բնույթով կոլտնտեսային ակումբներին մոտենում են բանվորական ավաններում կառուցված ակումբները, որտեղ մշակված մի շարք հետաքրքիր և ռացիոնալ լուծումները կարող են օգտագործվել նաև գյուղական բնակավայրերի ակումբներում։ Այս կապակցությամբ նշենք Արզնիգէսի բանվորական ավանում ճարտ. Տ. Մարությանի նախագծով կառուցված 150 մարդ տեղավորող դահլիճով ակումբը, որտեղ դարձյալ ընդունված է հատակագծային նույն այն կոմպոզիցիան ինչպիսին ընդունված էր վերը նշված 100 մարդ տեղավորող դահլիճներով ակումբներում։ Այստեղ ևս ակումբի կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսանում է ֆոյեն, որի շուրջը համախմբված են դահլիճը և ակումբային սենյակները։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ակումբի հետևի ճակատում արված ամառային էստրադան, որը անմիջապես կապ ունի դերասանական սենյակի հետ, լայն հնարավորություններ է տալիս ամռան ամիսներին բաց օդում ներկայացումներ կազմակերպելու համար։ Միշտ չէ, որ ակումբային շենքերը հնարավոր է լինում կառուցելու հանգիստ ռելյեֆի պայմաններում, ուստի տեղանքի օգտագործման հարցը կարևոր նշանակություն է ստանում

հատկապես լեռնային շրջաններում։ Եվ այն հանգամանքը, որ կրկնակի օգտագործման համար մշակված բոլոր նախագծերն էլ հաշված են միայն հարթ տեղերում կառուցելու համար, և մինչև այժմ մենք չունենք տարբեր ռելյեֆային պայմանների համար մշակված գյուղական ակումբների տիպային նախագծեր, առանձին դեպքերում հասցնում է այնպիսի միանգամայն աննպաստ հետևանքների, ինչպիսիք են դահլիճների տակ ստացվող մեծ նկուղները, որոնք սովորաբար օգտագործվում են որպես կոլտնտեսության պահեստներ (օրինակ՝ Շամշադինի շրջանի Պառավաքար գյուղում)։ Այս կապակցությամբ որպես հաջող օրինակ անհրաժեշտ է նշել ճարտ. Ս. Պետրոսյանի նախագծով Թումանյանի բանվորական ավանում 150 մարդ տեղավորող դահլիճով կառուցված ակումբը, որը դասավորված է ավանի կենտրոնական հրապարակի գլխավոր առանցքի վրա և հանդիսանում է վերջինիս ճարտարապետական դոմինանտը։ Այստեղ առավել հետաքրքիրն այն է, որ հեղինակը կարողացել է օգտագործել տեղանքի խիստ թեքությունը և ակումբային սենյակների ու ֆոյեի երկհարկ կոմպոզիցիայի պայմաններում ստանալ ոչ շատ բարձր դահլիճ, տեղավորված շենքի հետևի մասում։ Դասավորված հրապարակի արևելյան կողմը սահմանափակող և բազալտի բարձր հենապատով ձևավորված հարթակի վրա, կառուցվածքը, չնայած իր բացարձակ ոչ մեծ չափերին հաջող կերպով ավարտում է ավանի հրապարակի ամբողջ ճարտարապետական անսամբլը, և պատկանում է այս կարգի ակումբների հետաքրքիր օրինակների թվին։

## ԱԿՈՒՄԲՆԵՐ 200 ՄԱՐԴ ՏԵՂԱՎՈՐՈՂ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՎ

Համեմատաբար ավելի մեծ գյուղերում (օր. Ապարանի շրջանի Քուչակ գյուղում) կառուցվում են ակումբներ 200 մարդ տեղավորող դահլիճներով, որոնցից առավել լայն տարածված են ճարտարապետներ Ռ. Ալավերդյանի և Կ. Օհանջանյանի նախագծերով կառուցված շենքերը։

Այս տիպի կառուցվածքներում դահլիճը դասավորված է շենքի գլխավոր ճակատին ուղղահայաց և ֆոյեն կազմում է դահլիճի կարճ կողմի ուղղակի շարունակությունը։ Վեստիբյուլից աջ դասավորված են ակումբային երեք սենյակները, իսկ դեպի ձախ՝ գրադարան-ընթերցարանը և ակումբային մեկ սենյակ։ Բեմի երկու կողմում դասավորված են դերասանական սենյակները, իսկ դահլիճի

երկարությամբ գտնվում են բաց սյունասրահները, որոնք ամռան ամիսներին կարող են ծառայել որպես ամառային ֆոյեներ։

Այն հանգամանքը, որ ամբողջ կառուցվածքը լուծված է մեկհարկանի, արդեն ինքնին նշանակալից առավելություն է ներկայացնում գյուղական բնակավայրում կատարվող շինարարության համար։ Ըստ հատակագծային կոմպոզիցիայի՝ վեստիբյուլն է, որ միավորիչ կենտրոն է հանդիսանում ակումբի երկու հիմնական բաղկացուցիչ մասերի՝ թատերական և ակումբային մասերի համար, և նրա շուրջն են համախմբված ակումբային սենյակները և ֆոյեն։



Ակումբ Քուչակ գյուղում. հատակագիծ
Հեղինակներ՝ ճարտարապետներ Ռ. Ալավերդյան և Կ. Օհանջանյան

Այստեղ ակումբային բոլոր սենյակները դասավորված են կառուցվածքի գլխավոր ճակատի վրա և տեղավորված են վեստիբյուլի երկու կողմերում։ Վեստիբյուլը անջատված է ֆոյեից և միայն մեկ դուռ է բացվում դեպի ֆոյեն, մի բան, որը հնարավորություն է տալիս լրիվին առանձնացնել ակումբային մասը ցուցադրական մասից։ Ցուցադրական մասն իր հերթին կազմում է մի կոմպոզիցիոն ամբողջություն և բաղկացած է ֆոյեից. դահլիճից, բեմից և նրա երկու կողմերում դասավորված սենյակներից։ Ակումբի այսպիսի կոմպոզիցիան, երբ հենց սկզբից ենթադրվում է երկու հիմնական բաղկացուցիչ մասերի անջատ օգտագործումը, լրիվին տրամաբանական է ավելի մեծ կառուցվածքների համար (400 և ավելի տեղ ունեցող դահլիճներով ակումբներում), երբ ենթադրվում է ակումբային շատ ավելի զարգացած մասի առկայությունը։ Մինչդեռ, այս համեմատաբար փոքր կառուցվածքներում, որտեղ կան ընդամենը մի քանի ակումբային սենյակներ, անջատել նրանց ֆոյեից, իսկ վերջինս իր հերթին վեստիբյուլից և մշակել նրանց որպես առանձին փոքր էլեմենտներ, իհարկե չի կարելի հաջողված համարել։ Մյուս կողմից անհրաժեշտ է

նշել, որ այսպիսի լուծումը բերում է և ֆոյեի, և վեստիբյուլի մակերեսների չարդարացված մեծացմանը։

Գյուղական համեմատաբար փոքր ակումբների առանձնահատկություններից մեկն այն է, որ ակումբային սենյակները, համախմբված ֆոյեի շուրջը, կազմում են մեկ օրգանական ամբողջություն և այդտեղ է, որ կատարվում է ամբողջ կուլտուր-մասսայական աշխատանքները այն օրերին, երբ չկա որևէ ներկայացում կամ կինոնկարի ցուցադրում։

Անշուշտ, պետք է հաջողված համարել նշված կառուցվածքի ծավալային կոմպոզիցիան։ Գլխավոր ճակատի կենտրոնական մասը, որը նշանակալից չափով բարձր է կողային, ակումբային սենյակներին համապատասխանող մասերից, ձևավորված է բարձր կամարաշարքով, որոնց զույգ որմնասյուները և նրանց մեջ դասավորված գլխավոր մուտքը որոշակի կերպով շեշտում են շենքի հասարակական բնույթը և հանդիսավոր տեսք տալիս նրան։



Ակումբ՝ Ջանֆիդա գյուղում. հատակագիծ
Հեղինակներ՝ ճարտարապետներ Ռ. Ալավերդյան և Կ. Օհանջանյան

Գլխավոր ճակատի որմնակամարի և ակումբային սենյակների կամարակապ լուսամուտների համաչափությունները ներդաշնակ կերպով կրկնվում են կողային ճակատներում և դրսևորվում նրանց հիմնական էլեմենտը հանդիսացող բաց սյունասրահների կամարաշարքերում։ Նշված ճարտարապետական կոմպոզիցիան հիմք է հանդիսացել նույն հեղինակների, կոլտնտեսային ակումբի մի այլ նախագծի մշակման համար, որը իրագործվել է էջմիածնի շրջանի Ջանֆիդա գյուղում և, որոշ փոփոխություններով՝ Իջևանում։

Այստեղ արդեն հեղինակներին հաջողվել է վերացնել այն կոմպոզիցիոն թերությունները, որոնք կային նախորդ նախագծում և հասնել շենքի ճարտարապետական ավելի մեծ միասնականության, որն իր որոշակի դրսևորումն է գտել ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալային լուծման մեջ։ Հատակագծում այն

Ճակատի ամբողջ հարթությունը մշակված է հանգիստ ճարտարապետական էլեմենտներով, և միայն երկու թևերի խուլ հարթությունների վրա արված ուղղաձիգ խորշերը և նրանց մեջ արված վարդյակները որոշ չափով դուրս են ընկնում կառուցվածքի ընդհանուր մասշտաբից։

Երկու հարյուր մարդ տեղավորող դահլիճներով ակումբների մի այլ խումբ են կազմում այն կառուցվածքները, որտեղ դահլիճը դասավորված է ակումբի գլխավոր ճակատին զուգահեռ։ Այսպես են մշակված ճարտարապետներ Լ. Մելիք-Բաբախանյանի, Ս. Ասլամազյանի, Ն. Բաժբեուկի, Վ. Արևշատյանի և Գ. Թամանյանի նախագծերը, որոնցից վերջին երկուսը նախագծված են արդեն անհատական կարգով, մինչդեռ առաջին երեքը մտնում են 1945 թվականի կոնկուրսում ընտրված նախագծերի շարքի մեջ։

Եվ ճարտ. Լ. Մելիք-Բաբախանյանի և ճարտ Ս. Ասլամազյանի նախագծերը հիմնականում կազմված են նույն այն հայտնի կոմպոզիցիայի հիման վրա, որը մենք արդեն տեսանք հարյուր մարդ տեղավորող դահլիճներ ունեցող ակումբներում։ Ճարտ. Լ. Մելիք-Բաբախանյանի նախագծում (որով կառուցվում է Ազիզբեկովի շրջանի Խաչիկ գյուղի ակումբը) մշակված է մեկ հարկի սահմաններում և այդ տեսակետից արդեն որոշ առավելություններ ունի երկհարկ ակումբների նկատմամբ։ Ամբողջ կառուցվածքի կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսանում է ֆոյեն, որն ի մի է համախմբում և նրա երկու կողմերում դասավորված ակումբային սենյակները և դահլիճը։ Անշուշտ հաջող է մշակված դերասանական սենյակների անմիջական կապը ֆոյեի հետ, որը հնարավորություն է ստեղծում նրանց նաև այլ նպատակներով օգտագործելու համար։ Ճարտ. Ս. Ասլամազյանի նախագծում ակումբային մասը լուծված է երկհարկ։ Ուղղանկյուն ֆոյեն, որը դասավորված է կառուցվածքի կենտրոնում, հան-




Ակումբ Խաչիկ գյուղում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Լ. Մելիք-Բաբախանյան

դիսանում է նրա բոլոր հիմնական էլեմենտները միավորող կոմպոզիցիոն հանգույցը և երկրորդ հարկի բարձրության վրա ունի անտրեսոլային պատշգամբ, որը միմյանց հետ է կապում այնտեղ դասավորված ակումբային սենյակները։ Ընտրված կոմպոզիցիան ունի այն առավելությունը, որ ստեղծում է ներքին հետաքրքիր ծավալներ, և հատկապես ֆոյեի և նրա շուրջը դասավորված պատշգամբի ու ակումբային սենյակների որոշակի միասնականություն։ Սակայն, այս համեմատաբար փոքր կառուցվածքում անհրաժեշտություն չէր ներկայացնում այսպիսի նշանակալից ծավալ ունեցող ֆոյեի առկայությունը, որը զգալիորեն ավելացնում է շենքի ընդհանուր ծավալը և որոշ հակադրության մեջ է գտնվում դահլիճի ոչ մեծ ծավալի հետ։



Ակումբ Զարրախում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Ս. Ասլամազյան

Երկու հարյուր տեղ ունեն նաև Բջնիի և համանման կոմպոզիցիա ունեցող Ցանտանի (Ախտայի շրջան) ակումբները, կառուցված ճարտ. Ն. Բաժբեուկի նախագծով։ Այստեղ ևս դահլիճը դասավորված է կառուցվածքի գլխավոր ճակատին զուգահեռ, իսկ երկհարկ կոմպոզիցիա ունեցող ակումբային մասը բռնում է շենքի գլխավոր ճակատի ամբողջ երկարությունը։ Թեև հեղինակին հաջողվել է հասնել ամբողջ կառուցվածքի ծավալային որոշակի միասնականության, սակայն աչքի ընկնող թերություններ կան ակումբի հատկապես հատակագծային լուծման մեջ, որոնցից անհրաժեշտ է նշել ինչպես ամբողջ դահլիճի երկարությամբ ձգվող վեստիբյուլը, ֆոյեի մուտքի և հատկապես երկրորդ հարկում տեղավորված

ակումբային սենյակների անհաջող դասավորությունները։ Դրան պետք է ավելացնել նաև շենքի կառուցման չափազանց ցածր որակը։ Դժբախտաբար եզակի երևույթ չէ, երբ գյուղական բնակավայրերում կատարվող շինարարության մեջ ցածր է կառուցվածքի շինարարական որակը (ինչպես, օրինակ՝ Քաղսիում—Ախտայի շրջան, Կողեսում՝ Ստեփանավանի շրջան և այլն)։ Հաճախ տեղերում ինքնակամ կերպով փոփոխության են ենթարկվում կառուցվածքի տարբեր ճարտարապետական էլեմենտները։ Օրինակ՝ Զորագյուղում



Զարբախի ակումբի ընդհանուր տեսքը

(Մարտունու շրջան) ճարտ. Ռ. Իսրաելյանի նախագծով կառուցված ակումբի արտաքին որմնասյուների խոյակների վրա ինքնակամ կերպով քանդակված կենդանիների նույնիսկ ինչ լինելը դժվար է որոշել. Նույն Մարտունու շրջանի Մադինա գյուղում ճարտ. Հ. Մարգարյանի նախագծով կառուցած ակումբում «տնտեսել» են գլխավոր ճակատի քիվը, և այս դրությամբ ավարտել շենքը։ Այս ամենը դարձյալ վկայում է գյուղական բնակավայրերում կատարվող շինարարության նկատմամբ եղած ճարտարապետական վերահսկողության խիստ թուլության մասին, երբ տեղերում չեն բացառված այնպիսի միանգամայն անթույլատրելի և կամայական փոփոխություններ, որոնք անճանաչելի կարող են դարձնել նույնիսկ ամենալավ նախագիծը։

Գյուղական բնակավայրերում կառուցված այս ակումբներից բացի, որոնց նախագծերը ընտրվել էին 1945 թվականի կոնկուրսի ժամանակ, որոշ թվով ակումբներ կառուցվել են անհատական նախագծերով։ Նշենք դրանցից մի քանիսը։

Մինչև 200 տեղ ունեցող դահլիճով ակումբների շարքում իր ընդհանուր կոմպոզիցիայով և բաղկացուցիչ էլեմենտների կապմով յուրահատուկ տեղ է գրավում Մեծ Մազրայում (Բասարգեչարի շրջան) կառուցված ակումբը (ճարտ. Ջ. Բախշինյան)։



Ակումբ Մեծ Մազրայում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Ջ. Բախշինյան

Ըստ իր ընդհանուր կոմպոզիցիայի այն մի երկհարկանի շենք է, որտեղ առաջին հարկում տեղավորված են հյուրանոցը, ակումբային սենյակները և գյուղի հասարակական մյուս կազմակերպությունները։ Երկրորդ հարկում դասավորված են դահլիճը, գյուղսովետի և կոլվարչության դրասենյակները։ Ճիշտ է, այսպիսի կոմպոզիցիան հնարավորություն է տվել ստանալ մի շենք, որն ունի նշանակալից ծավալ, և որը պարզ կերպով դիտվում է գյուղի բոլոր մասերից, սակայն այդպիսի կենտրոնացումը բոլորովին չի նպաստում գյուղի հասարակական կենտրոնի կազմավորմանը։ Բացի այդ, այնքան զգալի է նրա ծավալային կոնտրաստը շրջապատի բնակարանային սակավահարկ կառուցապատման նկատմամբ, որ դժվար է խոսել որևէ անսամբլային ներդաշնակության մասին։

Միաժամանակ պետք է նշել, որ ճարտարապետին հաջողվել է մի միասնական ծավալի մեջ համախմբել առաջադրանքով պահանջվող այդ ամենատարբեր և միմյանց հետ օրգանական կապ չունեցող էլեմենտները և ստանալ ինչպես հատակագծում, այնպես էլ արտաքին ծավալներում մի ամբողջական լուծում։

Ակումբի և կոլվարչության ու գյուղսովետի գրասենյակների զուգակցման մի այլ տարբերակն է հանդիսանում ճարտ. Տ. Մարությանի նախագծով Արտաշատի շրջանի Դվին գյուղում կառուցված ակումբը, որի առաջին հարկը ավարտվել է դեռևս երեսունական թվականներին։ Ըստ հատակագծային կոմպոզիցիայի՝ գլխավոր ճակատին զուգահեռ դասավորված են վեստիբյուլը, ֆոյեն և դահլիճը, որի ձախ կողմում տեղավորված են ակումբային, իսկ աջ կողմում դերասանական սենյակները։ Վերակառուցումից հետո ֆոյեի վրա ավելացվել են երկրորդ հարկը և դեպի այն տանող աստիճանները։ Երկրորդ հարկի ավելացման հետևանքով ամբողջ կառուցվածքը ստացել է ծավալային միասնականություն և այժմ այն հաջող կերպով ավարտում է գյուղի գլխավոր փողոցի ամբողջ հեռանկարը։

Երկու հարյուր տեղ ունեցող դահլիճներով ակումբների թվին է պատկանում նաև Կապուտանում (Կոտայքի շրջան) ճարտ. Գ. Թամանյանի նախագծով կառուցված ակումբը, որը իր թե՛ հատակագծային և թե՛ ծավալային կոմպոզիցիայով, անշուշտ, պատկանում է այս կարգի կառուցվածքների հաջողված օրինակների թվին։ Ամբողջ կառուցվածքը հիմնականում վերցված է մի պարզ ուղղանկյան մեջ, որտեղ գլխավոր ճակատի երկհարկ մասում տեղավորված են վեստիբյուլը, ֆոյեն և ակումբային սենյակները։ Դահլիճի մեջ պատշգամբի առկայությունը հնարավորություն է տվել նշանակալից չափով ավելացնել տեղերի քանակը, թեև գյուղական պայմաններում նրա կառուցումը կապված է որոշ դժվարությունների հետ։ Գլխավոր ճակատի կենտրոնական մասում արված հարուստ կամարակապ խորշը ուժեղ կոնտրաստ է ստեղծում կողային մասերի հարթ պատերի հետ և որոշակի կերպով շեշտում թե՛ ամբողջ կառուցվածքի հասարակական բնույթը և թե՛ նրա գլխավոր մուտքը։ Հաջող է ընտրված ակումբի տեղը։ Դասավորված գյուղի առավել բարձրադիր մասում, նա իրոք որ հանդիսանում է ամբողջ բնակավայրի դոմինանտը, իսկ նրա ճարտարապետական արտահայտչականությունը էլ ավելի է ուժեղանում Կապուտանի բաց երկնագույն քարից կառուցված լինելու հետևանքով։



Ակումբ Դվինում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Տ. Մարության

## ԱԿՈՒՄԲՆԵՐ 300—400 ՄԱՐԴ ՏԵՂԱՎՈՐՈՂ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՎ

*Ռեսպուբլիկայի համեմատաբար մեծ գյուղերում կառուցված են արդեն 300—400 տեղ ունեցող դահլիճներով ակումբներ, որոնք սովորաբար ունեն նշանակալից չափեր և դիտվում են բնակավայրերի համարյա թե բոլոր մասերից։*

*Անհրաժեշտ է նշել, որ եթե 100—200 մարդ տեղավորող դահլիճներով ակումբների գերակշռող մեծամասնությունը կառուցվել են ըստ 1945 թվականի կոնկուրսում ընտրված նախագծերի, ապա այս կարգի կառուցվածքներում արդեն գերակշռում են անհատական նախագծերով կառուցված շենքերը։ Երեք հարյուր և ավելի մարդ տեղավորող դահլիճներով ակումբները, որպես կանոն, բոլորն էլ ունեն ակումբային սենյակների երկհարկ դասավորություն, որը միանգամայն տրամաբանական է այս տիպի կառուցվածքների նշանակալից տարածություն գրավող ակումբային մասի առկայության պայմաններում։*

*Ըստ իրենց հատակագծային կոմպոզիցիաների՝ այս կառուցվածքները ևս կարելի է բաժանել երկու հիմնական խմբի։*

**Առաջին խումբը** *կազմում են այն կառուցվածքները, որտեղ դահլիճի ընդերկայնական առանցքը դասավորված է գլխավոր ճակատին զուգահեռ և երեք կողմից շրջապատված է ակումբային սենյակներով։*

**Երկրորդ խումբը** *կազմում են այն շենքերը, որտեղ դահլիճի առանցքը դասավորված է գլխավոր ճակատին ուղղահայաց, իսկ ֆոյեն և ակումբային սենյակները խմբավորված են գլխավոր ճակատի երկայնքով։ Բացի նշված հիմնական կոմպոզիցիոն սխեմաներից հանդիպում են նաև կորագիծ դահլիճներով և կամ թե չէ խիստ անսիմետրիկ հատակագիծ ունեցող ակումբային շենքեր, որոնք. սակայն, եզակի երևույթ են հանդիսանում։*

*Ինչպես ցույց է տալիս կառուցված շենքերի ուսումնասիրությունը, 300—400 տեղ ունեցող դահլիճներով ակումբների գերակշռող մեծամասնությունը, ըստ իր հատակագծային կոմպոզիցիոն սխեմայի, պատկանում է առաջին խմբին։ Այս բանը, իհարկե, պատահական չէ, որովհետև այս սխեման լայն հնարավորություններ է ստեղծում նշված տիպի շենքերի առավել ռացիոնալ կոմպոզիցիաների մշակման համար։*

*Առաջին խմբին պատկանող ակումբներից իր պարզ հատակագծով աչքի է ընկնում Աթարբեկյանում (Ախտայի շրջան) կառուցված ակումբը (ճարտ. Գ. Մուշեղյան), որտեղ ամբողջ կառուցված-*



*Ակումբ Աթարբեկյանում. հատակագիծ*

*Հեղ. ճարտ. Գ. Մուշեղյան*

քը լուծված է հիմնականում մեկ հարկի սահմաններում, և միայն գրադարան-ընթերցարանն է, որ տեղավորված է երկրորդ հարկում։

Ամբողջ կառուցվածքի կենտրոնը հանդիսանում է դահլիճը, որի շուրջը և համախմբված են ակումբային բոլոր սենյակները։

Հեղինակը, հրաժարվելով առանձին վեստիբյուլից և նրա հաշվին մեծացնելով ֆոյեն, կարողացել է ստանալ վերջինիս ընդարձակ, միասնական և հաճելի համաչափություններ ունեցող ինտերյերը, դեպի ուր տանում են գլխավոր ճակատի վրա դասավորված երեք լայն, ուժեղ բացվածքները։



Աթարբեկյանի ակումբի ընդհանուր տեսքը

Սակայն, պետք է նշել, որ ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալային, հաջողված լուծման հետ միասին, գլխավոր ճակատի մշակումը երեք ծանր կամարակապ մուտքերով և նրանց միջև գասավորված նեղ և ճնշված դեկորատիվ խորշերով, ճակատի ամբողջ երկարությամբ ձգվող և նշանակալից բարձրության վրա գտնվող դահլիճի շրջանաձև լուսամուտների շարքերով (որոնք օրգանապես չեն կապվում կառուցվածքի ընդհանուր կոմպոզիցիայի հետ), որոշ չափով հեռացրել է շենքը ակումբի կերպարից։

Գլխավոր ճակատից ստացվող այս տպավորությունը մասամբ բացատրվում է նաև այն խախտումներով, որոնք տեղ են գտել նախագծի իրականացման ժամանակ, երբ զգալիորեն փոփոխվել են

գլխավոր ճակատի կամարակապ բացվածքների և նրանց միջև դասավորված խորշերի համաչափությունները (վերջիններս փոքրացվել են, իսկ կամարակապ մուտքերը խիստ ծանրացվել)։

Այս կարգի ակումբների մեջ իրենց նշանակալից տեղը ունեն ճարտ. Գ. Թամանյանի նախագծով կառուցված շենքերը, որոնք իրականացվել են հիմնականում Արարատյան դաշտավայրի մի շարք գյուղերում (Բամբակաշատ, Ոսկեվազ, Օշական, Վերին Արտաշատ և այլն)։ Կառուցվածքների այս խմբի յուրահատուկ կողմը կայանում է նրանում, որ չնայած հատակագծային և ծավալային կոմպոզիցիաների որոշակի ընդհանրություններին, հեղինակը կարողացել է ստեղծել մի շարք հետաքրքիր տարբերակներ և որոշ դեպքերում հասնել նշանակալից հաջողության, թեև առանձին կառուցվածքներում հեղինակի ստեղծագործական ունակությունները չեն գտել իրենց լիարժեք դրսևորումը։

Նշենք Արագյուղի (Աշտարակի շրջան) 300 տեղ ունեցող դահլիճով ակումբը։ Այստեղ, ինչպես նաև հեղինակի նախագծով կառուցված մյուս ակումբներում (Ոսկեվազ, Բամբակաշատ) դահլիճը դասավորված է ոչ թե կառուցվածքի գլխավոր առանցքի վրա, այլ որոշ չափով շարժված է դեպի աջ այնպես, որ պահպանելով կառուցվածքի ընդհանուր ուղղանկյուն կոնֆիգուրացիան, բեմին հանդիպված պատի երկայնքով հնարավոր է եղել ստանալ ֆոյեի և մի քանի ակումբային սենյակների համար անհրաժեշտ տարածություն։

Դահլիճի այս անսիմետրիկ դասավորությունը բնավ չի խանգարել ակումբի գլխավոր ճակատը սիմետրիկ մշակելուն, որտեղ առավել արտահայտիչ էլեմենտը հանդիսանում է շենքի ընդհանուր ծավալից նշանակալից չափով դուրս եկող վեստիբյուլը և հատկապես նրա նախամուտքը, ձևավորված երեք ծանր համաչափություններ ունեցող կամարներով։

Անցնելով վեստիբյուլից, հանդիսատեսը մտնում է ֆոյեն, որը ոչ միայն ձգվում է դահլիճի ընդերկայնական ուղղությամբ, այլև շրջանցելով այն, ընդգրկում նրա նեղ ճակատային պատի ամբողջ երկարությունը։

Հատակագծային այս սկզբունքը, որը նախատեսնում է ֆոյեի անկյունային դասավորությունը, իրեն կարող է արդարացնել միայն ավելի մեծ կառուցվածքներում, այսինքն այնտեղ, որտեղ ֆոյեն ունի նշանակալից լայնություն և բացառված է այն միջանցքի վերածվելու վտանգը, մի բան, որը հենց տեսնում ենք Արագյուղի

ակումբում. ունենալով մեծ ձգվածություն և շատ սահմանափակ լայնություն, ֆոյեն այստեղ իրականում թողնում է մի լայն միջանցքի տպավորություն։

Չի կարելի լիովին հաջողված համարել նաև կառուցվածքի արտաքին ծավալային կոմպոզիցիան, որտեղ վեստիբյուլի ցածր և խիստ առաջ եկող ծավալը օրգանապես չի կապվում դահլիճի և ակումբային սենյակների կոմպակտ ծավալի հետ։ Նախագծի հիմքում դրված հատակագծային սկզբունքները, որոնք ինչպես նշվեց արդեն, ռացիոնալ կարող էին լինել միայն ավելի մեծ ակումբային շենքերում, իրենց լիարժեք դրսևորումն են ստացել արդեն 400 մարդ տեղավորող դահլիճներով ակումբներում, որտեղ հեղինակը հաղթահարելով մի շարք անհարթություններ, ի վերջո կարողացել է ստեղծել գյուղական ակումբի հաջողված կոմպոզիցիա։ Այսպես, Ոսկեվազի ակումբում ֆոյեն ունի նշանակալից ծավալ։ Նրա թե՛ ընդերկայնական և թե՛ ընդլայնական ուղղություններով ձգվող երկու փոխուղղահայաց մասերն էլ ունեն նշանակալից լայնություն և իրենցից ներկայացնում են ինքնուրույն. որոշակի ծավալներ, թեև միաժամանակ շատ սերտ և օրգանապես կապված են միմյանց հետ։

Բացի այդ, այնտեղ հանդիպում ենք հետաքրքիր և գյուղական ակումբներում միանգամայն անհրաժեշտ էլեմենտի, ինչպիսին է հեղինակի կողմից նախատեսված դահլիճի նեղ ճակատային կողմի վրա արված լայն բացվածքները, որոնք հնարավորություն կտան անհրաժեշտության դեպքում ավելացնել դահլիճի մակերեսը, բացելով նրանց ծածկող վարագույրները և ֆոյեի այդ մասում դասավորելով լրացուցիչ նստարաններ։

Այս բանը ամենաէական նշանակությունն ունի գյուղական ակումբների համար և անշուշտ պետք է լայնորեն օգտագործվի հետագայում կառուցվող ակումբներում։

Ոսկեվազի ակումբում հաջողված պետք է համարել ակումբային սենյակների և դեպի երկրորդ հարկը տանող լայն ու ընդարձակ աստիճանավանդակի դասավորությունը, ինչպես նաև երկրորդ հարկում տեղավորված գրադարան-ընթերցարանի կոմպոզիցիան։

Սակայն, եթե ակումբի հատակագծային կոմպոզիցիան հիմնականում մշակված է հաջող, ապա նույնը չի կարելի ասել գլխավոր ճակատի մասին, որտեղ, ինչպես գլխավոր մուտքի ծանր, արխաիկ համաչափություններ ունեցող նախամուտքը, և նրա հետ սերտորեն կապված կամարաշարքերը (որոնք, ի դեպ շատ




Ակումբ Ոսկեվազում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Գ. Թամանյան

ընչին տարածություն են սահմանափակում) բնավ չեն նպաստում կոլտնտեսային ակումբի ճարտարապետական էության բացահայտմանը։

Չի կարելի չնշել նաև գլխավոր ճակատի ծանրաբեռնվածությունը մանր զարդաքանդակներով, որոնք անընդհատ շարքերով ծածկում են և՛ քիվերը, և՛ լուսամուտների պսակները և՛ հատկապես նախամուտքն ու նրա վերին մասում բացվող մեծ լուսամուտի ամբողջ կամարակապ տարածությունը։

Գլխավոր ճակատի մշակման այս թերությունները հիմնականում հաղթահարված են Բամբակաշատի ակումբում, որտեղ պահպանելով հատակագծային համարյա թե նույն լուծումը, հեղինակը արմատապես վերափոխել է գլխավոր ճակատի ամբողջ կոմպոզիցիան։ Հրաժարվելով ծանր նախամուտքից և ի հաշիվ գլխավոր ճակատի վրա արված բաց կամարաշարքի վերացման, նշանակալից չափով լայնացնելով և դրանով իսկ լավացնելով ֆոյեի ինտերյերի համաչափությունները, հեղինակը կարողացել է ստեղծել գյուղական ակումբի հաջողված մի օրինակ։ Այստեղ գլխավոր ճակատի մշակման հիմնական մոտիվը հանդիսանում է երկու հարկ բարձրություն ունեցող խուլ կամարաշարքը, որի բարձր ռելյեֆ ունեցող որմնասյուները հաջող կերպով կապվում են գլխավոր մուտքի կամարակապ խորշը ձևավորող ուժեղ որմնակամարների հետ։

Գլխավոր ճակատը իր հաջող ընտրված համաչափություններով, հանդիսավորությամբ և մշակման եղանակով ստեղծում է գյուղական ակումբի տպավորվող կերպարը։

Բացի այդ, Բամբակաշատի, Հոկտեմբերյանի և Ոսկեվազի ակումբները աչքի են ընկնում նաև ինտերյերի մշակման բարձր կուլտուրայով, մի բան, որը շատ գյուղական ակումբների ամենաթույլ տեղերից մեկն է հանդիսանում։ Շատ դեպքերում ինտերյերները մշակվում են առանց հեղինակների մասնակցության, պատահական մարդկանց կողմից և դրա հետևանքը լինում է այն, որ նրանք ձևավորվում են ներկարարական «արվեստի» այնպիսի «գլուխ գործոցներով», ինչպիսիք կարելի է տեսնել Փոքր Շահրիարի, Ջանֆիդայի ակումբներում, որոնք ձևավորված են խիստ անճաշակ և ամենատարբեր բովանդակության «պաննոներով»։

Ի հակադրություն այդպիսի ակումբների, Բամբակաշատի, Հոկտեմբերի և Ոսկեվազի ակումբների ինտերյերները, մշակված հեղինակի կողմից, հիանալի տպավորություն են թողնում։ Առանձին




Ակումբ Բամբակաշատում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Գ. Թամանյան

սենյակների գունավորման հաջող գամման, գիպսի օրնամենտիկայի հաճելի ձևերը և հատկապես նրանց զուսպ տեղաբաշխումը պատերի և առաստաղների հարթությունների վրա, նրանց ինտերյերները դասում են այդ կարգի լավագույն գործերի շարքում։



Ակումբ Ալափարսում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան

Իր տարողությամբ ակումբների այս խմբին է պատկանում Ալափարսի (Ախտայի շրջան) ակումբը (ճարտ. Ռ. Իսրաելյան), որն ունի խիստ անսիմետրիկ լուծում և այդ տեսակետից յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում։ Թեև ինչպես վերը նշված կառուցվածքներում, այնպես էլ այստեղ դահլիճը դասավորված է գլխավոր ճակատին զուգահեռ, սակայն ի տարբերություն մյուս կառուցվածքների, որոնց գլխավոր ճակատի վրա դասավորված են ֆոյեն և ակումբային սենյակները, այստեղ նրանց փոխարեն տե-

ղավորված է դահլիճը և վերջինս լուսավորող լուսամուտների ռիթմիկ շարքն էլ հանդիսանում է կառուցվածքի գլխավոր ճակատի ձևավորման հիմնական մոտիվը։ Այս կոմպոզիցիայի յուրահատուկ կողմը դա երկու առանձին մուտքերի գոյությունն է, որոնցից ձախակողմյանը տանում է դեպի վեստիբյուլը, իսկ աջակողմյան մուտքը՝ դեպի երկրորդ հարկում դասավորված ակումբային սենյակները և գրադարան-ընթերցարանը։

Ընտրված կոմպոզիցիայի առավելություններից մեկն այն է, որ առանց դժվարության հնարավոր է մեկուսացնել ակումբային մասը թատերական մասից, և այն օրերին, երբ գործում է դահլիճը, ակումբային սենյակները ազատ կերպով կարող են շարունակել իրենց գործունեությունը։

Ընդհանուր անսիմետրիկ կոմպոզիցիան իր որոշակի և հաջողված դրսևորումն է գտել նաև գլխավոր ճակատում։ Նույնպես հաջող են ընտրված աջակողմյան մուտքի աստիճանների թե կոմպոզիցիան, և թե առանձին մանրամասնությունները (թեև այն որոշ չափով հեռանում է հասարակական շենքի բնորոշ ձևերից)։ Մյուս կողմից ձախակողմյան գլխավոր մուտքը ևս ստացվել է ճնշված և այստեղ կուտակված էլեմենտները և հատկապես նեղ, ձգված խորշերը բնավ չեն նպաստում ակումբի գլխավոր մուտքի արտահայտչականության բարձրացմանը։

Դառնալով կառուցվածքի ընդհանուր կոմպոզիցիային, նշելով որ այն որոշ չափով նորություն է կոլտնտեսային ակումբների շարքում, չի կարելի չնշել նաև, որ սկզբունքային տեսակետից դժվար է համաձայնվել կոլտնտեսային ակումբի այսպիսի խիստ անսիմետրիկ կոմպոզիցիայի հետ։

Կոլտնտեսային ակումբը հանդիսանում է սովետական գյուղի առավել նշանակալից հասարակական կառուցվածքը և նրա հասարակական կենտրոնի դոմինանտը։ Մինչդեռ անսիմետրիկ լուծման ժամանակ կորչում է հիմնական կենտրոնական առանցքը և թվում է, թե ակումբի շենքից ոչ հեռու պետք է դասավորված լինի ևս մի այլ համանման շենք, որը նրա հետ միասին պետք է կազմի մի միասնական անսամբլ և ավարտի գյուղի հասարակական կենտրոնի ամբողջ կոմպոզիցիան։ Սակայն իրականում անսիմետրիկ լուծում ունեցող այդ շենքերը որպես կանոն մնում են միայնակ, և այս բանը, իհարկե, բնավ չի նպաստում գյուղական բնակավայրի հասարակական կենտրոնի լիարժեք ճարտարապետական անսամբլի կազմավորման գործին։




Ակումբ Կապուտանում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Գ. Թամանյան

400 տեղանոց ակումբների մեջ իր յուրահատուկ կոմպոզիցիայով աչքի է ընկնում Վերին Արտաշատի (Արտաշատի շրջան) ակումբը (ճարտ. Գ. Թամանյան)։ Դահլիճի կորագիծ կոմպոզիցիան իր դրսևորումն է գտել արտաքին ճակատում, որը ձևավորված զույգ կիսասյուներ ունեցող ուժեղ կամարաշարքով, անշուշտ, հաջող է և տպավորիչ։ Սակայն, միաժամանակ, պետք է նշել, որ այս ակումբն արդեն դուրս է գալիս գյուղական բնակավայրերի ակումբների տիպերի շարքից և մոտենում է քաղաքային կառուցվածքներին։



Ակումբ Կոշում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան

Իր ընդհանուր ձևերով և հատկապես ակումբային սենյակների բացակայությամբ յուրահատուկ տեղ է գրավում Կոշի (Աշտարակի շրջան) ակումբը (ճարտ. Ռ. Իսրաելյան), որը փաստորեն մի դահլիճ է. դերասանական սենյակների և կինո-խուցի հետ միասին։ Չնայած նրան, որ հատակագիծը ստացվել է կոմպակտ, իսկ արտաքին ծավալները՝ արտահայտիչ, սակայն այն բանը, որ այստեղ լրովին բացակայում են ակումբային սենյակները (թեև այդպես է եղել նախագծման առաջադրանքը), վերջին հաշվով էական թերություն է հանդիսանում։

300 և ավելի մարդ տեղավորող դահլիճներով կոլտնտեսային ակումբների մի այլ նշանակալից խումբը կազմում են այն կառուցվածքները, որտեղ դահլիճի ընդերկայնական առանցքը դասավորված է ակումբի գլխավոր ճակատին ուղղահայաց, իսկ ֆոյեն և ակումբային սենյակները տեղավորված են կառուցվածքի գլխավոր ճակատի երկայնքով։ Այս տիպի կառուցվածքների գերակշռող մեծամասնությունը այն ակումբներն են, որոնց կառուցումը սկըս-

վել էր դեռևս պատերազմից առաջ։ Հետպատերազմյան տարիներին, երբ հաճախ պահանջվում էր նրանց ծավալի զգալի մեծացումը, ձեռնարկվեցին այդ շենքերի վերակառուցման աշխատանքները։ Այս բանն անշուշտ կապված էր նշանակալից դժվարությունների հետ և պատահական չէ, որ հաջողված գործերի կողքին (Աղավնատուն՝ ճարտ. Ա. Սահինյան, Դվին՝ ճարտ. Տ. Մարության, Հայկավան՝ ճարտ. Լ. Բաբայան) հանդիպում են նաև այնպիսի անհաջող գործեր, ինչպիսիք են Անաստասավանի, Մրգաշատի ակումբները (ինժ. Ա. Դոլուխանյան)։



Ակումբ Մաստարայում. հատակագիծ
Հեղ. ճարտ. Վ. Արեշատյան

Աղավնատան (էջմիածնի շրջան) ակումբի կառուցումը (ճարտ. Ա. Սահինյան) թեև սկսվել էր դեռևս 1939 թվականին, սակայն հիմնական աշխատանքները կատարվեցին հետպատերազմյան տարիներին և պետք է ասել, որ հեղինակին հաջողվել է հաղթահարել այն դժվարությունները, որոնք կապված էին այդ արդեն սկսված կառուցվածքի վերակառուցման հետ։ Երեք հարյուր հանդիսատեսի համար նախատեսված դահլիճը դասավորված է ակումբի գլխավոր ճակատին ուղղահայաց, իսկ վեստիբյուլը, ֆոյեն և երկհարկ կոմպոզիցիա ունեցող ակումբային սենյակները՝ գլխավոր ճակատի երկայնքով։ Դահլիճի երկու ընդերկայնական կողմերով ձգվող կամարածածկ սյունասրահները, առաջին հարկում կարող են ծառայել որպես ամառային ֆոյեներ, իսկ երկրորդ հար-

*կում ունենալով հարթ ծածկ, հնարավորություն կտան ամռան ամիսներին այնտեղ տեղափոխել ակումբային մի շարք սենյակների աշխատանքները։*

*Հաջող են մշակված ինչպես ընդհանուր ծավալային կոմպոզիցիան, այնպես էլ առանձին մանրամասնությունները։*

*Այս կարգի կառուցվածքների թվին է պատկանում նաև Մաստարայի (Թալինի շրջան) ակումբը (հեղ. ճարտ. Վ. Արևշատյան), որն իրենից ներկայացնում է նախապատերազմյան տարիներին սկսած ակումբային շենքի արմատական վերակառուցումը։ Չնայած մի շարք սահմանափակիչ հանգամանքների, հեղինակին հիմնականում հաջողվել է ստանալ հետաքրքիր ինտերյեր, որտեղ դահլիճի երկու կողմում արված ընդերկայնական ուղղությամբ ձգվող պատշգամբները հենվում են հաջող ընտրված համաչափություններ ունեցող կամարաշարքերի վրա։ Հետաքրքիր է գլխավոր ճակատի հիմնական ճարտարապետական ակցենտը հանդիսացող մեծ խորշը, որն իր մասշտաբներով համապատասխանում է գյուղական բնակավայրի կենտրոնում կառուցված այդ շենքին։ Կառուցվածքը զերծ չէ նաև որոշ թերություններից, որոնցից պետք է նշել ինչպես դեպի երկրորդ հարկը տանող աստիճանների անհարմար դասավորությունը, այնպես էլ գլխավոր ճակատի կոմպոզիցիայի որոշ աններդաշնակությունը, որտեղ կառուցվածքի ընդհանուր մասշտաբից դուրս են ընկնում ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հարկի լուսամուտները, որոնք փոքր են, նեղ և յուրահատուկ չեն բնակավայրի ճարտարապետական դոմինանտը հանդիսացող այս կարգի հասարակական շենքին։*

*Հետպատերազմյան տարիներին է ավարտվել նաև Շահումյան գյուղի (Արտաշատի շրջան) ակումբը (ճարտ. Գ. Մուշեղյան), որն իր մասշտաբներով պատկանում է ռեսպուբլիկայի ամենախոշոր ակումբների թվին և պատահական չէ, որ այս ոչ մեծ գյուղական բնակավայրի ակումբում են տեղավորվել կոլտնտեսության և գյուղսովետի գրասենյակները, ինչպես և գյուղի մյուս բոլոր կազմակերպությունները սկսած մանկապարտեզից մինչև ...խնայդրամարկղը։ Իր ընդհանուր կոմպոզիցայով այս կառուցվածքը պատկանում է գլխավոր ճակատին ուղղահայց դահլիճ ունեցող ակումբների թվին և աչքի է ընկնում դահլիճի ընդերկայնական պատերի ուղղությամբ ձգվող աստիճանաձև պատշգամբների հետաքրքիր դասավորությամբ։ Այն հանգամանքը, որ կառուցվածքը ավարտվել է առանց հեղինակի վերահսկողության, պատճառ է հանդիսացել*

Մժոզա մրսղոչեղի վկյրսեիո վիռմռսաոյ



*մի շարք նշանակալից աղավաղումների, որոնցից հատկապես հարկավոր է նշել գլխավոր ճակատի զույգ որմնասյուները, որոնք փաստորեն դարձել են ոչինչ չկրող և միանգամայն կորցրել են իրենց իմաստը։*

*Հետպատերազմյան տարիներին ավարտված այս կարգի ակումբների շարքում հանդիպում են նաև այնպիսի կառուցվածքներ, որտեղ հեղինակները չեն կարողացել հաղթահարել վերակառուցման հետ կապված դժվարությունները և ստանալ ճարտարապետական արվեստի լիարժեք գործեր։ Այդ տեսակետից հատկապես հարկավոր է նշել Մրգաշատի (Արտաշատի շրջան) ակումբը (հեղ. ինժ. Ա. Դոլուխանյան), որտեղ անհաջող են լուծված և վեստիբյուլը և ֆոյեն, և գլխավոր ճակատի ընդհանուր կոմպոզիցիան։*

* * *

*Կոլտնտեսային ակումբներ կառուցվում են նաև շրջանային կենտրոններում, որտեղ նրանք արդեն ստանում են նշանակալից չափեր և պատկանում են այդ բնակավայրերի առավել էական կառուցվածքների թվին։ Այսպես են Էջմիածնի (ճարտ. Ս. Մանուկյան), Բայազետի (ճարտ. Հ. Իսաբեկյան) ակումբները, Աշտարակի (ճարտ. Յու. Յարալով) թատրոնը, որոնք իրենց ընդհանուր ծավալներով մեծապես տարբերվում են սովորական շենքերից։ Նշենք այդ կարգի կառուցվածքներից Էջմիածնի ակումբը, որն ունի քաղաքին յուրահատուկ մասշտաբ և հանդիսանում է տեղի խոշոր շենքերից մեկը։*

*Այստեղ դահլիճը տեղավորված է գլխավոր ճակատին ուղղահայաց, իսկ ակումբային սենյակները, որոնք ձգվում են ֆոյեի երկու կողմերում, նրա նկատմամբ առաջացնում են գլխավոր ճակատին ուղղահայաց երկու թևեր, կազմելով ընդարձակ բակ։ Վերջինիս երկու կողմերում արված սյունազարդ կամարաշարքերը լավ հեռանկար են ստեղծում դեպի ակումբի գլխավոր մուտքը։*

*Առաջին հարկի ֆոյեն պարտերի հետ կապող երկու միջանցքները, որոնք ձգվում են դահլիճի ամբողջ երկարությամբ, երկրորդ հարկում ունեն հարթ ծածկ և կարող են ծառայել և որպես ամառային ֆոյեներ։ Այդ բաց տերրասները առանձին մուտքերով կապվում են երկրորդ հարկում դասավորված ակումբային սենյակների հետ, որոնք, ի դեպ, բացի ֆոյեի հետ անմիջական կապ ունենալուց, ունեն նաև առանձին մուտքեր, որոնք ակումբային*



Ակումբ Էջմիածնում. առաջին հարկի հատակագիծ

Հեղ. ճարտ. Ա. Մանուկյան

սենյակները կապում են անմիջապես բակի հետ և այսպիսով հնարավորություն տալիս առանց կենտրոնական մուտքով անցնելու, գնալ ակումբային սենյակները կամ գրադարան-ընթերցարանը։

Ակումբային մասի ինքնուրույն մուտքերի առկայությունը այստեղ, մոտ 600 մարդ տեղավորվող դահլիճով ակումբում արդարացված է և ապահովում է ակումբային մասի անխափան գործունեությունը նաև այն օրերին, երբ դահլիճը զբաղեցվում է որևէ ցուցադրական միջոցառումով (կինո, թատրոն և այլն)։

Սակայն, դրա հետ միասին չի կարելի համաձայնվել ակումբային սենյակները երկու մասի բաժանելու հետ, որովհետև այն օրերին, երբ մեկուսացված է ֆոյեն, ակումբային սենյակների փոխադարձ կապը հնարավոր է իրականացնել միայն բակի միջոցով, մի բան, որն անշուշտ որոշ դժվարություններ կարող է առաջացնել հատկապես ձմռան ամիսներին։ Հաջողված պետք է համարել արտաքին ծավալային կոմպոզիցիան, թեև վիճելի է գլխավոր մուտքի երկու կողմերում ձգվող թևերի ավելի հարուստ մշակումը (սյունազարդ կամարաշարք անջատ կանգնած սյուներով) այն դեպքում, երբ գլխավոր մուտքը մշակված է միայն խուլ կամարաշարքով։

Չնայած այս մասնակի թերություններին Էջմիածնի ակումբը իր արժանավոր տեղն ունի կոլտնտեսային ակումբների շարքում և անշուշտ պատկանում է այդ կարգի կառուցվածքների հաջողված օրինակների թվին։

* * *

Ավարտելով կոլտնտեսային ակումբների ճարտարապետության տեսությունը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նաև մի քանի այնպիսի հարցերի վրա, որոնք անմիջականորեն կապված են ակումբաշինարարության հետ և էական նշանակություն ունեն հասարակական այդ տիպի շենքերի կառուցման գործում։

Առաջին հարցը, դա բնակավայրի տերիտորիայում ակումբի տեղադրման հարցն է, որը ամենաէական նշանակությունն ունի գյուղի հասարակական կենտրոնի կազմավորման գործում։ Ակումբը, որը հանդիսանում է կոլտնտեսային գյուղի առավել նշանակալից ծավալ ունեցող հասարակական կառուցվածքը, իբրև կանոն իր ճարտարապետական կոմպոզիցիայով և դասավորմամբ պետք է հանդիսանա գյուղական բնակավայրի հասարակական կենտրոնի դոմինանտը։

Սակայն, ինչպես ցույց է տալիս ռեալ շինարարական պրակտիկան այս հարցը իր արժանի ուշադրությունը չի գտնում, և շատ տեղերում մատնված է ինքնահոսի ու ակումբի տեղի ընտրությունը կատարվում է ոչ մասնագետների կողմից։ Այս բանը հատկապես վերաբերում է տիպային նախագծերով կառուցված շենքերին, որոնց գերակշռող մեծամասնությունը դրված է պատահական տեղերում և հետագայում նշանակալից դժվարություններ կառաջացնի գյուղերի վերահատակագծման ժամանակ։

Հանդիպում են ակումբների դասավորության երեք հիմնական տարբերակներ։

1. Ակումբը դասավորված է գյուղական բնակավայրի հրապարակի գլխավոր առանցքի վրա։

2. Ակումբը դասավորված է փողոցի վրա, հողամասի խորքում։

3. Ակումբը դասավորված է փողոցի կարմիր գծի վրա։

Գյուղական բնակավայրերի հասարակական կենտրոնի կազմավորման տեսակետից այս երեք տարբերակներից առավել նպատակահարմարը պետք է համարել առաջին տիպի դասավորությունը, երբ ակումբը տեղավորված է հրապարակի գլխավոր առանցքի վրա և կազմում է նրա կոմպոզիցիոն կենտրոնը։ Նման դասավորություն կարելի է նշել Դվինում, Վերին Արտաշատում, Ագարակում, Շահումյանում, Մաստարայում և այլ վայրերում, որտեղ ակումբները տեղավորվելով գյուղական հրապարակի գլխավոր առանցքի վրա, հիմնականում կանխորոշում են այդ բնակավայրերի հասարակական կենտրոնի զարգացման ուղղությունը և ապագա հասարակական կենտրոնի անսամբլի գլխավոր գծերը։ Առանձին հողամասի խորքում, փողոցի կարմիր գծից հետ դասավորված ակումբների շարքին են պատկանում Փոքր Շահրիարի (Հոկտեմբերյանի շրջան), Ալափարսի (Ախտային շրջան) և մի շարք այլ գյուղերի ակումբները, որոնք թեև գյուղական բնակավայրի հատակագծային կոմպոզիցիաներում ունեցած իրենց դիրքով զգալիորեն զիջում են առաջին տարբերակին, սակայն էական առավելություն ունեն երրորդ տարբերակի նկատմամբ, երբ ակումբը տեղավորված է բնակավայրի փողոցի կարմիր գծի վրա, բնակելի տների շարքում, որով և մեծ չափով կորցնում է իր արտահայտչականությունը և որոշիչ դերը՝ գյուղական բնակավայրերի հասարակական կենտրոնի կազմավորման գործում։ Դժբախտաբար հենց այս վերջին տարբերակն է, որ առավել շատ տարածված է ռեսպուբլիկայի գյուղերում։ Այսպես են դասավորված Մեղվիկայի (Ստեփանավանի

շրջան), Քուչակի (Ապարանի շրջան), Գեղադիրի (Արթիկի շրջան) Կողեսի (Ստեփանավանի շրջան) և բազմաթիվ այլ գյուղերի ակումբները։

Եթե կոլտնտեսային ակումբների նախագծերի որակի բարձրացման հարցերը միշտ էլ գրավել են համապատասխան ճարտարապետական հաստատությունների ուշադրությունը և այդ ուղղությամբ նշանակալից ջանքեր են գործադրվել, ապա նույն այդ նախագծերի իրականացման, բնակավայրին համապատասխանող նախագծի ընտրության և բնակավայրի հատակագծման կոմպոզիցիայում նրանց տեղադրման հարցերը փաստորեն մատնվել են ինքնահոսի։ Բացառությամբ այն ակումբների, որոնք կառուցվել են անհատական նախագծերով և հեղինակները անձամբ ծանոթացել են տեղի կոնկրետ պայմաններին, մնացած բոլոր դեպքերում ակումբի տեղի ընտրությունը փաստորեն կատարվել է տեղական աշխատողների կողմից և ըստ էության չեն պահպանվել տիպային նախագծերի օրինակելի դասավորությունների սխեմաները։ Հետևանքը ստացվել է այն, որ ռեսպուբլիկայի շատ գյուղական բնակավայրերում ակումբների դասավորությունը կատարված է պատահական և սխալ ձևով։ Ակումբաշինարարության բնագավառում այս նշանակալից թերությունների վերացումը ամենասերտ կերպով կապված է գյուղական բնակավայրերում կատարվող շինարարության նկատմամբ որոշակի վերահսկողության սահմանման հետ, որի պահանջը օրը-օրին ավելի ու ավելի անհետաձգելի է դառնում։

* * *

Գյուղական ակումբների շինարարության և նրանց տիպերի ընտրության հարցերի հետ ամենասերտ կերպով կապված են նրանց շրջաքնացման և շինարարության հերթականության հարցերը, որոնք մինչև այժմ նույնպես փաստորեն մատնված են անուշադրության։ Ինչպես գյուղական բնակավայրերի բնակելի տների, այնպես էլ հասարակական կառուցվածքների և հատկապես ակումբների ճարտարապետական կոմպոզիցիաները պետք է համապատասխանեն տեղի կլիմայական կոնկրետ պայմաններին և ամենից առաջ պիտի դրսևորվեն նրանց տարածական էլեմենտներում։ Հայտնի է, որ տերրասները, պատշգամբները, սյունասրահները, որոնց առկայությունը առաջնակարգ անհրաժեշտություն է ներկայացնում ռեսպուբլիկայի ցածրադիր շրջաններում, և ավելորդ են լեռնային

ցուրտ կլիմայական գոտիներում։ Մինչդեռ մեզ մոտ քիչ չեն դեպքերը, երբ Արարատյան դաշտավայրի գյուղերում կառուցված ակումբները (Օշական, Բամբակաշատ, Հոկտեմբեր և այլն) զուրկ են այդ էլեմենտներից, իսկ այնպիսի բնակավայրերում, ինչպիսիք են Ախուրյա (Արթիկի շրջան), Լեջան (Ստեփանավանի շրջան), Քուչակ (Ապարանի շրջան) գյուղերը կառուցված ակումբները ունեն ընդարձակ սյունասրահներ, որոնք այդտեղ միանգամայն ավելորդ են, եթե չասենք՝ վնասակար, որովհետև ձմռան ամիսներին նրանց մեծ մասը կլցվի ձյունի հյուսքերով։

* * *

Մյուս հարցը, որը ոչ պակաս նշանակություն ունի կոլտնտեսային ակումբների շինարարության գործում, դա նախագծերում արդեն նրանց կառուցման հերթականության մշակումն է, որը նույնպես մինչև այժմ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել։ Ակումբի կառուցման հերթականության մշակումը առաջնակարգ անհրաժեշտություն է ներկայացնում հենց այն պատճառով, որ որոշ կոլտնտեսություններ ամեն տարի ձեռնարկելով նշանակալից մասշտաբների հասնող անասնապահական և արտադրական շենքերի կառուցմանը, հնարավորություն չեն ունենում արագ կերպով ավարտելու նաև ակումբների զգալի ծավալ ունեցող շենքերի կառուցումը։

Ահա այս պայմաններից ելնելով, անհրաժեշտ է մշակել ակումբային շենքերի այնպիսի նախագծեր, որոնք հնարավորություն կտան ամբողջ շինարարությունը կատարելու մաս առ մաս, առնվազն երկու հերթով, երբ կառուցվածքի մի մասը ավարտվելուց և շահագործման հանձնելուց հետո, կոլտնտեսությունը կարող է աստիճանաբար կուտակել անհրաժեշտ շինանյութեր և միջոցներ, կառուցվածքի մյուս մասի շինարարությունը ձեռնարկելու համար։

Այս տեսակետից նպատակահարմար է սկզբում կառուցել դահլիճը և այն ավարտելուց հետո միայն ձեռնարկել ֆոյեի և ակումբային սենյակների շինարարությունը։

Սակայն պարզ է, որ շինարարության այս սիստեմին անցնելուց առաջ անհրաժեշտ է որոշ չափով վերամշակել գոյություն ունեցող նախագծերը և ապահովել տարբեր ժամանակ կառուցվող մասերի կոնստրուկտիվ միասնականությունը, միաժամանակ հասնել նրան, որ առաջին հերթին կառուցվող մասերը առանձին վերց-

ված կազմեն ճարտարապետական մի ամբողջություն և գյուղական բնակավայրի հասարակական շենքերի այս առավել նշանակալից կառուցվածքը մի քանի տարի շարունակ չթողնի կիսավարտ շենքի տպավորություն։

Մյուս կողմից, շինարարության հարաճուն ինդուստրալիզացիան անհետաձգելի անհրաժեշտություն է դարձնում նոր տիպային նախագծերի կազմումը։ Այս ուղղությամբ որպես առաջին փորձ պետք է նշել 250 տեղանոց տիպային ակումբի նախագծի կազմումը (հեղ. ճարտ. Լ. Ներսեսյան)։

* * *

Իրենց բնույթով ակումբների շենքերին ընդհուպ մոտենում են գրադարան-ընթերցարանների շենքերը, որոնք կառուցված են ռեսպուբլիկայի մի շարք գյուղերում։ Այս տիպի շենքերից նշենք ճարտ. Գ. Աղաբաբյանի նախագծով Կոտայքի շրջանի Հացավան գյուղում կառուցված գրադարան-ընթերցարանը, որտեղ հեղինակին հաջողվել է ստանալ ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալային մի կոմպակտ օրգանիզմ։ Կառուցվածքի կենտրոնական մասում տեղավորված է գրքերը ստանալու և հանձնելու սենյակը, որից դեպի աջ և ձախ դասավորված են ընդարձակ ընթերցասրահները. իսկ նրանց մեջ ընկած տարածությունը բռնում է գրապահոցը։

Հաջող է մշակված նաև գլխավոր ճակատը։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում տարբեր գույների քարերի համատեղ օգտագործումը։ Այն ժամանակ, երբ հիմնախարիսխը և աստիճանները արված են բազալտից, պատերը սև տուֆից, ամբողջ քիվը, գլխավոր ճակատի վարդյակները, լուսամուտների երեսակալները՝ վառ նարնջագույն տուֆից։

Բացի 20.000 գրքի համար նախատեսված գրադարանային շենքերից, նախագծված են ավելի փոքր, ընդամենը 10.000 գրքի համար գրադարան-ընթերցարանի շենքեր, որոնք փաստորեն իրենցից ներկայացնում են ոչ մեծ դահլիճ, միջնորմներով բաժանված մի քանի մասի, որտեղ դահլիճի կենտրոնական մասում տեղավորված է գրապահոցը, իսկ նրա երկու կողմերում՝ ընթերցասրահները։

Թեև գրադարան-ընթերցարանները իրենց բնույթով մոտենում են ակումբային շենքերին, սակայն միանգամայն աննպատակահարմար պիտի համարել, երբ որոշ դեպքերում (ինչպես, օրինակ՝

Հացավանում) գրադարան-ընթերցարանի շենքը փաստորեն օգտագործվում է որպես գյուղական ակումբ, և այդ այն պարզ պատճառով, որ այս փոքրիկ գյուղում բնավ կարիք չկար ունենալու միայն գրադարան-ընթերցարանի համար հատկացված այսպիսի մեծություն ունեցող կառուցվածք։ Այս կապակցությամբ առաջանում է գյուղական բնակավայրերում գրադարան-ընթերցարան կառուցելու նպատակահարմարության հարցը։



Գրադարան 20000 գրքի համար
Հեղ. ճարտ. Ա. Ասատրյան

Հայտնի է, որ Սովետական իշխանության հաստատման սկզբնական շրջանում, երբ գյուղական բնակչության հիմնական մասսայի մեջ նոր էր զարգանում հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու ձգտումը, գյուղական գրադարանները և խրճիթ-ընթերցարանները լիովին բավարարում էին նրանց առաջադրվող պահանջներին։ Սակայն կոլտնտեսային կարգերի հաղ-

թանակից հետո, երբ ակտիվ հասարակական կյանքին մասնակցելը դարձավ կոլտնտեսային գյուղացու առօրյա պահանջներից մեկը, խրճիթ-ընթերցարաններին փոխարինեցին գյուղական ակումբները, որտեղ և այժմ կենտրոնացվում է գյուղում տարվող ամբողջ քաղաքական և կուլտուր-մասսայական աշխատանքը։ Ահա այդ տեսակետից էլ մեր կարծիքով համեմատաբար փոքր գյուղերում, որտեղ պետք է կառուցվի այս կարգի ոչ մեծ, միայն մի շենք, ամենից ավելի նպատակահարմարն է կառուցել 100 մարդու համար նախատեսված դահլիճով մի ակումբ, որը և լիովին կարող է բավարարել նրան ներկայացվող պահանջները։

Սակայն միանգամայն այլ է դրությունը ռեսպուբլիկայի մեծ գյուղերում, որտեղ նույնիսկ նշանակալից մեծության ակումբները արդեն չեն բավարարում կոլտնտեսային գյուղի աճած պահանջներին։ Այս հատկապես վերաբերում է շրջանային կենտրոններին, որտեղ արդեն անհետաձգելի պահանջ է զգացվում անջատել կինոն և գրադարան-ընթերցարանը ակումբից և նրանց համար կառուցել առանձին շենքեր։ Այդ ճանապարհով էլ այժմ ընթանում է գյուղական բնակավայրի հասարակական հիմնարկների զարգացման ուղին և այն հանգամանքը, որ այժմ նույնիսկ համեմատաբար ոչ մեծ շրջանային կենտրոններում կառուցվում են և կինո-թատրոնների և գրադարան-ընթերցարանների շենքերը, վկայում է վերը նշված դրույթների ճշտությունը։

* * *

Կոլտնտեսային գյուղի հասարակական կառուցվածքների մի այլ խումբ են կազմում կոլտնտեսությունների վարչությունների և գյուղական սովետների շենքերը, որոնք հանդիսանում են գյուղական բնակավայրերի հասարակական կենտրոնները կազմավորող մյուս կառուցվածքները։

Շատ գյուղերում կարելի է հանդիպել ժողովրդական վարպետների կողմից կառուցված այդ տիպի շենքերին, որոնք իրենց ընդհանուր կոմպոզիցիայով շատ պարզ են, լակոնիկ, սակայն և զուրկ չեն հասարակական կառուցվածքներին յուրահատուկ գծերից։

Այսպես են, օրինակ՝ Մարալիկի (Աղինի շրջան), Ազատանի (Ախուրյանի շրջան) կոլվարչության գրասենյակների շենքերը, որոնք թեև մշակված են միանգամայն տարբեր սկզբունքներով, բայց վկայում են ժողովրդական վարպետների ճիշտ մոտեցման մասին։

Կոլվարչությունների և գյուղսովետների գրասենյակների կառուցումը հատկապես ծավալվեց հետպատերազմյան տարիներին, երբ նախագծվեցին այդ կառուցվածքների մի քանի տիպեր։ Այդ նախագծերից կարելի է նշել ճարտ. Ռ. Իսրաելյանի և ճարտ. Ա. Կանայանի կողմից նախագծված կոլվարչության գրասենյակների շենքերը, որոնք ունեն պարզ և հստակ ճարտարապետական կոմպոզիցիաներ։



Կոլտնտեսային վարչության գրասենյակի նախագիծ
Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան

Որոշ գյուղերում կոլվարչության և գյուղսովետների գրասենյակները միավորվում են միևնույն շենքում, որը հնարավորություն է տալիս ստանալ գյուղական բնակավայրերի արդեն համեմատաբար զգալի չափեր ունեցող մի շենք։ Լինում են դեպքեր, երբ այդ կառուցվածքը միավորվում է գյուղական խանութի հետ, ինչպես, օրինակ, Բամբակաշատում (ճարտ. Ս. Շահսուվարյան), որտեղ առաջին հարկում տեղավորված են գյուղական խանութնե-

րը, իսկ երկրորդ հարկում՝ կոլվարչության և գյուղսովետի գրասենյակները։

Իր ընդհանուր կոմպոզիցիայով և ճարտարապետական ձևերով այս կառուցվածքը իրենից ոչ հեռու գտնվող ակումբի հետ միասին կարող էր ստեղծել գյուղական բնակավայրի հասարակական կենտրոնի հետաքրքիր անսամբլ, եթե այդ երկու շենքերը ճիշտ կերպով դասավորված լինեին գյուղի հատակագծային սխեմայում։

Ռեսպուբլիկայի գյուղերում այժմ ավելի ու ավելի են շատանում կոլվարչությունների և գյուղսովետների գրասենյակների առանձին կառուցվածքները, և նրանք աստիճանաբար դուրս են գալիս ակումբներից, որտեղ զբաղեցնում էին ակումբային մի շարք սենյակներ և այդպիսով սահմանափակում ակումբների գործունեության շրջանակները։

*

Հասարակական կառուցվածքների մի ամբողջ խումբ են կազմում գյուղական դպրոցների, մանկապարտեզների և մանկամսուրների շենքերը։

Դպրոցական շենքերն այժմ որպես կանոն կառուցվում են տիպային նախագծերով և հաճախ հանդիսանում են գյուղական բնակավայրերի առավել նշանակալից չափեր ունեցող հասարակական շենքերը։ Տիպային նախագծերով կառուցելը իբրև օրենք պետք է նպաստի շենքերի թե ճարտարապետական և թե շինարարական որակի բարձրացմանը, մինչդեռ տեղական օրգանների անուշադրության և թույլ հսկողության հետևանքով շատ վայրերում դպրոցական շենքերի կառուցողական որակը գտնվում է ցածր մակարդակի վրա, և նրանք վեր են ածվել պարզ, սվաղած շենքերի, նրանց լուսամուտների միապաղաղ և տաղտկալի շարքերով, մի բան, որը կարծես սովորական է դարձել գյուղական բնակավայրերում կառուցվող դպրոցական շենքերի մեծամասնության համար։

Համեմատաբար լավ են ստացվում քարով երեսապատված շենքերը, ինչպես, օրինակ՝ Աշտարակի շրջանի Կոշ գյուղի դպրոցը, սակայն այսպիսի շենքերը դժբախտաբար քիչ են և դպրոցական շենքերի գերակշռող մեծամասնությունը զուրկ են ճարտարապետական արտահայտչականությունից։ Սակայն թերություններ կան նաև դպրոցական շենքերի դասավորության բնագավառում։ Նրանց տեղադրումը որոշ վայրերում բնավ չի բավարարում առաջադրված



պահանջներին։ Օրինակ, Կոշի դպրոցի շենքը գտնվում է Երևան — Լենինական մագիստրալ խճուղուց ոչ հեռու, կոլտնտեսության արտադրական հատվածի շրջանում, որն իհարկե չի կարելի թույլատրելի համարել։



Դպրոցի շենքը Ոսկեվազ գյուղում

Շատ գյուղական բնակավայրերում կան մանկապարտեզներ և մանկամսուրներ, որոնք հիմնականում տեղավորված են այդ նպատակներին հարմարեցված շենքերում։ Հետպատերազմյան տարիներին ձեռնարկվեցին գյուղական բնակավայրերում նրանց համար նաև հատուկ շենքեր կառուցելուն։

Նշենք Մրգաշատի մանկապարտեզի և մանկամսուրի շենքերը, որտեղ մի ճարտարապետական կոմպլեքսի մեջ տեղավորված են այդ երկու հաստատությունները։ Թեև կառուցվածքը լիովին բավարարում է առաջադրված պահանջներին, սակայն միանգամայն անհաջող է ընտրված նրա տեղը գյուղի հատակագծում՝ գյուղի գլխավոր փողոցի կարմիր գծի վրա, ակումբի դիմաց։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում դաշտային մանկամսուրները, որոնք կառուցվում են գյուղերից հեռու, բաց դաշտում, այնպես, որ մայրերը կարողանան թողնել այնտեղ իրենց երեխաներին և ստիպված չլինեն աշխատանքի ժամին վերադառնալ գյուղ նրանց կերակրելու համար։ Այդ տեսակետից հատկապես արժանի են հիշատակման Դվինի և Անաստասավանի գյուղերի դաշտային մանկամսուրների շենքերը։

Հասարակական այլ կառուցվածքներից անհրաժեշտ է նշել գյուղական հյուրանոցները, խանութները, հիվանդանոցները և սանիտարական կայանները։

Եթե շրջանային կենտրոնների հյուրանոցները որպես կանոն երկհարկ կապիտալ շենքեր են, ապա գյուղական բնակավայրերի փոքրիկ հյուրանոցները իրենցից ներկայացնում են ժողովրդական բնակելի տան յուրահատուկ վերամշակումը և հարմարեցումը, ճիշտ այնպես, ինչպես այդ տեսնում ենք Դվին գյուղի փոքրիկ հյուրանոցում։



Մանկամսուրի տիպային նախագիծ

Գյուղական բնակավայրի հասարակական կենտրոնի ակտիվ էլեմենտներից են հանդիսանում նաև գյուղական խանութները, որոնց լայն ցուցափեղկերը նոր մասշտաբ են մտցնում գյուղական բնակավայրերի ընդհանուր պատկերի մեջ։

Նշենք Գյուլագարակի, Լեջանի և այլ գյուղերի խանութները, որոնց ուշագրավ ճարտարապետական կառուցվածքները նոր երև-

վույթ են հայկական գյուղում և որոշակի կերպով վկայում են կոլտնտեսային գյուղացու նյութական հնարավորությունների անշեղ աճման մասին։

Գյուղական բնակավայրերում սովորաբար կառուցվում են նաև ոչ մեծ հիվանդանոցներ, ծննդատներ, սանիտարական կայաններ և բաղնիքներ։ Այդ կառուցվածքներից անհրաժեշտ է նշել Շահնազարի (Ստեփանավանի շրջան) գյուղական պոլիկլինիկան, Վերին Արտաշատի գյուղական բաղնիքը և այլն։



Հյուրանոց Դվինում

Ռեսպուբլիկական Նախագծային ինստիտուտի կողմից մշակված տիպային բաղնիքի նախագիծը անշուշտ լայն օգտագործում պետք է գտնի տեղերում։ Նախագիծը մշակված է կոմպակտ, էկոնոմիկ և լիովին բավարարում է առաջադրված պահանջներին։

Կոլտնտեսային գյուղի տարբեր տիպի շենքերի բարձորակ կառուցողական տեխնիկայի պրոպագանդայի հարցում անհրաժեշտ է նշել Ռեսպուբլիկական գյուղատնտեսական ցուցահանդեսում կառուցված, առաջին հերթին արտադրական շենքերի նշանակությունը, որոնք պետք է ակնհայտ օրինակներ ծառայեն տեղերում ևս համանման շենքեր կառուցելու համար։

Սովետական Հայաստանի գյուղական բնակավայրերի բարեկարգման, նրանց ճարտարապետական կազմավորման բնագավառում նշանակալից տեղ են գրավում այնպիսի հետաքրքիր կառուցվածքները, ինչպիսիք են աղբյուր-հուշարձանները։ Այդ հուշարձանները յուրահատուկ են հատկապես Սովետական Հայաստանի



Գյուղական հյուրանոցի նախագիծ
Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան

կոլտնտեսային գյուղի ճարտարապետությանը, և այդ տեսակետից էլ նրանց վրա հարկ ենք համարում կանգ առնել ավելի հանգամանորեն։

Դեռևս Հայրենական Մեծ պատերազմի ամենածանր տարիներին ծագեց մի գեղեցիկ միտք աղբյուրի ջրի միշտ կարկաչուն

հոսանքով հավերժացնել Հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակը, կապել այն միշտ կենդանի, միշտ զվարթ ջրի հոսանքի հետ, ցույց տալ, որ նրանց հիշատակը միշտ էլ անմահ է այնպես, ինչպես անընդհատ, գիշեր ու ցերեկ հոսող աղբյուրի սառնորակ ջուրը։

Հայ ժողովուրդը միշտ էլ հատուկ ակնածանքով է վերաբերվել դեպի ջուրը, արևավառ դաշտերին կյանք տվող այդ կենսունակ աղբյուրը։ Դեռևս հազարամյակներ առաջ Գեղամա լեռների հորդառատ աղբյուրների ակունքների մոտ կառուցվել էին մեմորիալ հետաքրքիր հուշարձաններ (վիշապներ)։ Ջրի հետ են կապված հայ ժողովրդական բանահյուսության բազմաթիվ լեգենդները և ասույթները, իսկ միջնադարյան, հայկական դասական ճարտարապետության մեջ առանձնակի տեղ են գրավում աղբյուրների գողտրիկ կառուցվածքները, ինչպիսիք կարելի է տեսնել Հախպատում, Սանահինում, Տաթևում և այլուր։ Այս բոլորը վկայում են այն դարավոր տրադիցիաների մասին, որոնք այսօր սովետական օրերին դրսևորվում են ճարտարապետական այս յուրահատուկ կառուցվածքներում։ Հետաքրքիր է, որ աղբյուր-հուշարձանի կամ աղբյուրի, որպես ճարտարապետական մի ուշագրավ ձևի օգտագործումը հանդիպում է սովետահայ ճարտարպետության մեջ դեռևս նախապատերազմյան տարիներին, որպես օրինակներ կարելի է թվել աղբյուր-հուշարձանի կառուցումը Պուշկինյան լեռնանցքում (1937 թ., հեղ.՝ ճարտարապետներ Մ. Մազմանյան և Գ. Մուրզա) և աղբյուրի օգտագործումը մոնումենտալ կառուցվածքի կոմպոզիցիայում, ինչպես Արզնիի լողարանի շենքի բակում (նախագիծը 1939 թ., հեղ. ճարտ. Հ. Մարգարյան)։

Այս բոլորից հետո պատահական չպետք է թվա, որ հատկապես ջրի հետ կապեց հայ ժողովուրդը Հայրենական պատերազմում ընկած իր հարազատ զավակների անմահ հիշատակը, և ցանկացավ ունենալ այդ հիշատակը հավերժացնող ճարտարապետական արվեստի լիարժեք գործեր։

Աղբյուր-հուշարձանների նախագծման նախաձեռնողը հանդիսացավ ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, որը մեծ հմտությամբ կարողացավ օգտագործել հայկական ազգային ճարտարապետության մեջ մշակված մեմորիալ հուշարձանների ձևերը, վերամշակել դրանք և փաստորեն ստեղծել միանգամայն նոր տիպի կառուցվածքներ, որոնք թե իրենց բովանդակությամբ և թե իրենց կոմպոզիցոն ձևերով լիովին այժմեական են, օրգանապես կապված սո-

վետահայ ճարտարապետության հետ, որոշակի կերպով դրսևորում են այն բարձր իդեաները, որոնք դրված են նրանց կոմպոզիցիայի հիմքում։

Աղբյուր-հուշարձաններում դրսևորվեցին հայ ժողովրդի հայրենասիրական ջերմ զգացմունքները և նրա անսահման սերն ու երախտագիտությունը պատերազմի դաշտում Հայրենիքի համար զոհված իր սիրելի որդիների նկատմամբ։ Աղբյուր-հուշարձանների կառուցումը հատկապես լայն թափ ստացավ 1944—46 թվականներին և այժմ ռեսպուբլիկայի բազմաթիվ գյուղերում կարելի է տեսնել այդ գողտրիկ հուշարձանների հետաքրքիր կոմպոզիցիաները, որոնք այնքա՜ն յուրահատուկ են, այնքա՜ն հետաքրքիր և այնքա՜ն տարբեր։

Ըստ իրենց կոմպոզիցիաների՝ աղբյուր-հուշարձանները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

**Առաջին** և ամենատարածված խումբը կազմում են առանձին կանգնած մեմորիալ հուշարձանների տիպի վերտիկալ կառուցվածքները։ Կառուցվածքի այդ տիպը ստանում է ամենաբազմապիսի լուծումներ, որոնք և հիմնականում ստեղծում են աղբյուր-հուշարձանների չկրկնվող բազմապիսությունը։

**Երկրորդ խումբը** — դրանք տաղավարանման կառուցվածքներն են, որոնք ստեղծում են արդեն որոշ ծածկույթ և որտեղ կարելի է նստել, հանգստանալ։

**Երրորդ խումբը** — դրանք ժայռերի կրծքին հպված կառուցվածքներն են, որոնք հիանալի կերպով կապվում են բնության հետ և ճարտարապետական հարուստ էլեմենտներով ձևավորում բնական աղբյուրների ակունքները։

Աղբյուր-հուշարձանները ռեսպուբլիկայի գյուղական վայրերում դարձան այնքան մասսայական, որ իրենց դրսևորումը գտան ժողովրդական ճարտարապետության մեջ և նշանակալից թվով աղբյուր-հուշարձաններ կառուցված են ոչ թե ճարտարապետական արվեստանոցներում մշակված նախագծերի համապատասխան, այլև տեղերում, հենց իրենց ժողովրդական վարպետների կողմից հորինված կոմպոզիցիաներով։

Ինչպես արդեն նշեցինք, առավել բազմաթիվ են վերտիկալ մեմորիալ հուշարձանների տիպի աղբյուրները, որոնցից ամենաառաջին կառուցվածքը հանդիսացավ Փարաքարի (էջմիածնի շրջան) աղբյուր-հուշարձանը (հեղ. ճարտ. Ռ. Իսրայելյան)։

Այստեղ մշակված կոմպոզիցիան, ձգված համաչափություն-

ներով և ճակտոնով ավարտվող մի պատ, շրջափակով և վերջինիս մուտքի մոտ արված ստիճաններով՝ դարձավ այդ կարգի կառուցվածքների առաջին օրինակը և այժմ շատ գյուղերում կարելի է հանդիպել համանման բազմաթիվ կառուցվածքների, որոնք սակայն լիովին ինքնուրույն գործեր են և մեծ հետաքրքրություն են ներկայացնում։



Աղբյուր-հուշարձան Կարբիում
Հեղ. ճարտ. Ռ. Իսրաելյան

Նույն հեղինակի այս կարգի բազմաթիվ գործերից անհրաժեշտ է նշել Կարբիի և Աշտարակի աղբյուր-հուշարձանները, որտեղ ճարտարապետական մտահղացումը գտել է իր նոր և հետաքրքիր մարմնացումը և որտեղ կենտրոնական խորշի երկու կողմերում մի դեպքում արված են խուլ պատեր, նրա առջև դրված ջրացայտերով (Աշտարակ), իսկ մյուս դեպքում՝ վերասլաց համաչափություններ ունեցող սյուների վրա հենվում են նուրբ զարդաքանդակներով ձևավորված կամարները (Կարբի)։ Աղբյուր-հուշարձանների դա-

